


Ծենուղա Գ  
հայրապետ



ազատագոռնումը



Ծենուդա Գ հայրապետ

nqni  
ազատագրումը



Երևան - 1999

Ծենուդա Գ հայրապետ

## Հոգու ազատագրումը

Գիրքը հրատարակվել է  
Գեղրգի Օհանյանի  
Ռուբեն Սահակյանի  
Աշոտ Մկրտչյանի  
Արթուր Վարդանյանի  
Սամվել Յանձբարձումյանի  
մեկենասությամբ

Անգերենից թարգմանեց՝ Լիլիթ Սարգսյանը  
Խմբագիր՝ Ա. Բաղդասարյան  
Սրբագրիչ՝ Ռ. Բաղդասարյան

© «Մանանա-հրատ» հրատարակչառուն

Ղպտի Ուղղափառ Եկեղեցին մեր Տեր Յիսուս Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի և անօտարելի մասն է: Յաստատված լինելով Ս. Մարկոս Ավետարանի քարոզությամբ (Եգիպտոսում և ի մասնավորի Ալեքսանդրիայում), Ղպտի Եկեղեցին իր հզոր նպաստն է բերել Եկեղեցու միության ու դավանական անադարտության գործում տալով այնպիսի որոշիչ դեմքեր, ինչպիսիք են Ս. Աթանազ, Ս. Կյուրեղյան, Ս. Անտոնը և այլք:

451 թվականի Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելով, Ղպտի Եկեղեցին Յայ և Ասորի Եկեղեցիների հետ հավատարիմ մնաց նախնայա հավատքին կազմելով Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքը, որոնք հաղորդության մեջ են միմյանց հետ:

Մահմեդականության կողմից նվաճվելուց հետո Եգիպտոսի ղպտի քրիստոնյաների համար սկսվեց հարատև ու մշտական հալածանքների մի շրջան, որոնք, այսպես թե այնպես, շարունակվում են մինչև այսօր: Սակայն Ղպտի Եկեղեցին դիմացավ և շարունակում է դիմանալ անլուր գրկանքներին՝ ի սեր Քրիստոսի, և շարունակում է իր վկայությունը բերել Մերձավոր Արևելի տարածաշրջանում, լինելով ամենակենսունակ և ամենատեսական Եկեղեցիներից մեկը:

Յայ և Ղպտի Եկեղեցիների դավանական միությունը և հաղորդութենական կապը գրեթե տասնվեց դարերի պատմություն ունի: Յայ և Ղպտի Եկեղեցիները կիսել են միևնույն դարը ճակատագիրը, սակայն մնացել են հավատարիմ Քրիստոսին և իրենց նահատակությամբ այսօր ներկայանում են աշխարհին որպես հաղթող ու հաղական Եկեղեցիները:

Ծենուդա Գ Պատրիարքը 1971 թվականից ի վեր Ղպտի Ուղղափառ Եկեղեցու գահակալն է՝ մի ճանաչված դեմք ողջ քրիստոնեական աշխարհում: Ծենուդա Գ-ն իր գրեթե երեսնամյա գահակալության ընթացքում ներկայացել է որպես սրբակյաց ճգնավոր, աննկուն քարոզիչ և Ավետարանական ճշմարտությունների աներեր պաշտպան: Ծենուդա Գ-ը հեղինակ է բազմաթիվ հատորների, որտեղ պարզ ու հասկանալի ոճով Ղպտի Եկեղեցու գահակալը ջամբարում է Ավետարանի անխարդախ կաթը՝ դարերից եկող զարմանալի վճիռությամբ ու ջինջությամբ:

Ներկայացվող հատորյակը մեկն է այդ բազմաթիվ գործերից, որոնք լույս են տեսել աշխարհի զանազան լեզուներով: Սույն գործը Ծենուդա Գ Պատրիարքի առաջին երկն է, որ հրատարակվում է հայերեն թարգմանությամբ: Դուսով ենք, որ սույն հրատարակությունը առավել կիսորացնի և կամրապնդի Յայ և Ղպտի Եկեղեցիների հաղորդությունն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տեր մեր:

Միքայել Ժ. Վլոյ. Աքապահյան  
Մայր Աթոռ սր. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ

Մեզ համար մեծ ուրախություն է սիրելի հայ ուղղադավան  
ժողովրդին ներկայացնել Նորին Սրբություն Շենուդա Գ  
Պատրիարքի այս գիրը, որը նա գրել է 1954 թ., եղիպտական  
անապատում վաճական կյանքի անցնելուց առաջ, երբ 29 տա-  
րեկան էր: Գիրը, որն առաջին անգամ տպագրվել է 1957 թ.,  
Եղիպտոսում մեծ տարածում է գտել Երիտասարդության,  
Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների և ողջ համայնքի մեջ: Այն  
կազմված է կիրակնօրյա դպրոցների ամսագրի հոդվածներից,  
որոնք տպագրվել են 1954թ.: Այստեղ միավորված են հեղինակի  
հոգևոր մտորումները և իր՝ որպես Աստծո խոսքի ծառայի,  
կյանքի հոգևոր փորձառությունը:

«Մանան» մանկապատանեկան կրթամշակութային կենտ-  
րոնի կողմից այս գրքի թարգմանությունը նշան է մեր Երկու  
Եկեղեցիների դարերից Եկող սիրո և միասնության: Մեր Երկու  
Եկեղեցիներն էլ պահպանել են նոյն ճշմարիտ ուղղափառ  
ավանդությունը՝ Եփեսոսի տիեզերական ժողովի ժամանակից ի  
վեր (431թ.):

Մենք ցանկանում ենք ամրապնդել մեր Երկու Եկեղեցիների  
պատմական հարաբերությունները և ստեղծել նրանց միջև հա-  
մագրծակցության ասպարեզներ՝ համաձայն Նորին Սրբություն  
Շենուդա Գ Պատրիարքի և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ.  
Գարեգին Ա Ամենայն Հայոց Կարողիկոսի 1998թ. հունվարի 18-  
ին ստորագրված համատեղ հայտարարության:

Դամիեթի միտրոպոլիտ Բիշոյ  
Ղաւի Օքողոքս Եկեղեցու  
Սուրբ սիմոնի գլխավոր քարտուղար



Սա հոդվածների ժողովածու է, որը գրվել է  
կիրակնօրյա դպրոցների ամսագրի համար՝ սկսած

1951 թվականից: Մինչև վանական կյանքս սկսելը Ես  
այդ ամսագրի խմբագիրն եմ:

Հոդվածները գրքի տեսքով հրատարակեցին  
1957թ.: Սա իմ առաջին տպագրված գիրը էր, որը

մեծ հավանություն գտավ և շատ անգամ  
վերահրատարակվեց:

Շենուդա Գ Պատրիարք



[1]

## Ազատագրում մեղքի ճանաչողությունից

Հոգին, քանի դեռ աշխարհում է, ջանում է շատ բաներից ազատագրվել, որոնց մասին կպատմի քեզ այս գիրքը:

Սակայն մի բան կա աշխարհում, որից իմ կարծիքով հոգին չի կարող ազատագրվել, որքան էլ ջանա: Այս բանից ազատվելը երջանկություն է, և դրան կարելի է հասնել միայն հավիտենության մեջ:

Դա ազատագրումն է մեղքի ճանաչողությունից:

Երբ Աստված արարեց մարդուն, արարեց նրան պարզ ու մաքուր: Մարդը ոչինչ չգիտեր մեղքի մասին: Դա մինչև չարի և բարու գիտության ծառից ուտելն էր: Նա մանկան պես անմեղ էր, գուցե և ավելի: Երբ Եվան փորձվեց օձի կողմից, նա չգիտեր, թե ինչ է մեղքը: Օձը ստեց ու սասց նրան. «**Զեք մահանա», «Դուք կինեք աստվածների նման» (Ծնն. 3.4,5): Եվ քանի որ Եվան ոչինչ չգիտեր ստի մասին, հավատաց օձին: Նա չկասկածեց այդ խոսքերի ճշմարտացիությանը, որովհետև չգիտեր կասկածել: Ադամն ու Եվան բարուց բացի այլ բան չգիտեին: Նրանք չգիտեին չարը: Իսկ երբ կերպան ծառից, սկսեցին ճանաչել այն: Նոր ճանաչողություն՝ մեղքի ճանաչողությունը, մտավ մարդու կյանքի մեջ: Այս և այլ գիտելիքներ խաթարեցին մարդկության անմեղությունը: Սա փաստում է Սողոմոն իմաստունի խոսքերի ճշմարտացիությունը. «**Իր գիտությունն ավելացնողն իր ցավն է ավելացնում» (Ժող. 1.18): Գուցե առաջին բանը, որ Ադամն իմացավ, այն էր, որ ինքը տղամարդ է, իսկ Եվան՝ կին... Սեռի ճանաչողությունն սկսեց ներթափանցել նրա միտքը, նրա զգայարանները: Նա հասկացավ, որ սեռն ինչ-որ ամոթալի բան է, և սկսեց ծածկվել: Ապա նա ճանաչեց վախը և փորձեց թաքնվել ծառերի ետևում: Ժամանակն անցնում էր, և մարդը շատ մեղքեր էր ճանաչում: Մեղքի ճանաչողությունն արմատավորվեց նրա մաքում և ժամանակ առ ժամանակ մղեց իր****



ներսում հոգեոր պատերազմների: Անդամ եթե ինքը չէր ընկնում այդ մեղքերի մեջ, դատապարտում էր մյուսներին դրանց համար: Այժմ նա ազրում է բարու և չարի, թույլատրելի և անթույլատրելի բաների երկվության մեջ: Կուգեի իմանալ, թե Ե՞րբ պիտի նա ազատվի այս երկվությունից, Ե՞րբ պիտի վերականգնի իր մաքի մաքրությունը: Ե՞րբ պիտի մարդն ազատվի «չարի հիշողությունից, որը հանգեցնում է մահվան»:

Ես չեմ կարծում, թե դա կարող է տեղի ունենալ երկրի վրա, այլ միայն՝ հավիտենության մեջ: Ս. Պողոս առաքյալը, ով արդեն ավարտել էր իր ընթացքը, և ում մեկնումի ժամանակը հասել էր, ասում է իր աշակերտ Ս. Տիմոթեոսին. «Եվ հիմա ինձ է սպասում արդարության պսակը» (Բ. Տիմ. 4:8):

Ի վերջո, մարդը պիտի պսակվի արդարությամբ, այն արդարությամբ, որը չի մեղանչում և չի ճանաչում մեղքը: Նա պիտի պսակվի սրբությամբ, առանց որի ոչ ոք չի կարող տեսնել Տիրոջը: Բայց Ե՞րբ այս տեղի կունենա: Առաքյալը տալիս է պատասխանը՝ ասելով. «Արդարության պսակը, որը որպես հատուցում, ինձ պիտի տա Տերը՝ արդար դատավորը, այն օրը. և ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր նրանց, ովքեր սիրեցին նրա հայտնվելը» (Բ. Տիմ. 4:8):

Արդարության այս պսակը այն երազանքն է, որին հոգին փափառում է հասնել: Քանի դեռ աշխարհում ենք, մենք ամեն օր մեղք ենք գործում և ամեն օր կարիք ունենք ապաշխարության: Առանց մեղքի մեկը չկա, անդամ եթե իր երկրային կյանքը միայն մեկ օր լինի:

Ե՞րբ պիտի մենք իսկապես ազատագրվենք մեղքի ճանաչողությունից: Ե՞րբ պիտի ոչինչ չիմանանք, այլ միայն Աստծուն և իրեն շրջապատող լույսը, լույս, որի մեջ բնավ խավար չկա: Դա տեղի կունենա, երբ մենք թքենք չարի և բարու գիտության պտուղը, որ մեր նախահայրերը կերան այն ժամանակ:

Միայն այդ գեպում մենք կվերականգնենք մեր նախնական գիրքը:


Հավիտենության մեջ մենք, անշուշտ, շատ ավելի լավ վիճակում կլինենք, քան Աղամը գրախտում: Աղամն ու Եղան արդարության վիճակում էին, սակայն ենթակա էին անկման, իսկ հավիտենության մեջ մենք կունենանք արդարության պսակը, որի արդարությունը անկման ենթակա չէ: Մենք ավելի լավ վիճակում կլինենք, քան առաջին մարդը՝ նախքան անկումը, մենք կնմանվենք նրան անմեղությամբ, մաքրությամբ, պարզությամբ և

մեղքը չճանաչելով:

Մենք կմոռանանք մեղքն իր բոլոր տարատեսակներով:

Մեր մտքում ոչինչ չի լինի, բացի եռանդուն հոգեոր կյանքից, Աստծու սիրուց, միայն երկնային՝ աչքով չտեսած, ականջով չըլլած և մարդու սրտի մեջ չընկած բաները խորհելուց:

Միայն այդ ժամանակ կարելի է ասել, որ հոգին լիովին ազատագրված է:





Խոստովանում եմ Քո առջև, ով Տեր, ամոթով խոստովանում եմ, որ մարդկանց հետ ավելի հաճախ խոսել եմ առաքինության մասին, քան թե Քո մասին, չնայած որ Դու ես ամենը ամենի մեջ: Սակայն Քո մասին խոսել կարողանալու համար պետք է, որ ճանաչեմ Քեզ: Բայց ինչպես կարող եմ հասնել այս ճանաչողությանը, եթե ես որպես մարդ սահմանափակ եմ, իսկ Դու՝ անսահմանն Աստված, բացի այդ, ինչպես կարող եմ Քեզ ճանաչել, եթե Դու անըմբունելի ու աներեակայելի ես. Դու ես լույսը, որին հնարավոր չէ մերձենալ, և ոչ մի մարդ է ակ չի կարող Քեզ տեսնել ու կենդանի մնալ:

Փորձել եմ Քո մասին տեղեկանալ Քո սուրբ մարդկանցից, ովքեր Քեզ ճանաչել են: Քո մասին հարցրեցի Ս. Պողոս առաքյալն, որը Հափշտակեց մինչև երրորդ երկինք, «լսեց անպատում խոսքեր, որ մարդու արտօնված չէ խոսել» (Բ Կոր. 12.4): Ս. Հովհաննեսը՝ սիրելի աշակերտը, երկնքում բացված մի գուռ տեսավ և տեսավ Աստծու գահը, բայց այս հայտնությունը նա նկարագրում է խորհրդանշական կերպով:

Երբեմն ինքս ինձ հարց եմ տալիս. «Արդյո՞ք Քեզ ճանաչելու փորձերս հպարտության մի տեսակ չեն, այն գեաքում, երբ ինքս ինձ ճեմ ճանաչում»: Եթե իմ իսկ անձը չեմ ճանաչում, ինչպես կարող եմ ճանաչել անձիս Արարչին:

Եթե չգիտեմ Քո երկինքներն ու Քո հրեշտակներին, ինչպես կարող եմ իմանալ Քեզ:

Միայն այն գիտեմ, ինչ հայտնել ես մեզ, իսկ մեզ հայտնել ես միայն այն, ինչ մենք կարող ենք տանել: Եթե մեզ ավելին հայտնեիր, մեր մարդկային բնությունը սաստիկ կզարմանար, իսկ մեր միտքն անկարող կլիներ հասկանալ, խոսքերը չէին բավարարի արտահայտելու հայտնվածը:

Երբ ջանում եմ ճանաչել Քեզ, փորձում եմ գրքերից

վեր ելնել, որքան էլ որ խորը գիտելիք պարունակեն, և նույնիսկ՝ մտքի իմացությունից վեր: Սա թույլ է տալիս ազատագրված հոգուն ավելի լայն՝ մտքի սահմաններից դուրս, տեսածիր ունենալ: Սակայն մարդկային հոգին էլ սահմանափակ է, բացի այդ, այն բանտված է մարդկային մարմնի նյութեղենության մեջ:

Ով Տեր, ինչպես պետք է ճանաչեմ Քեզ հետո, Հավիտենական արքայության մեջ: «Ինչպես որ է», -ասում է Ս. Պողոսը: Ես շփոթվում եմ այս խոսքերից: Քո արքայության մեջ, մեր փառահեղ Հարությամբ ու մեր հոգեւոր լուսեղեն մարմիններով հանդերձ, մենք անշուշտ կմնանք, ինչպես որ ենք՝ սահմանափակ մարդ արարածներ: Այստեղ Քո Աստվածության մասին Դու ավելին կհայտնես մեզ, ուստի բերկրանք ու երջանկություն կունենանք:

Հետո մեզ կհայտնես ավելին ու ավելին, աստիճանաբար, այնքան, որ կարողանանք տանել: Գուցե, եթե շատ ավելին հայտնես, մեր հոգիները խորը սիրո մեջ աղաղակեն՝ բավական է: Դու մեր սրտերն ու հոգիները կպատրաստես, այնպես, որ կարողանան ավելին ընդունել Քեզանից: Սակայն Դու ընդմիշտ կմնաս, ով Տեր, ինչպես որ ես՝ անսահման, իսկ մենք կմնանք, ինչպես որ ենք՝ սահմանափակ, և Քո մասին քիչն իմացող:

Հավերժության մեջ մենք պիտի վայելենք Քո գիտությունը, պիտի ճաշակենք ու տեսնենք, որ քաղցր ես Դու: Մենք շարունակ ավելին պիտի իմանանք Քո մասին, բայց երբեք չենք կարող ըմբռնել ամբողջը:

Ուրեմն, ե՞րբ պիտի ճանաչենք Քեզ՝ ճշմարիտ գիտությամբ: Տերն մեր Հիսուս Քրիստոս ասում է. «Հավիտենական կյանքն այս է, որ ճանաչեն Քեզ միակ ճշմարիտ Աստված...» (Հովհ. 17.3): Ուրեմն, Քեզ ճանաչելը ոչ թե տարիների ու օրերի հարց է, այլ՝ ամբողջ հավիտենական կյանքի, որը վերջ չունի:

Եթե սա վերաբերում է Հավիտենականությանը, ապա ի՞նչ կարող ենք ասել մեր անդիտության մասին, քանի դեռ աշխարհում ենք: Արդյո՞ք ունենք որևէ գիտելիք: Ուստի, աղաջում եմ Քեզ, Մեծ Արարիչ, ներիր ինձ, որ մարդկանց հետ ավելի շատ առաքինության մասին եմ խոսում, քան թե Քո մասին: Սա երկու պատճառ ունի:

Առաջինն այն է, որ ես գիտություն չունեմ. միակ բանը, որ գիտեմ, այն է, որ աղոթում եմ Քեզ, որպեսզի Քո մասին ինչ-որ բան հայտնես ինձ: Ինչ-որ հայտնում ես ինձ, բացում եմ մարդկանց առջև, որպեսզի կարողանան ճաշակել երկնքի ար-



Քայությունը, քանի դեռ աշխարհում են:

Երկրորդ պատճառն այն է, որ ուզում եմ, իրենց սրտերը պատրաստեն՝ Քեզ ճանաչելու համար: Ուզում եմ, որ գիշեր ու զօր խունկ մատուցեն իրենց սրտի խորանում՝ պատրաստ լինելու Սուրբ Ընծայաբերմանը: Մենք ինքներս չենք կարող Քեզ ճանաչել, բայց ցանկանում ենք, Քո շնորհով, մեզ պատրաստե՞՝ Քեզ ճանաչելուն: Այս ճանաչողությունը Քեզանից է գալիս՝ Քո հայտնելով, ոչ թե մեր կողմից արված որևէ մտավոր կամ հոգեւոր ճիգով: Մեր մտքի ու հոգու ամեն ջանքը, թեկուզ և կարևոր է, սակայն պարզապես աղոթքի կամ աղաչանքի մի տեսակ է: Այսպիսի ջանքը միայն մի միջոց է, որով ամպը կցնի տունը, կրակը կվառվի թփի մեջ, և այսպիսով, Աստված կհայտնի իրեն, ու յուրաքանչյուր սիրտ երկյուղածությամբ կերկրագի և կերպի գոհությամբ, ասելով՝ Դուռ տվեցիր ինձ Քեզ իմանալու շնորհը:

Այս աստվածային գիտությունն է այն թանկարժեք մարգարիտը, որը գնելու համար վաճառականը վաճառեց իր ամբողջ ունեցվածքը: Իրերը, որ վաճառականը վաճառեց, մարդկային գիտության տարբեր ճյուղերն են, որոնք զբաղեցնում են մեր ամբողջ ժամանակը և Հնարավորություն չեն տալիս ճանաչելու Քեզ: Դրանք խանգարում են մեզ՝ Մարիամի հետ նստելու ոտքերիդ տակ և ունենալու կենաց ջուրը, որը լցնում ես մեր սրտերի մեջ, և որից ով որ խմի, երբեք չի ծարավի:

Ճանկանում եմ, որ այս գիտությունը փնտրենք մեր ամբողջ սրտով: Այդ ժամանակ մենք այն կդանենք մեր սրտերի խորքերում, որտեղ Դու ես բնակվում, և որտեղ Քո սուրբ տաճարն է, որը սրբագործել ես Սուրբ Մյուռունով:



## Ազատագրում կապանքներից

Երեկոյան ժամը յոթն էր, և ամեն ինչ թաղված էր լուսության մեջ, երբ ես ու իմ վանական հայրը ոտք դրեցինք անապատի ավագներին: Մենք քայլում էինք խորհրդածելով մարդկային լեզվով անպատմելի բաների մասին:

### Հետքեր ու կապանքներ

«Հոգու ազատագրում մարմնից» ասելով ես նկատի չունեմ այն, ինչի մասին Սիմեոն ծերունին է ասում. «Այժմ, ով Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի...» (Ղուկ. 2.22): Խոսքս մարմնի մեջ գտնվող հոգու ազատագրման մասին է, ազատագրում ամեն տեսակ շղթաներից ու կապանքներից: Միայն այդ ժամանակ մարդ կարող է կատարյալ խաղաղություն ունենալ և ապրել ազատ՝ Աստծու զավակին վայել կյանքով:

Գիտե՞ս, թանկագին եղբայր, որ երեխայի հոգին մկրտվելուց հետո իր նախաստեղծ վիճակի ազատությունն է ձեռք բերում: Իսկ գիտե՞ս, թե հետագայում ինչ է պատահում նրան: Աշխարհը, սովորույթները և շրջապատը նրանում շատ հետքեր են թողնում: Շատ կապանքներ կապկատմ են այն և խոչընդոտում են նրա ընթացքն առ Աստված: Աստծու որդիները ձգտում են այս ամենից ազատվել, իրենց հոգիներն ազատագրել աշխարհի, շրջապատի, մարդկային գգայարանների ու իմաստության կապանքներից:

Վանահայրս ասաց. «Գուցե ոմանք կարծում են, թե Տեր Հիսուս Քրիստոսի խոսքը. «...եթե չդառնաք ու չինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ.18.3), նշանակում է եթե չդառնաք մանուկների պես փոքր: Ոչ, նա ուզեց ասել՝ եթե չդառնաք հոգով այնքան մեծ, որքան մանուկներն են, երկնքի արքայությունը չեք մտնի»:



## Զգայարանների կապանքները

Մեծն Ա. Սակարիսը մի անգամ հանդիպեց մի վանականի, որն ինքն իրեն առաքենի ու արդարակյաց էր համարում և կարծում էր, թե հաղթահարել է չնության, արծաթսիրության ու բարկության մեղքերը: Ա. Սակարիսը հարցրեց նրան, թե ի՞նչ կզգար, եթե կին տեսներ: Վանականը պատասխանեց, որ ինքը կնկատեր նրա կին լինելը, բայց խույս կտար՝ կրքերից զերծ մնալու համար: Ա. Սակարիսը նրան հարցրեց նաև, թե ի՞նչ կզգար, եթե անապատում ընկած դրամ տեսներ: Վանականն ասաց, որ կկարողանար դրամը քարից զանազանել, բայց իրեն կզսպեր փողը սիրելուց: Երրորդ անգամ սուրբը հարց տվեց, թե ի՞նչ կզգար, եթե մեկը իրեն վիրավորեր: Վանականը պատասխանեց, թե կզգար, որ իրեն վիրավորում են, բայց չէր թողնի, որ բարկությունը բռւյն դնի իր սրտում: Այսժամ Ա. Սակարիսն ասաց վանականին, որ նա գեռ դյուրաբեկ է և ավելի շատ պայքարելու կարիք ունի, և սկսեց ուսուցանել նրան:

Զգայարանների կապանքները, թանկագին ընթերցող, մարդուն սահմում են տարբերություն դնել տղամարդու և կնոջ, ծեր կնոջ և երիտասարդ աղջկա, գեղեցիկ աղջկա և տպեղի միջև:

Այս կապանքները նաև ստիպում են տարբերել փողը քարից: Իսկ գովասանքն ու վիրավորա՞նքը:

Մի անգամ Ա. Սակարիսից մի վանական խորհուրդ հարցրեց: Ա. Սակարիսը նրան կարգադրեց գնալ գերեզմանատուն և գովել մեռելներին: Նա այդպես էլ արեց, և բնականաբար մեռելներից ոչ ոք նրան ոչինչ չպատասխանեց:

Սուրբն այնուշետև կարգադրեց նրան գնալ ու վիրավորել նրանց: Սակայն, երբ դա էլ արեց, դարձյալ ոչ մի պատասխան չստացավ: Այդ ժամանակ Ա. Սակարիսն ասաց վանականին. «Դու էլ պետք է մեռելների պես լինես, քանի որ մեռել ես աշխարհի համար: Դու չպետք է ազգիս որևէ խոսքից, լինի դա գովասանք, թե՝ վիրավորանք»:

Մի անգամ մեծահարուստ մեկը փող էր բերել վանք, որ բաժանի վանականներին: Վանահայրը ցանկացավ այդ մարդուն գործնական դաս տալ և, փողը մի կողմ դնելով, խփեց զանգը: Երբ վանականները հավաքվեցին, վանահայրն ասաց, որ կարող են իրենց պետք եղած չափով փող վերցնել՝ որպես այդ հարուստի հանդեպ սիրո դրսելորում: Բայց վանականները նայեցին

ոսկուն, կարծես այն քարերի կույտ լիներ, և ոչինչ չվերցրեցին, հակառակ այն բանի, որ նրանց աղաչեցին դա անել: Նրանց վարքն այնպիսի մեծ տպավորություն գործեց այդ մարդու վրա, որ նա խնդրեց դառնալ վանական:

Աշխարհն ու մարմնը, թանկագին եղբայր, մեծ ազդեցություն ունեն մեր գգայարանների վրա, որոնք մեր աչքին նյութական բաներն ավելի գեղեցիկ ու գրավիչ են գարձնում, քան դրանք կան իրականում: Սակայն, երբ հոգին ազատագրվի իր ճամփան խոչընդուռող կապանքներից, համապատասխանաբար զգայարաններն էլ կազմակրվեն աշխարհային զգացմունքներից ու իրերի նոր, հոգեոր ընկալում ձեռք կրերեն:

Սա կարող ես գգալ, երբ երկար ժամանակ հեռու ես եղել ընտանիքից, և վերագրածիդիդ գրկում ես նրանց մեծ սիրով ու կարոտով: Նրանց սիրով շրջապատված լինելով, արդյո՞ք կզգաս, թե քեզ գրկողը, լինի դա հայրդ կամ մայրդ, քույրդ կամ եղբայրդ, տղամարդ է, թե՝ կին: Նմանապես, եթե մի մարդ ուրիշին կրակից կամ խեղդվելուց վրկելիս գգար, թե ում վրկում է տղամարդ է կամ կին, աղջիկ կամ տղա, նա մահվան վտանգին կենթարկեր իրեն էլ, նրան էլ:

Կարծում եմ, սա ցույց է տալիս, որ հոգին առավել է, քան զգայարանները: Երբեմն նույնիսկ պատահում է, որ զգայարանները մասսամբ կամ լիովին խլացվում են, որովհետև հոգին զբաղված է լինում ավելի մեծ բաներով:

Ուրեմն, քո հոգեոր կյանքում, որքանով որ կարող ես, պետք է ազատիս զգայարաններիդ կապանքներից: Այդ գեպքում այլ կերպ կնայես իրերին, չես հաղթվի կրքերից. լինի դա մարմնի կիրք, կիրք՝ փողի հանդեպ, կամ էլ գոռոզության կիրք: Ավելի շուտ, կնմանվես երկնավոր Աստծու Հրեշտակներին և ամեն ինչ բարի կտեսնես, ինչպես ասում է Տեր Հիսուս Քրիստոսն իր Լեռան քարոզում. «Եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի» (Մատթ. 6.22):

Միայն այս խոհերը չէ, որ զբաղեցնում էին ինձ և իմ վանահորը, մենք զրուցում էինք ավելի խորիմաստ բաների շուրջ: Մենք քըննարկում էինք, թե ինչպե՞ս են արձագանքում զգայարանները, երբ մեկը փորձում է հասկանալ աստվածաբանական հարցերը և խորհրդածել դրանց շուրջ: Զգայարանները Փիզիկական են և սահմանափակ, այդ պատճառով էլ չեն կարող մերձենալ Աստծուն՝ անսահման հոգուն: Նրանք նաև հակված են



սխալվելու և հաճախ սխալվում են, երբ փորձում են ճիշտն ու սխալը զանազանել: Նույնիսկ առաքյալները սխալվեցին, երբ վերադարձան Տիրոջ մոտ խնդրությամբ ասելով՝ «Տեր, գեերն էլ են մեղ հնագանդվում Քո անունով»: Իսկ Տերը պատասխանեց նրանց. «Բայց մի ուրախացեք այս բանի համար» (Ղուկ. 10.17, 20): Այսպես էլ մարդասպանը, երբ սպանում է՝ վրեժինդիր լինելով, գոհացում է զգում, կարծես մի մեծ գործ արած լինի: Բայց դա անշուշտ սխալ զգացում է: Դու ևս, սիրելի եղբայրս, կարող ես զանազան զգացումներ ունենալ աղոթելիս, պաս պահելիս, առանձնացած խոկալիս: Լավ քննիր այդ զգացումներդ, քանի որ դրանք կարող են քողարկված աշխարհիկ զգացումներ լինել, և փորձիր հոգի ազատագրել զգայարաններիդ կապանքներից:

Մեկ այլ կետ էլ կա, որի վրա կուզեի ուշադրությունն հրավիրել. երբ մեկն ամբողջովին խորասուզված է լինում աստվածայինի մեջ, աշխարհին և շրջապատին անհաղորդ է դառնում: Օրինակ՝ Աննան տաճարում Տիրոջ առջև վշտահար հոգով աղոթում էր և իր չուրջը եղող ոչնչից տեղյակ չէր: Հեղի քահանան նույնիսկ կարծեց, թե նա հարթած է, և հանդիմանեց նրան՝ ասելով. «Մինչև Ե՞րբ հարթած վիճակում ես մնալու, մթափվիր գինովությունից» (Ա. Թագ. 1.14):

Դու նույնպես, եթե ամբողջովին խորասուզված լինես աղոթքի ու խոկումի մեջ, տեղյակ չես լինի շուրջդ կատարվող ոչ մի բանից: Այստեղ հիշում եմ Ա. Հովհաննես Կոլոսի օրինակը, ով երկար ժամանակ էր անցկացնում խոկալով: Այդ ընթացքում մարդիկ խոսում էին իր հետ, բայց նա չէր լսում նրանց: Պատճառն այն էր, որ նրա հոգին այդ պահերին խորասուզված էր լինում այլ, ավելի կարեւոր հարցերի մեջ, շատ ավելի խորը և շատ ավելի մոտ լսողությանն ու հիշողությանը: Երբեմն մարդիկ հարցեր էին տալիս, բայց սուրբը պատասխանում էր նրանց աստվածաբանական մտուրումներով, որոնք բացարձակապես կապ չունեին նրանց հարցերի հետ: Իրականում նա չէր լսում, թե ինչ էին ասում, որովհետև իր հոգին ազատագրված էր զգայարանների կապանքներից:

### Հոգու ազատագրումը մարդկային իմաստությունից

Այժմ ես ուզում եմ, որ հոգին ազատագրվի նաև մարդկային իմաստությունից, քանի որ. «Զէ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը» (Ա. Կոր. 1.20) և դարձյալ,



թե՝ «Տերը գիտե իմաստունների մտածումները, որ ընդունայն են» (Ա. Կոր. 3.20): Սուրբ Գիրը մեզ ասում է նաև. «...այս աշխարհի իմաստությունը հիմարությունն է Աստծու առաջ. քանզի գրված է, թե՝ ինքն է, որ բոլոր է իմաստուններին իրենց խորագիտության մեջ» (Ա. Կոր. 3.19):

Նրանք, ովքեր իրենց իմաստուն և խելացի են կարծում, ապավինում են իրենց իմաստությանն ու խելքին, ավելի քան հեռու են հոգերից և աստվածայինից: Դրա համար է Ա. Պողոս առաքյալն ասում. «Եվ իմ խոսքը և քարոզությունը իմաստության ճարտար խոսքերով չէին, այլ Սուրբ Հոգով հորությամբ», «և ինչ որ հայտնում ենք, ոչ թե ճարտար խոսքերի մարդկային ուսուցումով է, այլ Հոգով վարդապետությամբ. Հոգերը հոգերով խոսքերով ենք բացատրում» (Ա. Կոր. 2.4,13):

Հիմա տեսա՞ր, իմ սիրելի եղբայր, թե որքան փուչ է մարդկային իմաստությունը:

Ուրեմն ի՞նչ, Աստված առհասարակ մերժո՞ւմ է իմաստությունը: Ոչ, այլ խրախոսում է այն: Լսիր, թե ինչ է ասում Ա. Պողոս առաքյալը նույն թղթում. «Իմաստությունը քարոզում ենք հոգեպես կատարյալներին, իմաստությունը, որ այս աշխարհինը չէ, ոչ էլ այս աշխարհի՝ կործանման սահմանված իշխանների իմաստությունը, այլ քարոզում ենք Աստծու խորհրդավոր, թաքուն իմաստությունը» (Ա. Կոր. 2.6,7):

Ուստի, եթե ցանկանում ես ըմբռնել Աստծու խորհրդները, առաջին հեղթին, ազատագրիր հոգիդ մարդկային իմաստությունից: Կանգնիր Աստծու առաջ որպես տգես: Միայն այդ ժամանակ դու կլցվես գիտությամբ, այն գիտությամբ, որը հոգերը է ու կատարյալ, ոչ մարդկային ու ոչ թերի. «Որովհետև Հոգին քննում է ամեն ինչ, նույնիսկ Աստծու խորունկ ծրագրերը» (Ա. Կոր. 2.10): Ա. Պողոսն անշուշտ սա նկատի ուներ, երբ ասում էր. «Եթե ձեզնից մեկը կարծում է, թե ինքն իմաստուն է այս աշխարհում, հիմար թող լինի, որպեսզի իմաստուն դառնա» (Ա. Կոր. 3.18):

Մի անգամ Տեր Հիսուս Քրիստոսի մոտ ձեռքը գոսացած մի մարդ եկավ, որն ուզում էր բժշկվել: Տերն ասաց նրան, որ երկարի իր ձեռքը, և մարդը երկարեց, և գոսացած ձեռքն առողջացավ (Մատթ. 12.10-13): Այս հրաշքն ի հայտ է բերում Տիրոջ գորությունը, բայց նաև ցույց է տալիս, թե որքան տկար է մարդկային իմաստությունը: Եթե այդ մարդը տեղիք տար մարդկային իմաստությանը, նա պիտի վիճեր. «Ինչպես կարող եմ Հոգին 17





Երկարել ձեռքս, եթե այն գոսացած է: Հնարավո՞ր է, որ գոսացած ձեռքը մեկնվի: Խակ եթե կարող եմ այն երկարել, ինչի՞ս է պետք ուրեմն բժշկվելը: Դու նախ՝ բժշկիր, որ հետո ես կարողանամ այն երկարել»: Սակայն այս մարդն իրեն հիմարացրեց, որպեսզի լավանա: Նա արհամարհեց մարդկային իմաստությունը, ըստ որի, գոսացած ձեռքը չի կարող երկարվել: Այդ իմաստությունը չի ընդունում, որ լեռը կարող է շարժվել իր տեղից, որ մարդ կարող է քայլել ջրի վրայով կամ, որ մարդ չպետք է մտահոգվի վաղվա օրվա մասին:

Մարդկային իմաստությունը, ասես մանրադիտակով քննում է Աստծուն և Նրա որոշիչները: Այս ընդունում է միայն այն, ինչը համապատասխանում է Աստվածաշնչի ու Եկեղեցու մասին իր պատկերացումներին, և մերժում այն, ինչին հավանություն չի տալիս իրենց միտքը:

Մյուս կողմից, Աստծու որդիներն ամեն ինչ ընդունում են ուղղակի, առանց առարկության: Նրանք ասում են. «Ով Տեր, ուզո՞ւմ ես, որ մենք անցնենք Կարմիր ծովով: Լավ, ուրեմն մենք կանցնենք, քանի որ Դու կպատրաստես ճանապարհը մեզ համար, որպեսզի չխեղդվենք»:

Մի առասպել կա, ըստ որի Կարմիր ծովի ջրերը բաժանվեցին ոչ թե այն ժամանակ, երբ Մովսեսը երկարեց իր ձեռքի գավազանը, այլ՝ երբ առաջին մարդն իր ոտքը դրեց ջրի մեջ: Սա պարզապես առասպել է, բայց վեհ հոգեոր իմաստ ունի:



## Չորս պատերի մեջ

Անապատում կամ լեռան վրա հոգեոր լինելը տարբերվում է քաղաքում հոգեոր լինելուց: Ամենադժվար կապանքներից մեկը քաղաքում Աստծուն պատողի համար՝ չորս պատերի մեջ լինելն է:

Սա ես ինքս զգացել եմ մի քանի տարի առաջ, երբ գտնվում էի Ալմազա կոչվող անապատ վայրում, որը Հելիոպոլիսից մի քանի մղոն հեռավորության վրա է: Ես կիրակնօրյա դպրոցի ընկերներից մեկի հետ ամեն օր բարձրանում էի այդ անապատի բլուրներից մեկը՝ աղոթքի ու խոկումի համար: Այդտեղից հորիզոնում երևում էր Հելիոպոլիսը, որը հեռվից շատ փոքր ու աննշան էր թվում: Զգում էինք, որ մեր հոգիներն ազատվում են երկարության, լայնության և բարձրության չափումներից, ճոխության ու չքեղության կապանքներից: Շքեղ պալատ, թե խրճիթ՝ միևնույն էր մեզ համար, քանի որ դա չէր էականը: Այդ բարձր բլրի վրա, ավազին նստած, մենք հոգեոր երջանկություն ու հաճույք էինք զգում, երջանկություն, որը երեք չենք զգացել քաղաքում:

Երբ արձակուրդներին վերադարձանք Կահիրե, անկեղծ եմ ասում, սիրելի եղբայր, նեղվեցի այդ աղմկոտ մայրաքաղաքից: Փողոցով քայլելիս գլխիս և ականջներին մեջ կարծես ժայթքող հրաբուխ լիներ՝ մարդկանց գոռոգոցի, մեքենաների, տրամվայների ու ամեն տեսակի տրանսպորտի աղմուկի պատճառով: Այս աղմուկի մեջ հասկացա, որ չեմ կարող կարգին, կանոնավոր կերպով ու անընդմեջ մտածել, այնպես, ինչպես այն բարձր բլրի վրա: Երբ իմ սենյակի դուռը փակեցի և աղոթքի կանգնեցի, չկարողացա աղոթել: Սենյակի չորս պատերն ինձ Աստծուն վայելելուց ետ պահող ամուր խոշնդուաներ ասես լինեին:

Այսպիսով, ես աղոթք չարեցի, այլ սենյակից դուրս գալով, քայլեցի շատ հեռու, փորձելով մի խաղաղ անկյուն գտնել, ուր ոչ մի շինություն չլիներ: Մոտ մեկ ժամ հետո մի տեղ



գտա, որը փոքր ի շատե էր միայն համապատասխանում պահանջման մասից առաջ կարուելով իմ բարձր բլրին:

Քո հոգին, սիրելի եղբայր, ցանկանում է ազատ լինել, ճախրել թոշնի պես, որ ճյուղից ճյուղ է թոչում: Նա ուզում է նմանվել հրեշտակներին, որոնք միշտ փառաբանություն են երգում Աստծու՝ առանց որևէ արդերի կամ սահմանափակման: Եթե մշտապես չես կարող լինել այդ վիճակում, ապա գոնք երբեմն եղիր...

Կարելի է կարծել, որ խոկումն ավելի հեշտությամբ ու խորությամբ հասանելի է նավազնացներին, գյուղացիներին և անապատի ու լեռների բնակիչներին: Կարծում եմ նաև, որ մենք նույն կարողությունը կունենանք, երբ ազատվենք մարմնի կապանքներից ու գնանք վեր՝ երկինք, ուր Աստված է, հրեշտակներն ու սրբերը:

Այս մասին խոսեցի հոգեոր հորս հետ, և նա իմ առջև բացեց հոգեոր մի այլ փորձառություն: Նա պատմեց, թե ինչպես իր վանական կյանքի սկզբում քսանութ օր առանձնացել է խցում՝ չորս պատի մեջ, առանց որևէ մեկին տեսնելու: Այդ շրջանը նա անց է կացրել Աստծու հետ ծանր պայքարում: Դա իսկապես ծանր ժամանակ է եղել, որի ընթացքում իր հոգին նվազել է, բայց ի վերջո, կարողացել է ազատվել իր բազմաթիվ կապանքներից ու հասնել Աստծուն և ուժով նրանից խոստումներ ստանալ: Այսպիսով, վանական իր խցից գուրս է եկել, գգալով, որ իր համար միենույն է՝ չորս պատի մեջ լինել, թե ազատ՝ պատերից գուրս...

Այստեղ է, որ քեզ համար պիտի բացեմ հոգեոր ավելի խոր ու ավելի բարձր մի աստիճան:

Առաջին աստիճանը չորս պատերի մեջ լինելուց հոգնելն է, իսկ հաջորդ աստիճանը՝ չորս պատից անտեղյակ լինելը: Այս դեպքում, սենյակումդ նստած այնքան կլանված ես լինում քո աղոթքներով, խոկումներով ու ընթերցումներով, որ քեզ շրջապատող ամեն ինչից վերանում ես: Դու ապրում ես զգայարաններից վեր գտնվող մի այլ աշխարհում: Զես իմանում, արդյոք սենյակումդ ես, թե՞ ազատ տարածության մեջ, և կամ խուցդ պատեր ունի՞, թե՞ ոչ: Նույնիսկ չես իմանում, թե երկի՞նքն է իջել քեզ մոտ՝ երկիր, թե՞ ուռ ես երկինք բարձրացել՝ երկրի վրա լինելով:

Գիտե՞ս, սիրելի եղբայր իմ, որ եղել են ոմանք, ովքեր չեն կարողացել հասկանալ՝ արդյո՞ք իրենք մարմնի մեջ են, թե մարմնից գուրս, ինչպես օրինակ Ս. Պողոս առաքյալը (Բ Կոր. 12.2), սուրբ Հոգհաննես Ասիւտացին և իմ ծեր հոգեոր հայրը:



Տեղի կապանքներից հոգու ազատագրման թեման ինձ խորհել է տալիս մեկ այլ խնդրի շուրջ, որը «Հայտնությունն» է:

Լսել ենք Ս. Հոգհաննես սիրելի աշակերտի և Ս. Պողոս առաքյալի հետ եղած հայտնությունների մասին: Ժամանակը չի բավականացնի, որպեսզի պատմենք, թե ինչ է հայտնվել Ս. Անտոնին, Ս. Շենուղային և մյուս սրբերին, ովքեր մնալով իրենց տեղում, կարողացել են ապրել ուրիշ միջավայրում ու իրավիճակում, ուր տեսել են այնպիսի բաներ, որ հնարավոր չէ նկարագրել կամ բառերով արտահայտել:

Այս պահին մի պատմություն եմ հիշում, հոգով լի մի քահանայի մասին, որն ինձ մեր սիրելի եղբայրներից մեկն է պատմել: Երբ այդ քահանան Ս. Պատարագի ժամանակ աղոթք էր անում և հասավ այս բառերին. «...նա բարձրացրեց իր աչքերը», ինքը նույնպես բարձրացրեց իր աչքերը և... խորը լուսաթյուն տիրեց եկեղեցում... Ռոպեներն անցնում էին, մինչդեռ քահանան վեր էր նայում լուսաթյան, զարմանքի ու շփոթության մեջ: Երկար ժամանակ անցավ, համայնքը լուս, ուշագրությամբ հետևում էր քահանային: Ապա քահանան իջեցրեց հայցքն ու շարունակեց աղոթքը՝ ներամփոփ ու ջերմեռանդորեն, անտեղյակ՝ անցած դադարից: Աղոթքն ավարտելուց հետո, երբ իր հետևորդներից մեկն ասաց նրան՝ կատարվածի մասին և խնդրեց բացատրել պատճառը, քահանան շփոթվեց և չցանկացավ պատասխանել: Բայց համառելուց հետո ասաց, որ երբ վեր նայեց, տեսավ, որ եկեղեցին կարծես գմբեթ ու առաստաղ չունենար, և մի երկար սանդուղք էր ձգվում խորանի և երկնքի միջև: Նա, իր կարծիքով, նայել էր դրան միայն մի պահ քիչ ավելի, և հետո շարունակել աղոթքը...

Զարմանում եմ՝ ինչպես են ոմանք վանականությունը համարում ծառայության ուղի, այնինչ ես այն համարում եմ միայն երկինք տանող ճանապարհ: Վանականության մեջ առանձնությունը, խոկումները և անընդմեջ պայքարն օգնում են հոգուն, որ ազատագրվի ու միանա Աստծուն:

Իմ սիրելի եղբայր, կարծում եմ, որ գեռ շատ բան կա ասելու այս մասին:





[5]

## Ավելի մեծ,քան երկինքն ու երկիրը

Այս անգամ չէի քայլում անապատով, նստած չէի վանքի դռան առջև. ես իմ հոգեւոր հոր հետ իր ժայռափոր խցի առջև էի՝ շարունակելու մեր գրուցը Նրա մասին, Ով ավելի մեծ է, քան երկինքն ու երկիրը:

Միրելիդ իմ եղբայր, հոգիդ, որը ցանկանում է ազատագրվել, լավ գիտի իր արժեքը: Գիտի, թե որքան զարմանալիորեն մեծ է ինքը, շատ մեծ, որպեսզի նսեմանա մարմնի, միջավայրի կամ դեերի առաջ:

Միրյալդ Աստծու, այս մասին գաղափար կազմելու համար պետք է, որ զրուցենք իրար հետ: Պետք է հիշենք, որ մարդը միակ արարածն է Աստծու նմանությամբ ու պատկերով ստեղծված (Ծնն. 1.27): Ուրեմն, երբ քեզ իննդրեն ներկայանալ, ասա հաստատ ու վստահ՝ ես Աստծու պատկերն եմ: Լինելով Աստծու պատկերը՝ դու անմահ ես, ենթակա չես մահվան: Քանի որ, արդյո՞ք հնարավոր է, որ Աստծու, Անմահի նմանությամբ արարաված մարդը մեռնի: Տես, թե որքան մեծ ես դու, ավելի մեծ, քան բարձր լեռը, անծայր ծովը, շողջողացող արեգակը ու փայլող լուսինը: Ավելի մեծ ես, քան հսկայական անապատը և լայնածավալ հարթավայրը, և նույնիսկ ավելի մեծ, քան ոչնչացնող ատոմը կամ բնության բոլոր գորությունները:

Այս ամենն անցողիկ է, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Երկինքն ու երկիրը պիտի անցնեն», բայց դու՝ ոչ, քանի որ Տեր Հիսուս Քրիստոս խոսացել է քեզ հավիտենական կյանք (Հովհ. 4.14), քեզ՝ Աստծու պատկերիդ:

**Դու երկրի և նրա վրա գտնվող ամեն ինչի թագավորն ես**

Մեծ ես, եղբայր իմ, միակ աստվածային արարածն ես, քանի որ Աստված ողջ երկրից միայն քեզ է տվել հրեշտակներին հասուկ բանականության ու կատարելության շնորհը: Դու այն



22

արարածն ես, ում տրված է Աստծուն ճանաչելու ու պաշտելու կարողությունը, և ում Աստված սիրում է: Բնությունը, որ երբեմն կարծում ես, թե քեզանից մեծ է, Աստված ստեղծել է միայն քեզ ծառայելու համար: Դու կարող ես հպատակեցնել նրա մեջ եղած ամեն բան՝ ըստ քո կամքի և զորության:

Այդ պատճառով, Աստված նախ ստեղծեց ամեն ինչ և հետո՝ ամենավերջում՝ քեզ, որ իշխես մնացած ողջ արարչագործության վրա. իշխես երկնքի թուշունների, ծովի ձկների, անասունների և երկրի վրա գտնվող ամեն ինչի վրա (Ծնն. 1.26, 28): Տեսնո՞ւմ ես, որ կոչված ես իշխելու, իսկ դու քեզ թույլ ես համարում և վախենում ես բազեից, կետից, առյուծից ու մյուս գաղաններից, որոնք իրականում քո տկար ծառաներն են և որոնք նախկինում ծառայել են քեզ:

Մի կարծիր, թե այս իշխանությունն ունեիր միայն նախկինում՝ մինչև առաջին մեղքը, որովհետև արդարները բոլոր գարերում էլ ունեցել են այս կոչումն ու իշխանությունը: Սամսոնն իր ձեռքով պատեց առյուծին և սպանեց, Դանիելն առյուծների գրի մեջ էր, բայց նրան չինասեցին, Հովնանին կուլ տափած ձուկը նրան փրսխեց՝ չհամարձակվելով վնաս պատճառել, երեք պատանիները կրակի հնոցում էին, սակայն կրակը նրանց չայրեց: Նույնը կարելի է տեսնել և նոր Կտակարանում: Ա. Պղոսի ձեռքից մի իժ կախվեց, բայց նա գաղանին կրակի մեջ թափ տիեզեց, և իրեն ոչինչ չպատահեց (Գործք 28.3-7): Քեզ նույնպես իշխանություն է տրված՝ գնալու օձերի ու կարեճների և հակառակորդի ամբողջ զորության վրայով:

Միրելի եղբայրս, ե՞րբ պիտի գիտակցեն հոգուդ արժեքը, որին մեղքի պատճառով բանտարկել ես նվաստացման, երկչոտության ու վախի զնդանում: Բանտիդ ճաղերից նա դուրս է նայում՝ փընտրելով իր անցած փառքը, ցանկանալով ազատ արձակվել, եթե թույլ տաս:

**Դու աստվածային արարած ես**

Դու, ով քաջդ, աստվածային արարած ես, ում դիմելով Որդի Աստված ասում է. «Մնացեք իմ մեջ, և ես՝ ձեր մեջ. ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պատուղ տալ, եթե որթատունի վրա հաստատված չլինի» (Հովհ. 15.4): Դու, ում սրտի դուռը բախում է Աստված՝ կամենալով, որ բաց անես դուռն իր առջև, որպեսզի նա մտնի ու ընթրի քեզ հետ, և դու՝ նրա հետ և քեզ մոտ օթևանի (Հայտն. 3.20, Հովհ. 14.23):



23

Դու Աստծու պատկերն ես և ունես իր հատկանիշները: Տես, թե ինչպես է Տեր Հիսուս Քրիստոս, փառք իրեն, ասում իր մասին. «Ես եմ լույսը աշխարհի», ապա ասում է քեզ և եղայլներիդ. «Դուք եք աշխարհի լույսը»:

Քեզանից պահանջվում է ջանալ նմանվել Աստծուն, որովհետեւ փառաց Տերն ասում է. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48):

Դու այն անձն ես, ում Աստված ուրախ է իր որդին կոչել, մինչդեռ Նա չկամեցավ իր որդիները կոչել հրեշտակներին կամ հրեշտակապետերին: Նա քեզ, միայն քեզ է կոչել աստվածային արարած:

Դու ես այն անձը, ում ոտքերին Տերը ջուր լցրեց, լվաց ու սրբեց իր մեջքին կապած սրբիչով:

Մարմնիդ անդամները Քրիստոսի անդամներն են, ինչպես առաքյան է ասում (Ա. Կոր. 6.15):

Միայն քեզ է պատվիրված Աստծու տաճար լինել, և Աստծու Հոգին քո մեջ է բնակվում (Ա. Կոր. 3.16):

Հրեշտակները քեզ են երազում նմանվել, քանզի միայն դու ես ճաշակում Տիրոջ սուրբ մարմինն ու արյունը, քեզ Տերը ցանկացավ մի դարձնել իր և Հոր հետ (Հովհ. 17.21):

Այդ քեզ են սպասավորում հրեշտակները. «Տիրոջ հրեշտակների բանակն իր երկյուղածների շուրջն է և պահպանում է նրանց» (Սալմ. 33.8):

Զե՞ս կարգացել, սիրելի եղբայր, թե Տերն ինչպես ուղարկեց երկու հրեշտակներին՝ Սոդոմից Հովտին փրկելու համար: Ինչպես ուղարկեց իր հրեշտակին և փակեց առյուծների բերանները՝ Դանիելի համար: Ինչպես Եղիսեն իմացավ և ասաց իր սպասավորին. «Մի վախեցիր, քանզի մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են»... Եվ Եղիսեն աղոթեց, ու Տերը բացեց երիտասարդի աչքերը, և նա տեսավ, որ լեռը լի է ձիերով ու հրեղեն մարտակառքերով» (Դ. Թագ. 6.15-17): Նաև, թե ինչպես Տիրոջ հրեշտակը կերպուր բերեց Եղիսեյին, քանի դեռ քնած էր մի բեեկնի ծառի տակ, և նա վեր կացավ, կերավ ու խմեց և այդ կերակրի գորությամբ քառասուն օր ու քառասուն դիշեր քայլեց (Գ. Թագ. 19.5-9): Եվ ինչպես Տիրոջ հրեշտակը Ամբակումին տարավ Դանիելին գուրի մեջ ուտելիք տալու (Դան. 14.35-38):

Ժամանակը չի բավականացնի պատմել, Տիրոջ սիրելիիդ, հրեշտակների սպասավորության մասին, քո համար նրանց

մտահոգության և բարեխոսության մասին: Իսկապես, դու կարեոր արարած ես:

### Դու, որ աստված ես կոչվում

Քեզ, սիրելի եղբայր, Աստված ինքը աստված է կոչում. «Աստվածներ եք դուք, կամ բոլորդ էլ որդիներն եք Բարձրյալի» (Սալմ. 81.6): Աստված նաև ասել է Մովսեսին. «Ահա ես քեզ փարավոնի համար մի աստված դարձրի» (Ելք. 7.1): Խոսքը ոչ թե աստվածության, այլ գերիշխանության մասին է:

Ինչ էլ որ լինի այս երկու տների իմաստը, դրանք անկասկած ցույց են տալիս քո արժեքն Աստծու աչքում:

Քեզ է արված իշխանությունը՝ կապելու և արձակելու երկնքում: Քանի որ Աստված ասաց. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Սալմ. 18.18): Ավելին, տրված է նաև ներելու կամ չներելու իշխանություն:

Տեր Հիսուս Քրիստոս Հոր մոտ բարձրացավ, այնտեղ՝ երկընքում, քեզ համար տեղ պատրաստելու, և պիտի նորից գա քեզ տանելու այնտեղ՝ ասելով. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Սալմ. 25.34): Էլ ավելի չե՞ս բարձրանա, արդյոք, երբ նա տա քեզ Արքայության բանալիները:

Այս ամենը արված է քեզ, որ Աստծու նմանությունն ու պատկերն ես, և ում տեսքն ընդունեց Տերը, երբ մարմնով եկավ, թեև իր աստվածային բնությունը երբեք, մի վայրկյան կամ մի ակնթարթի խակ չբաժանվեց իր մարդկային բնությունից:

### Դու Աստծու բարեկամն ես

Հիշեր, թե ինչպես Աստված, իր գերագույն իմաստությամբ՝ Սուդոմը ոչնչացնելուց առաջ, հայտնեց իր կամքը իր բարեկամ Աբրահամին. «Մի՞թե ես իմ ծառա Աբրահամից գաղտնի պիտի պահեմ այն, ինչ անելու եմ: Աբրահամը հաստատվես մեծ և բազմանդամ ազգի նախահայր է լինելու, և նրա միջոցով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը» (Ծնն. 18.17-18): Նա նույնիսկ թույլ տվեց, որ Աբրահամը քննարկի այդ հարցն իր հետ՝ մտերմիկ ու ազատորեն ասելով. «Մի՞թե Դու արդարին ամբարշ-



**տի հետ կոչնչացնես... Քավ լիցի, չանես այդ բանը: Ոչ, Դու, որ գատում ես ամբողջ աշխարհը, այդպիսի գատաստան չես անի»** (Ծնն. 18.23-26):

Անշուշտ, սա բարեկամների զրույց է և ոչ թե զուտ ծառայի ու Տիրոջ կամ արարածի ու Արարչի: Արանք այնպիսի մեկի խոսքեր են, ով համոզված է, որ արժեք է ներկայացնում իր բարեկամի համար:

Մովսեսը, երբ Աստծու հետ խոսում էր իր ժողովրդի մասին, որին Աստված ուզում էր կործանել, ասաց. «Արդ, եթե ներելու ես իրենց մեղքերը, ներիր, իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը չնշիր Քո մատյանից, ուր գեղել ես ինձ» (Ելք 32.31,32): Իշարկե, սա մտերմություն ու բարեկամություն է:

Հիմա, եղբայրս, ճանաչեցի՞ր Հոգուդ արժեքն ու մեծությունն Աստծու աչքում: Թույլ կտա՞ս, որ նենդ սատանան խաղա քո պատվի հետ, հակառակ այն բանի, որ Աստված բոլոր դեկրի վրա իշխանություն է տվել քեզ: Չեմ կարծում, թե թույլ տաս:



Նա խորը քնած էր, երբ հրեշտակը շշնջաց ականջին. «Մինչև ե՞րբ պիտի ապրես այսպես՝ ուրիշի ստվերի պես»: Զայնն այնքան մեղմ էր, որ քնած մարդուն չխանգարեց, և նա հանդարտորեն պատասխանեց. «Ի՞նչ նկատի ունես, տեր իմ հրեշտակ»: Հրեշտակը պատասխանեց. «Նկատի ունեմ այն, որ կորցրել ես ինքնությունդ և այժմ լիովին ուրիշի իշխանության տակ ես, ով քո աչքին այնքան է բարձրացել, որ նրան ես որպես օրինակ ընդունում: Սկսել ես ամեն ինչում հետևել նրան. եթե բարձրանում է, գու էլ ես բարձրանում, և եթե ընկնում է՝ գու էլ իր հետ: Ընդունում ես նրա գաղափարները և իր հետ էլ խոտորդում: Ավելին, նրա գաղափարները գու առավել եռանդով ես պաշտպանում, քան ինքը: Նրա սկզբունքներն անառարկելի ես համարում, նրա ասածը քեզ համար օրենք է»:

Քնած մարդն զգաց, որ հրեշտակի խոսքերը ճշմարիտ են, սակայն փորձեց արդարանալ. «Վնաս կա՞ այն բանից, տեր իմ հրեշտակ, որ ես հետևեմ նրան, քանի դեռ իր գաղափարները վստահելի են ու անպարսավելի»: Հրեշտակը պատասխանեց. «Ի՞նչ գիտես, որ նրա բոլոր տեսակետները վստահելի են: Արդյո՞ք կարծում ես, թե նա՝ մարդ արարած լինելով, անխալական է, ինչպե՞ս կարող ես համոզված լինել, երբ միայն իր կարծիքն ես լսում և ուրիշ ոչինչ չես ընդունում: Դու նույնիսկ չես ուզում լսել որեւէ մեկին, ով կարող է հակառակվել տիրոջդ, իսկ եթե անդամ լսում ես՝ սոսկ վիճաբանելու համար: Փորձում ես առանց հասկանալու քննադատել կամ մերժել ցանկացած գաղափար, եթե այն պարզապես հակասում է տիրոջդ տեսակետներին»:

Քնած մարդը տրորեց աչքերը՝ հասկանալու համար՝ քնա՞ծ է, թե՞ արթուն, իսկ հրեշտակը շարունակեց. «Հոգիդ բանտարկված է, ուզում է ազատ արձակվել, բայց չի կարողանում, որովհետեւ շղթայված է այդ մարդու կապանքնե-




ըով: Նա քեզ միայն այն գիտելիքն է տալիս, որն ուզում է, որ իմանաս, և այն փաստերն է հայտնում, որոնք ցանկանում է: Նույնիսկ սեփական գիտելիքներդ, որ ինքդ ես ձեռք բերել, ինքը պետք է վերանայի: Դու լիովին կորցրել ես քո անհատականությունը և այլքս դու չես քո տերը: Երբ դժվարության ես հանդիպում, իր օգնությանն ես գիմում, և երբ մի բան է պատահում, չես փորձում ինքդ դրա լուծումը գտնել, այլ սպասում ես մինչև դա քո տերը և կարգավորի: Նույնիսկ, երբ ինչ-որ հարցի վերաբերյալ որոշում ես կայացնում, նա կարող է, ուզածին պես և երբ կամենա, չեղյալ համարել որոշում՝ առանց քո կողմից որևէ առարկության: Առավելագույնը, ինչին կհասնես կյանքում, դա այդ մարդու աղոտ պատկերը լինեն է: Դու կորցրել ես այն անհատականությունը, որն Աստված տվել է քեզ արարելիս»:

Քիած մարդն զգաց, որ հրեշտակի խոսքերը դիպել են իր սըրտին: Նա ասաց. «Տեր իմ հրեշտակ, ինչպե՞ս կարող եմ համարձակվել վիճել տիրոջս հետո»: Հրեշտակը պատասխանեց. «Թեև այս գեղքն ուրիշ է, սակայն քեզ պիտի ասեմ, որ Աստված սիրում է, երբ իր որդիներն ուժեղ անհատականություն ունեն, և նույնիսկ թույլ է տալիս, որ իր հետ վիճեն: Հիշիր, ինչպես երեմիան դիմեց Աստծուն՝ ասելով. «Արդար ես Դու, Տեր, բայց ես իմ դատը պետք է պաշտպանեմ ու իմ իրավունքի մասին խոսեմ. ինչպե՞ս է, որ ամբարիշտների բռնած գործերը հաջողվում են, և բոլոր նրանք, ովքեր արհամարհում են ու անարգում, երջանիկ դարձան» (Ել. 12.1): Լսիր նաև Աբրահամին, որ Աստծու հետ, փառք իրեն, վիճում է ասելով. «Քավ լիցի, չանես այդ բանը... Դու, որ դատում ես ամբողջ աշխարհը, այդպիսի դատաստան չես անի» (Ծնն. 18.25): Սովույը ևս նույն կերպ խոսեց իր Արարչի հետ, նա ասաց. «Մեղմացրու Քո զայրույթը, հրաժարվիր Քո ժողովրդին չարեք պատճառելուց» (Ելք. 32.12):

Այստեղ քնած մարդը հարցուց հրեշտակին. «Այժմ, տեր իմ հրեշտակ, ի՞նչ պետք է անեմ»: Հրեշտակը պատասխանեց. «Մի ընկիր որևէ մեկի ազդեցության տակ: Շատերին լսիր, շատերի գրվածքները կարդա, բոլոր կարծիքները հաշվի առ, բայց խորաթափանց հոգի ունեցիր, որը կտարբերի առողջ կարծիքը՝ սիսալից: Ընդունիր միայն այն, ինչը համապատասխանում է քո հոգեոր և մտավոր զարդացման աստիճանին ու բնույթին, և ինչը որ համապատասխան է քո հասարակական վիճակին, ինչպես նաև տարիքիդ: Իմացիր, որ դեպի Աստված տանող շատ

հանապարհներ կան, բայց գուցե ուրիշներին հարմար ճամփան քեզ հարմար չէ: Քոնն այն ճանապարհն է, որն Աստված ընտրել է հատուկ քեզ համար, և ոչ թե մեկ ուրիշը»:

Այստեղ քնած մարդն արթնացավ քնից որպես նոր մարդ՝ ազատագրված հոգով, որն ամենուր ճշմարտությունն է փնտրում և մարդ արարածին պաշտամունք չի մատուցում:





Իմ սիրելի եղբայր, ուզո՞ւմ ես կատարյալ լինել:

Ուզո՞ւմ ես, որ հոգիդ ազատագրվի և լինի այնտեղ, ուր կապանքներ ու ասհմանափակումներ չկան: Ուրեմն, նախ և առաջ, պետք է ազատվես այն բոլոր ցանկություններից, գիտելիքներից ու զգացմունքներից, որոնք աշխարհն է քո մեջ սերմանել:

Պետք է անձդ ուրանաս և Աստծու առջև որպես ոչինչ կանգնես: Ո՞վ ես դու: Երկրի մի բուռ հողը չե՞ս: Նույնիսկ հողից էլ պակաս ես: Դու ոչինչ ես: Կար ժամանակ, երբ դու չկայիր, մինչդեռ աշխարհը գոյություն ուներ առանց քեզ: Հետո Աստված ստեղծեց քեզ ոչինչից: Նախ ստեղծեց հողը, ապա հողից ստեղծեց քեզ: Ինչո՞ւ ես, ուրեմն, մեծարում քեզ: Ո՞վ ես դու, որ մեծարվես: Խոնարհիր գլուխդ երկոտությամբ ու համեստությամբ, քանի որ ոչինչ ես: Աստծու առաջ կանգնիր բեկված սրտով ու հեզ հոգով, հիշելով ծագումդ:

Ավելին ասեմ, դու ոչնչից էլ պակաս ես, քանի որ ոչինչը անգոյլությունն է, և անգոյլությունն ավելի լավ է, քան մարդու գործած մեղքը, իսկ «...ամեն ոք իր մտքում ամեն օր ինամքով չարագործություններ է նյութում» (Ծնն. 6.5):

Եթե քո մեջ որևէ բարի բան գտնես, հաստատապես համոզված եղիր, որ դա քեզանից չէ, այլ Աստծուց, որովհետեւ, ի վեցոյն, միայն նա է բարի, կատարյալ ու սուրբ, ինչպես Տերն է ասում: «Բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստված» (Սատթ. 19.17, Ղուկ. 10.18):

Եթե քո մեջ որևէ բարի բան տեսնես, մի հպարտացիր ու մի պարծեցիր, այլ ողջ փառքը վերագրիր Աստծուն: Դա իր մենաշնորհն է, ոչ թե քոնը, որովհետեւ Աստված է ստեղծել բարին: Բարին ու բարությունն իսկ հենց ինքն է: Առանց նրա դու ոչնչություն ես, ոչինչ չես կարող անել: Կարող ես փայլել լուսնի նման, բայց հիշիր, որ լուսինը մութ արբանյակ է,



որն իր լույսն արեգակից է ստանում և իր մեջ լույս չունի: Եթե արեգակն անհետանա, լուսինը չի երևա: Իսկ արդ, լուսինը կհամարձակվի<sup>o</sup>, արդյոք, արեգակի առջև խոսել իր լույսից: Այդպես էլ ես ու դու, սիրելիս, Աստծու ներկայության մեջ:

Մյուս կողմից, եթե քո մեջ որևէ չար բան գտնես, իմացիր, որ դա քեզանից է, հետևանք է մեղքի, որը դռան առջև պառկած է և քեզ է տենչում: Դու ի վիճակի ես նրա վրա իշխելու, բայց թուղթիր, որ այն քեզ իշխի (Ծնն. 4.7): Ոչ մի չարիք Աստծուց չի գալիս: Աստծու բնությունն անհամատեղելի է չարի հետ, երբ նա արարեց ամեն ինչ իր սուրբ, անբասիր ու անապական ձեռքերով. «Տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ բարի է» (Ծնն. 1.31):

Հիմա ճանաչեցի<sup>o</sup>ր քեզ, իմ սիրելի եղբայր: Հասկացա՞ր, որ Աստծու հետ ունեցած քո հարաբերությունում իշխողը պետք է անձնութացությունդ լինի: Նկատի չունեմ, որ անձդ ինչ-որ արժեք ունի և խոնարհությունից դրդված պետք է այն ուրանաս, քանի որ տեսանք, որ անձդ ոչինչ է, ավերակ ու ոչնչություն: Այդ պատճառով էլ, ես չեմ սիրում կիրառել «խոնարհվել» բառը, որովհետև խոնարհ մարդը նա է, ով իր ունեցած դիրքից իջնում է ավելի ցածր դիրքի: Բայց իմ ու քեզ պես արժեք չունեցող մարդը, որ լոկ հող է ու ոչնչություն, չի կարող խոնարհվել, քանի որ նա փաստորեն չունի դիրք, որից հրաժարվի, կամ բարձր աստիճան, որը թողնի: Նա բարձր չէ, որպեսզի իջնի, ոչ էլ նշանավոր, որպեսզի խոնարհվի: Անձնութացություն ասելով, սիրելի եղբայրս, նկատի ունեմ այն, որ ճանաչես քեզ և այսպիսով հասկանաս, որ ոչ մի արժեք չունես: Աստված է, որ իր ողորմության, իր հեղության ու ներողամտության շնորհիվ քեզ տալիս է իր սիրուց, որին դու արժանի չես:

Եկ խորհենք այն գեղեցիկ տան շուրջ, որն ասում է. «Աստվածընտրեց այս աշխարհի հիմարներին, որպեսզի ամաչեցնի իմաստուններին. և Աստվածընտրեց այս աշխարհի տկարներին, որպեսզի ամաչեցնի հզորներին. և Աստված աշխարհի ոչ տոհմիկներին, արհամարհվածներին և ոչինչներին ընտրեց, որպեսզի իրենք իրենց մի բան կարծողներին ոչնչի վերածի» (Ա. Կոր. 1.27-29):

Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք Աստծու արքայությունը միայն հիմարներին, տկարներինն ու արհամարհվածներինն է: Ոչ, որովհետեւ Աստված նախկինում ընտրել է այնպիսի ուսոյալ մարդկանց, ինչպիսիք են Սովուս մարդարեն, Ս. Պողոս առաքյալն ու Արքանիուսը:



Ընտրել է Աթենագորասի, Պենտիուսի և Ս. Օգոստինոսի նման փիլիսոփաների: Ընտրել է Սամսոնի պես հզոր մեկին: Ընտրել է նաև ազնվական մարդկանց՝ Դավիթ թագավորի, Մաքսիմոս ու Դոմադիուս իշխանների նման:

Հարցն այն չէ, որ Աստված ընտրում է միայն հիմարներին, տկարներին ու արհամարհվածներին, այլ այն, որ Աստված (օրհնյալ լինի իր անունը) ընտրում է նրանց, ովքեր մեծ գիտելիքներ, ուժ ու պատիվ ձեռք բերած լինելով հանդերձ, իր առջև կանգնում են որպես հիմար, տկար ու արհամարհված:

Աչա Մովսեսին, ով սովորել էր եգիպտացիների ողջ իմաստությունը, Աստված կանչեց միայն այն ժամանակ, երբ նա սսաց. «Ես ո՞վ եմ, որ գնամ եգիպտացիների արքա ֆարավոնի մոտ և խրայելացիներին հանեմ եգիպտացիների երկրից: ...Մինչև օրս ես պերճախոս չեմ եղել, ոչ իսկ, երբ սկսեցիր խոսել քո ծառայի հետ, որովհետև անվարժ եմ խոսում, ծանրախոս եմ» (Ելք 3.11, 4.10):

Ս. Պողոսը, որ սովորել էր օրենքը և մեծացել էր Գամարիելի ոտքերի մոտ, առաքվեց Աստծու կողմից այն ժամանակ, երբ կարողացավ ասել. «Թանի որ գրված է. «Պիտի կործանեմ իմաստունների իմաստությունը և հանճարեղների մտածումները պիտի արհամարհեմ»: Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր՝ քնագետը, ո՞ւր՝ այս աշխարհի քննողը: ԶԵ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը: ...Եվ ես տկարությամբ, երկյուղով և սաստիկ դողով եղած ձեզ հետ: Եվ իմ խոսքը և քարոզությունը իմաստության ճարտար խոսքերով չէին, այլ Սուրբ Հոգու համոզիչ գորությամբ» (Ա. Կոր. 1.19-20, 2.3-4):

Ս. Արսենիոսին Աստված չդարձրեց հայր և առաջնորդ, երբ դեռ ուսուցանում էր Արկադիոս և Օնորիոս արքայազներին իրենց հոր՝ թեոպոս կայսեր պալատում, այլ միայն այն ժամանակ, երբ իր հոգին մաքրվեց և կարողացավ ասել. «Թագավորի որդիների ուսուցիչ Արսենիոս, որ սովորել է հույների և հումենացիների իմաստությունը, չփափ Ալֆա Բետան (այբուբենը), որը անգրագետ եգիպտացին էլ գիտի»:

Աստվածապաշտ իմ եղբայր, կարծում ես քո գիտելիքով ու կրթածությամբ եկեղեցու հիմքերը պիտի ամրացնես: Խեղճ մարդ: Ճշմարիտ եմ ասում քեզ, քանի դեռ չես ազատվել գիտելիքներից ունեցած քո կախվածությունից, չես մոտենա Աստծուն: Նաև Աստված չի օրհնի քո ծառայությունը, որովհետև եթե հաջողությամբ կատարես այն, մարդիկ

այդ հաջողությունդ կվերագրեն աշխարհի՝ քեզ տված վկայականներին ու գիտական աստիճաններին: Այսպիսով, Աստծու փառքը կողոպտված և աշխարհին վերագրված կլինի:

Թանկագին ուսայալ իմ եղբայր, Աստված կարող է այս քսաներորդ գարում էլ գնալ լճի մոտ և կրթություն չունեցող ձկնորսին կանչել իրեն առաքյալ և ավետարանիչ լինելու, ու վերջինս ավելի լավ կուսուցանի մարդկանց, քան գուլ: Երբ Աստված կիսեց Կարմիր ծովը, ոսկե մի գավազան չընտրեց, այլ մի սովորական գավազան, որը նման էր աշխարհի միջինավոր գավազաններին:

Ուրեմն, զգույշ եղիր, որ քեզ բարձր ու պարծանքի առարկա չկարծես աշխարհիկ կամ կրօնական գիտելիքիդ, կարդացածիդ կամ ունեցած փորձառությանդ պատճառով: Այլ, հակառակ քո գիտելիքի ավելանալուն և խորը հոգենոր վիճակիդ, ամեն օր Աստծու առջև կանգնիր՝ զգալով քո տգիտությունն ու անկատարությունը, զգալով, որ չասունությանը, որպես սկսնակ իր առաջնորդության կարիքն ունես: Կանգնիր նրա առջև՝ զգալով, որ ամենաթույլ գևերից և անգամ պարզագույն ու թեթևագույն թվացող մեղքերից ու սիալներից իր պաշտպանության կարիքն ունես:

Թող սա լինի քո զգացողությունը, քանի որ շատ մարդկանց եմ տեսել, ովքեր խորը հոգենոր բաներ են կարդացել ու գրել, բայց ընկել են սկսնակների մեղքերի մեջ: Սա ասում եմ քեզ, որպեսզի չլինի թե քո հոգենոր գիտելիքին ու փորձառությանը ապավիճնես: ԶԵ՞ որ Սուրբ Գիրքն ասում է. «Թող անհծյալ լինի այն մարդը, ով իր հույսը կոնկի մարդու վրա՝ ապավիճելով նրա մարմնին ու բազկին» (Երեմ. 17.5):

Իմացիր, սիրելի եղբայր, որ ցանկացած հոգենոր կամ աշխարհիկ գիտելիք, որը քեզ չի առաջնորդում համեստության ու տգետ լինելու զգացողությանը, սուտ ու խարուսիկ գիտելիք է: Զարի հարված է այն, որ ստիպում է քեզ ետ կանգնել հայցելուց, խնդրելուց ու գոււր բախելուց... Ուրեմն, եղբայրս, քեզ տգետ համարիր, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Եթե ձեզանից մեկը կարծում է, թե ինքն իմաստուն է այս աշխարհում, հիմար թող լինի, որպեսզի իմաստուն դառնա» (Ա. Կոր. 3.18):

Իմաստունը և հիմարը հավասար են Աստծու առաջ, քանի որ երկուսն էլ տգետ են, երկուսն էլ ենթակա են մահվան: Աստծու առջև տկարն ու զորավորն էլ են հավասար, երկուսն էլ տկար են, քանի որ Աստծու ներկայության մեջ ոչ ոչ մի զորություն չունի:



Արդյո՞ք կարծում ես, բարեկամս, որ դու զորեղ ես:

Որտեղից քեզ այդ զորությունը: Իհարկե, դա քոնը չէ, որովհետեւ դու հող ու մոխիր ես, ոչնչություն ու ավերակ: Այս զորությունն Աստծուց է, որովհետեւ Նա (օրհնյալ լինի իր անունը) միակն է զորեղ, և ամեն զորություն իրենից է սկիզբ առնում: Այդ դեպքում քո զորությունն Աստծուց է: Եթե այդպես է, ինչո՞ւ ես ուրեմն հապատանում ու պարձենում: Ինչո՞ւ ես Աստծու զորությունն օգտագործում այն գործերում, որոնք իրեն չեն վերաբերվում: Ուստի, ով Հպարտանում է, թող Տիրոջով հապատանա, քանի որ Նա փառքով բարձրագույնն է, Նա է ամեն ինչի աղբյուրը:

Իսկ եթե տկար ես բնությամբ, սակայն զորեղ ես Աստծով, ապա երանելի Ս. Պողոսի հետ միասին ասա. «Եվ արդ, լավ է, որ ես պարծենամ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը: Դրա համար գոհունակությամբ համակերպվում եմ տկարություններին, որովհետեւ, երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կոր. 12.9-10):

Իրեն զորավոր համարող մեկին Աստված չի կանչի, քանի որ Նա աշխարհի տկարներին ընտրեց, որպեսզի ամաչեցնի զորավորներին: Ուրեմն, զգույշ եղիր, որ չլինի թե ապավինես զորությանդ, որ կարծում ես, թե ունես, որովհետեւ մեղքը «Խոցոտելով շատերին է դիտապատ արել, և անթիվ են նրա կողմից սպանվածները» (Առակ. 7.26): Ավելի լավ է Դավիթ արդարի հետ ասա. «Ողորմիր ինձ, Տեր, քանզի հիվանդ եմ ես, բժշկիր ինձ, քանզի ոսկորներս լիախտպել են: Անձն իմ հույժ խոռված է» (Սաղմ. 6.2): Ուրեմն, համոզվիր, եղբայրս, որ տկար ես, ոչ թե որովհետեւ ես քեզ ասացի, այլ որովհետեւ դա ակնհայտ փաստ է: Մի՞թե չես ընկել ու չես մեղանչել այսօր: Չե՞ս մեղանչել երեկ և նախորդ օրերին: Ուրեմն, դու զորեղ չես, տկար ես և այդպես էլ կմնաս, մինչև չխոստովանես, որ տկար ես և չշտապես բնակվել չոր մեջ և Հայրը՝ քո:


Թույլ տուր մեկ այլ խորհուրդ էլ տալ քեզ մի կածիր, թե ավելի զորեղ ես, քան մյուսները և մի խորհիր, թե մեծամեծ գործեր կանեիր, եթե միայն քեզ իշխանություն արվեր, կամ եթե լինեիր ուրիշների տեղում: Դու այդքան էլ զորեղ չես, եղբայրս: Դրանք պարզապես երազանքներ են կամ գուցե սնապարծություն, քանի որ իրականում դու տկար ես: Գուցե, եթե լինեիր այդ մեղափորների տեղում, որոնց դատապարտում ես, նրանցից ավելի շատ մեղք գործեիր և ավելի շատ տկարություն դրսւորեիր: Եթե դու անցյալում հաղթանակել ես կամ այժմ հաղթանա-

կում ես, դա քո մեջ Աստծու ներկայության շնորհիվ է, ոչ թե քո զորության: Ուրեմն, Աստծու հետ եղիր և հիշիր, որ Աստված չի ուզենա քեզ հետ լինել, քանի գեռ քեզ ես պաշտում իր փոխարեն: Միայն մեկը պիտի գործի՝ Աստված կամ դու: Իրականում Աստված է, որ գործում է, և դու ոչինչ ես իր կողքին և պարզապես կանգնած զարմանքով դիտում ես Աստծու գործերը: Բայց եթե կարծում ես, թե այդ դու ես գործում և դա անելու համար բավականաչափ զորություն ունես, ուրեմն համոզված եղիր, որ զուր է այն, ինչ անում ես և պիտի ձախողվես:

Սա միայն քո ծառայությանն ու աշխարհիկ գործունեությանդ չի վերաբերում, այլ նաև ներքին հոգերոր կյանքիդ: Եթե կարծում ես, թե դու ես հանդերձյալ կյանքը ժառանգելու համար պայքարողը, պիտի ձախողվես և եթե կարծում ես, թե ինչ-որ մեղք այլևս իշխանություն չունի քեզ վրա, կընկնես նույն մեղքի մեջ, թեկուզ որոշ ժամանակ անց, և անկումն այդ մեծ կլինի:

Այս փուշ ու տատասկ բռուսեցնող երկրում ճիշտը քեզ տկար զգալն է և ամեն փորձության, մեղքի առջև ինքդ քեզ տկար համարելը: Սաղմոսերգութ հետ ասա. «Եթե Տերը մեզ հետ չլիներ, մարդիկ մեզ վրա հարձակվելով՝ մեզ ողջ-ողջ կու կտային, երբ նրանց զայրույթը բորբոքված էր մեզ վրա» (Սաղմ. 123.2,3): Ուստի, կանչիր Տիրոջը և կտեսնես, թե ինչպես Նա կպատերազմի քո փոխարեն: Հետո փառք տուր Աստծուն, ոչ թե՝ քեզ, քանի որ հաղթանակն իրենն է:

Ավարտելով՝ զգում եմ, որ գեռ շատ ավելին կա ասելու այս նյութի վերաբերյալ, ուրեմն, իմ սիրելի եղբայր, հիշիր ինձ քո աղոթքներում, մինչև որ նորից հանդիպենք՝ շարունակելու մեր մտորումները, եթե Տիրոջ չնորհը կամենա, որ մինչ այդ կենդանի մնանք:





## Ձն անձը և մարդկանց գովասանքը

Վերևում խոսել եմ անձնության մասին, բայց տակավին շատ բան կա ասելու դրա վերաբերյալ, որպեսզի միասին ձեռք բերենք հոգու աղատագրում:

Թանկագին եղբայր, ուզո՞ւմ ես ավելի մերձենալ Աստծուն: Ուզո՞ւմ ես երանելի Ս. Պողոսի հետ ասել. «Մարմնից դուրս գալը և Քրիստոսի հետ լինելը ավելի լավ եմ համարում» (Փիլիպ. 1.23): Ուրեմն, նախ աղատագրվիր անձիցդ, այն անձիցդ, որին պաշտում ես Աստծու փոխարեն և որին միշտ փորձում ես գովաբանել ու մեծարել ուրիշների առջև:

Աշխարհն, արդյոք, քեզ գովաբանո՞ւմ է, իմ սիրելի եղբայր, և մի՞թե դու լնդունում ես այդ գովաբանությունը: Ի՞նչ թշվառ ես դու: Զգիտե՞ս, ինչ է, որ փառքը միայն Աստծուն է, որովհետև երկնքի ու երկրի Արարիչն ու հեղինակն է Նա: Միայն նա է ինքնագո, հավիտենական, ամենազոր ու ամենագո... Զգիտե՞ս, որ երբ ինքը քեզ գովում ես կամ երբ թողնում ես, որ քեզ գովեն, կողոպտում ես Աստծու հատկանիշներից մեկը և վերագրում ես քեզ: Սա այն նույն փորձությունն է, որի մեջ հայրո՛ Ադամն ընկավ, քանի որ չբավարարվեց այն ամենով, ինչ Աստված տվել էր իրեն, և ձգտեց ավելի բարձրանալ ու նմանվել Աստծուն:

Ո՞վ ես դու, եղբայր, որ ցանկանում ես փառագորվել: Մի՞թե հոգը փառք ունի կամ մոխրը՝ պատիվ: Կամ արդյո՞ք ոչնչությունը որևէ հարգանքի կամ պատկառանքի է արժանի: Դու էլ ինձ պես մեղավոր չե՞ս: Սակայն Աստված քեզ պաշտպանում է և թերություններդ թաքցնում է մարդկանց աչքից: Սա մի՞թե քեզ, մեղավոր ու տկար մեկիդ, տալիս է փառք ու պատիվ ունենալու իրավունք: Ինչո՞ւ ես, ուրեմն, փառագորում քեզ՝ իմանալով հանդերձ քո բնությունը, քո բոլոր մեղքերը, թերություններն ու տկարությունները:



Մարդիկ չգիտեն ամենը անցյալիդ մասին: Նրանք դեռ չեն հայտնաբերել քո տկարությունները և սխալներդ դեռ չեն բացահայտվել իրենց համար: Ինչո՞ւ ես խարում նրանց, երբ ինքդ քաջ գիտես այս ամենը: Առավել ես, ինչո՞ւ ես ինքդ քեզ խարում: Չարաշահո՞ւմ ես Աստծու պաշտպանությունն ու մեղքերդ թաքցնելը:

Ուզո՞ւմ ես, որ Աստված մարդկանց առջև հանի քո մտքերը, քո զգացմունքները և քո զսպված ցանկությունները:

Բացի այդ, ինչո՞ւ ես սին փառք փնտրում, որը քեզ չի լսնկերակցի մահանից հետո, ոչ էլ կրողարկի քեզ դատաստանի օրը Արդար Դատավորից, Ով դատում է ոչ ըստ մարդկանց կարծիքների: Նա դրա կարիքը չունի, քանի որ ամեն ծածուկ բան հայտնի ու բացահայտ է իր համար...

Մարդկանց գովասանքը դեռ թա՞նկ է քեզ համար: Ուրեմն, իմացիր, որ այն սուտ է, քանի որ նրանք քեզ գովում են քաղաքավարությունից գրգված կամ քեզ խրախուսելու կամ էլ իրենց նըրբանկատությունը ցույց տալու համար: Անգամ եթե մարդիկ անկեղծ են իրենց գովեստում, միայն արտաքինից են դատում: Ոչ մեկը չի կարող քո մտքերը կարդալ, մտադրություններդ իմանալ կամ քըննել քո միրաը...

Հիշո՞ւմ ես Նաբուգոդոնոսորի պատմությունը (Դան. 4.29-33): Հիշո՞ւմ ես, թե նա ինչպես էր իրեն սին փառք վերագրել: Հիշո՞ւմ ես ինչ եղավ դրա վերջը: Ուզում եմ, որ այս պատմությունից գաս առնես...

Գուցե նյարդայնացրեցի՞ քեզ: Խնդրում եմ, ներիր իմ թուլությունն ու ուղիղ խոսքը: Բայց, սովորաբար, նյարդայնանո՞ւմ ես, երբ քեզ հետ անկեղծ են խոսում, առանց մյուսների պես շողոքորթելու: Ինչո՞ւ: Թանկագին եղբայր, լավ է այս ոճը հավանեիր, որովհետև այն քո մասին ճշմարտությունն է բացահայտում: Իսկ դա իմանալու կարիքը շատ ունես, քանի որ դա կարեոր է քո փրկության համար:

Հիմա եկ միասին քննենք՝ ինչո՞ւ ես ուզում մյուսների առջև մեծ ու կարենու երեալ: Գուցե թերարժեքության բարդույթի՞ պատճառով: Գուցե քեզ թերարժեք ես զգում և այն հաղթահարելու համար ցանկանում ես ամեն կերպ մարդկանց գովասանքի՞ն արժանանալ: Երբ գովում են քեզ, գոհ ես մնում, իսկ երբ քննադատում են՝ ատամներով պաշտպանվում ես: Անգամ, եթե չեն խոսում քո մասին, այդ ժամանակ էլ ուրախ չեն լինում, և արժանիքներիդ մասին հիշելով, փորձում ես նրանցից



գովիստ մուրալ, որպեսզի հիանան ու գովաբանեն քեզ... ձիշտ չէ՞:

Հավ է, որ գգում ես, եղբայրս, որ կատարյալ չես, այլ մեղավոր ու տկար մեկն ես, բոլոր մարդկանցից ամենավատը։ Սակայն դրա բուժումը ոչ թե տկարությունդ ավելացնելն է՝ մարդկանցից գովիստներ ընդունելով, այլ ինքդ քեզ կատարելագործելն ու կատարյալ դառնալը։

Ինչո՞ւ ես մտահոգվում քո մասին մարդկանց ունեցած կարծիքով, ինչո՞ւ ես ուզում շահել նրանց գովասանքը։ Ի՞նչ է, չե՞ս մտնի Աստծու Արքայությունը, մինչև մարդկի քեզ չերաշխավորեն։ Իմացիր, ուրեմն, որ ուրիշներից գովաբանված մարդկանցից շատերը պիտի նետվեն ծծումքով այրվող կրակել լիճը, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Վայ ձեզ, երբ բոլոր մարդիկ լավ խոսեն ձեր մասին» (Ղուկ. 6.26):

Մարդկանց գովասանքը ժամանակավոր է ու անցողիկ, քանի որ հենց իրենք հարափոփոխ են։ Մի ժամանակ նրանք Տեր Հիսուս Քրիստոսին որպես թագավոր էին ընդունում, բայց հետո աղաղակում էին. «Խաչ Հանիք Նրան, խաչ Հանիք Նրան»։ Մարդկանց գովասանքը սուտ է, քանի որ նրանք չգիտեն ողջ ճշմարտությունը։

Ահա մի հարց, որին քո տված պատասխան ինձ հետաքրքրում է. ինչպե՞ս ես քեզ գգում, երբ գովում են քեզ։ Զէ՞ որ դու գիտես քո ամոթալի, թաքուն արարքները։ Գովիստներ լսելիս մոռանո՞ւմ ես այդ մեղքերդ, որոնք իմանալու գեպքում գուցե քեզ դուրս անեկն, թե՞ ձևացնում ես՝ իրը մոռացել ես։ Գուցե, գտնում ես, որ դրանք չպե՞տք է խաթարեն գովիստի պարզեած ուրախությունը։ Ուրեմն, քեզ մտահոգում է միայն ամանի արտաքին կողմը։ Պարզապես, ուզում ես նմանվել սպիտակեցված գերեզմանի, որը դրաից գեղեցիկ է թվում, բայց ներսից ապականությամբ լցուն է։ Միակ մտահոգությունդ երկրային կյանքն է, ոչ թե՝ գալիքը։

Անկեղծ եղիք, իմ սիրելի եղբայր, ինքդ քո առաջ։ Նախ, ինքդ քեզ խոստովանիր, ապա՝ քո խոստովանահոր՝ դառնորեն ողբալով ու հառաչելով։ Այժմ տես, թե ինչ պիտի անես, երբ մարդիկ գովեն քեզ։

1. Նախ հիշիր, որ կեղծավոր մեկն ես, և որ քո արտաքինը տարբերվում է ներքինից։ Անկեղծորեն ինքդ քեզ ասա. «Ես մեղավոր ու գարշելի մեկն եմ։ Երբ նստում եմ խոստովանահորս առջե՝ ինձ շնորհազրկված եմ զգում, երբ հաշվում եմ մեղքերս՝ ստորացած եմ զգում, նսեմ ու ցած, և տեսնում եմ իմ խղճուկությունը, երբ աղոթքի եմ կանգնում, աչքերս երկինք բարձրաց-

նելու անարժան եմ զգում ինձ։ Ինչո՞ւ են, ուրեմն, մարդիկ ինձ գովում։ Գուցե ես երկերսանիք՝ եմ, որ մարդկանց ներկայանում է այլ կերպ, քան կա իրականում։ Կամ գուցե դերասա՞ն եմ։ Հավանաբար, այդպիսին եմ...»։

2. Գիտցիր, որ երբ մարդիկ գովում են քեզ, քո բաժինը երկրի վրա ես ստանում և կորցնում ես երկնքի վարձքը։ Այսինքն՝ կորցընում ես քո պսակը մի չնչին բանի համար։ Երբ քեզ գովեն, պետք է տիրես այն պսակի համար, որը կորցնելու վրա ես։ Այս սուրբ թախիծը կմաքրագործի քեզ ու հոգիր ավելի ազատ կդարձնի։

3. Երբ մարդիկ քեզ գովում են, իմացիր, որ դա կողոպուտ է. դու կողոպտում ես Աստծու փառքը և վերագրում քեզ, այնինչ Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Որպիսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. 5.16)։ Ուստի, երբ փառքը քեզ է վերագրվում՝ երկնավոր Հորը վերագրվելու փոխարեն՝ կողոպտած ես լինում Նրան՝ անկախ քո տեղյակ կամ անտեղյակ լինելուց։ Ուրեմն, երբ աղոթում ես՝ ասելով. «Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք...», կշտամբիր քո անձը, որն ուզում է փառավորվել և հակառակվել Աստծու զորությանը, քանի որ սաղմուն ասում է. «Ոչ թե մեզ, Տեր, ոչ թե մեզ, այլ Քո անվանը փառք տուր» (Սալմ. 113.1)։

4. Երբ մարդիկ գովում են քեզ, ուրացիր անձդ և նրանց ուշադրությունը բենոիր Աստծուն։ Առանց կեղծավորության ու համեստ ձևանալու՝ ասա նրանց, որ մեղավոր ու տկար մեկն ես, և Աստված է, որ արժանի է գովասանիք։ Նույն խոսքերը նաև քեզ ուղղիր ու համոզվիր, թե արդյո՞ք նորից չես փրկել հպարտությունից։

5. Երբ տեսնում ես, որ զրոյցը տանում է քո գովքին, փորձիր փոխել խոսակցության ընթացքը և մի ուրախացիր, այլ գոհանաւով, ամբողջ պատիվը վերագրիր Աստծուն։

6. Երբ մարդիկ գովում են քեզ, հիշիր Սուրբ Գրքի երկու գեղեցիկ տները, որտեղ ասված է. «Ես մարդկանցից փառք չեմ առնում», «Եթ Դու այժմ փառավորիր ինձ, Հայր, Քեզ մոտ եղող այն փառքով» (Ղուկ. 5.41, 17.5)։ Դրանք անգիր սովորիր և մտքումդ անընդհատ կրկնիր։

Ի վերջո, քանի որ սա է այն, ինչ պիտի անես, երբ մարդիկ քեզ գովեն, ուստի հարկ է, որ նման գովասանք չփնտրես ու չխնդրես։ Այս հարցին նորից կանգրադառնանք մեկ այլ հոդվածում, եթե Տերը կամենա, որ ապրենք։ Աղոթիր ինձ համար։

Իմ սիրելի եղբայր, մինչև չազատագրվես քո անձից,  39



## Քո անձը և մարդկանց վիրավորանքը

Իմ սիրելի եղբայր, մինչև չազատագրվես քո անձից, որին պաշտում ես Աստծու փոխարեն և որին մեծարում ես ու բարձրացնում, չես հասնի երբեք հոգու ազատագրման բարձունքին:

Նախորդ Հոգվածում մենք քննարկեցինք, թե ինչ պետք է անես, երբ քեզ գովում են: Իսկ հիմա կուզեի հարցնել. «Ի՞նչ ես զգում և ինչպես ես վարդում, երբ քեզ վիրավորում են կամ չեն հավատում»:

Հավանաբար, վիրավորվում ու վրդովվում ես, խոցվում է արժանապատվությունդ: Կարող ես անդամ վրեժինդիր լինել կամ պաշտպանել ինքդ քեզ: Ես չեմ ժխտում քո այդ իրավունքը, քանի որ ես էլ քեզ պես ունեցել եմ այդ բոլոր զգացմունքները... Սակայն եկ իրար հետ քննենք այս հարցը:

Ի՞նչ օգուտ քեզ բարկանալուց: Դա քեզ միայն անհանգստություն է պատճառում և բայցայում է նյարդերդ: Ավելին, այն քեզ զրկում է սրտիդ խաղաղությունից ու հանգստից: Զե՞ս հիշում Սուրբ Հակոբոս առաքյալի խոսքերը. «Որովհետեւ մարդու բարկությունը Աստծու արդարությունը չի գործում» (Հակոբ. 1.20):

Զայրույթն անձիդ հասցված վիրավորանքի համար, անկասկած, չենց այն զայրույթն է, որը նկատի է ունեցել Ս. Հակոբոս առաքյալը: Լուսմ եմ, թե ինչպես ես առարկում՝ նման բարկությունը մեղմացնում է քո ցավը և ելք է բացում ներսումդ զսպված հուզումին: Բայց ի՞նչն է նման զսպված հուզումի պատճառը, որ դուրս ժայթքելու կարիք ունի: Իհարկե, պատճառն ակնհայտ է՝ շատ ես մտահոգված քո անձով: Ազատվիր, իմ սիրելի եղբայր, այդ անձից և հանգստություն կունենաս:

Եթե մեկը քեզ վիրավորի, մի մտածիր քո մասին, որ վիրավորվել ես, այլ նրա մասին, ով վիրավորել է քեզ: Նա եղբայր է, իսկ դու՛ լինելով սիրով լիցուն հոգեոր մեկը, պետք է

մտածես, թե ինչ կարող ես անել քո դեմ մեղանչած այդ եղբորդ համար: Իհարկե, չես ուզում, որ իր թանկագին հոգին դժոխք իջնի, կամ որ քեզ վիրավորելը խոչընդոտ լինի նրա փրկության ճանապարհին: Ուրեմն, պետք է խնդրես Աստծուն, որ դա մեղք չհամարի և չպատի նրան դրա համար: Պետք է նաև աղոթես, որ Աստված ազատի նրան այս մեղքից, որպեսզի այլևս չգործի քո կամ ուրիշների հանդեպ: Երբ մտածում ես քեզ վիրավորած եղբորդ մասին, փորձիր հասկանալ, թե ինչը նրան դրդեց այդպես վարկելու: Գուցե հիվանդ էր կամ նյարդայնացած, միտքը խոռվված էր, ուժասպառ էր եղել կամ ծանրաբեռնված էր հասարական կամ ֆինանսական խնդրիներով: Մտածիր, թե ինչ կարող ես անել նրա համար: Գուցե, կարող ես մի գեղեցիկ ճամփորդություն կամ զբոսախնջույք կազմակերպել նրա համար, կամ էլ փորձես նրան որեւէ զվարճանքի ու ուրախանալու առիթ ընձեռել: Եթե գտնում ես, որ անկարող ես որեւէ բան անել նրա համար, գոնե կարեկցանք ցուցաբերիր և խնդրիր Աստծուն, որ հատուկ օգնություն ցույց տա նրան:

Մարդիկ, թանկագին եղբայրս, բնությամբ չար չեն, որովհետեւ երբ Աստված ստեղծեց մարդուն. «Ճեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ բարի է»: Իսկ չարը մարդկանց գալիս է դրսից, այն խորթ է նրանց...

Նրան՝ քեզ վիրավորել դրդելու ուրիշ պատճառ էլ կարող է լինել: Նա կարող է քեզ լավ հասկացած չլինել: Այս գեպքում պետք է նրան մեղմությամբ ու սիրով բացատրել: Սակայն կարող են և այնպիսիք լինել, ովքեր վիրավորում են հենց այնպես, քանի որ դա նրանց դուր է գալիս, հանդուրժողականությունիցդ օգտվելով, քեզ իրենց կատակերի և զվարճության առարկան են դարձնում:

Խուսափիր այսպիսիների հետ գործ ունենալուց կամ էլ նրանց հետ քաղաքավարի, բայց խիստ ու չոր վարպիր, որպեսզի ցույց տաս իրենց սիւաները և զգուշացնես, որ այլևս նման սիւաներ չանեն: Դա պետք է անես ոչ թե վրեժինդրությունից կամ անձնական արժանապատվությունդ պահպանելու նպատակով, այլ մեղանչած եղբորդ հանդեպ սիրուց դրդված: Դրանով նրան առիթ չես տա այդ մեղքը կրկնելու ու ինքն իրեն կործանելու...

Մեծ տարբերություն կա մեղավորին վրեժինդիր լինելու, որով քո հանդեպ նրա ցասումն ես բորբոքում, և սիրուց դրդված կշտամբելու միջև, զգացնել տալով, որ սիրում ես իրեն...

Այսքանը՝ քեզ վիրավորած մարդու հանդեպ քո վերա-



բերմունքի մասին, սակայն թույլ տուր փոքր-ինչ խորանալ քո  
անձի մեջ և քննել քո ներքին զգացողությունը:

1. Ինչո՞ւ ես ուրիշների խոսքերը վիրավորանք կամ նախատինք  
համարում: Ինչո՞ւ այն, ինչը վիրավորանք ես կարծում, չես  
ընդունում որպես քո վերափոխման համար ասված շիտակ խոսք:

Եթե դրա համար բարկանում ես, ուրեմն սիրում ես գովեստներ  
լսել և ուզում ես, որ բոլոր մարդիկ լավ խոսեն քո մասին: Պետք է  
ուրախանաս, եղայր, երբ մարդիկ քեզ քննադատում են կամ հան-  
դիմանում, քանի որ դա քո իսկ բարիքի համար է: Դա մաք-  
րագրծում է քեզ և արժանացնում գալիք կանքին: Երբ մեկը քեզ  
քննադատում է, ավելի շուրջ պետք է չնորհակալ լինես, քանի որ  
նրա ձայնը գուցե Աստծու ձայնն է: Նկատի ունեմ, որ քեզ սիրող  
Աստված այսպիսի մեկին կարող է ուղարկած լինել, որպեսզի քեզ  
հանդիմանի ու ցույց տա սիսալ արարքներդ:

2. Գուցե նման մարդկանց միջոցով Աստված հաղիմանում է  
քեզ՝ հեռու կամ մոտ անցյալում գործած մեղքերիդ համար: Երբ  
Դավիթ մարդարեն վիրավորանք լսեց, խոնարհաբար ասաց «Թո-  
ղեք նա այդպես անիծի, քանզի Տերն է ասել նրան, որ անիծի  
Դավիթն» (Բ Թագ. 16.10):

Իմ սիրելի եղայր, երբ մեկը քեզ վիրավորում է, անցյալ մեղ-  
քերդ հիշիր և իմացիր, որ դու կատարյալ չես՝ հանդիմանությու-  
նից վեր լինելու համար...

3. Երբեմն Աստված մի հաջող գործ է կատարում քո միջոցով,  
բայց դու, ինքոդ քեզ արդար համարելով, դա պարծենալու ու անձդ  
պաշտպանելու միջոց ես դարձնում: Ուստի, Աստված, որպեսզի  
չհարատանաս, ինչոր մեկին թույլ է տալիս, որ քեզ վիրավորի,  
ինչը գուցե ուշքի բերի քեզ և մի փոքր վանի հպարտությունդ:  
Շատերն, ում վիրավորում են, հպարտ են, մինչդեռ Աստվածա-  
շունչը սովորեցնում է մեզ, որ Աստված հեղերին բարձրացնում է  
աղբանոցից և նստեցնում է իր ժողովրդի իշխանների կողքին  
(Սալդ. 112.6-8):

4. Գուցե դու ինքդ ակամա վիրավորել ես մեկին, և դրա համար  
է նա էլ քեզ վիրավորում... Այդ պատճառով, լավ է իմանալ քեզ  
վիրավորանք հասցնողի տեսակետը:

5. Վիրավորանքը կարող է սիրո և համբերատարության դաս  
դասնալ: Հոգեսոր հայրերից մեկը առանձնության մեջ ապրող և  
եղայրների հետ չշփող մի վանականի մասին ասել է. «Եղ-  
բայրների հետ միաբանության մեջ լինելը կարեոր է վա-

նականի համար, որովհետեւ եթե նա չի կարող համբերությամբ  
տանել եղբայրների վեճերը, ինչպե՞ս կարող է տոկալ մենության  
մեջ դեերի հետ պատերազմներում»:

6. Ի՞նչ վնաս այն բանից, որ մեկը քեզ դատավիետում է կամ  
գտնում է, թե մեղավոր ես: Սա քեզ կիսանգարի՞ Աստծու արքա-  
յություն մտնել, կամ մի՞թե Աստված քեզ պիտի դատի ըստ մարդ-  
կանց ասածների:

7. Գուցե սիրու՞մ ես, երբ քեզ գովում են ու պատիվ են տալիս  
նրանք, ովքեր քեզ պես հողից են ստեղծվել: Բարեկամս, հիշիր քո  
Տիրողը, Ով «Վշտից իր բերանն անգամ չի բացում» ու «Հանցա-  
վորներին հավասար համարվեց» (Եսայի 53. 7,12):

Ի վերջո, իմ սիրելի եղայր, երբ զայրանում ես և խոցվում վի-  
րավորանքից, չնայած որ ինձ պես մեղավոր մեկն ես, հիշիր այն-  
ժամ, թե ինչպես ենք մենք վիրավորում Աստծուն, և թե ինչպես է  
Նա համբերում, սիրում ու ընդունում մեզ: Որքա՞ն ողորմած է  
Աստված: Նրա նմանը չկա աստվածների մեջ:





## Ազատագրվել անձից

Եթե դեռ մտահոգված ես, թե մարդիկ ինչպես կվերաբերվեն քեզ, և փորձում ես ամեն կերպ քո մասին լավ կարծիք ստեղծել, քեզ համար դժվար կլինի նվաճել հոգու ազատագրման բարձունքը:

Երբեմն մարդիկ քեզ չեն գովում կամ էլ մյուսներին ավելի շատ են գովում: Այս դեպքում, փոխանակ գոհանաս և ուրախանաս, որ սին փառքի դմբ գեռ չգիտի քո տեղը, տեսնում եմ, որ ուզում ես փորձանքի մեջ ընկնել: Վերսկսելով խոսել քո մասին՝ ասես, աղերսում ես մարդկանց գովասանքը, ինչը չի վայելում Աստծու որդու արժանապատվությանը:

Թույլ կտա՞ս, թանկագին եղբայր, սա ևս նույն անկեղծությամբ քննել քեզ հետ, ինչպես անում էինք:

1. Ինչո՞ւ ես ուրիշների հետ խոսում քո մասին: Ուզում ես, որ հիանա՞ն քեզանով: Ուրեմն, ասա ինձ անկեղծորեն, դու քո սրբում հիացա՞ծ ես ինքդ քեզնով: Անկասկած, շատ թերություններ կան քո մեջ, որոնց համար իսկապես անհանգստացած ես: Ուրեմն, ինչո՞ւ ես ուզում, որ մարդիկ փառավորեն այնպիսի մի անձնապության, ով, ինքդ էլ համոզված ես, արժանի չէ փառավորման:

2. Թույլ տուր հարցնել. քեզ հայտնի՞ է անձիդ իրական պատկերը: Թե՞ միայն լավ կողմերն ես նշում և անտեսում ամոթալի ու փառ կողմերը: Զգիտե՞ս, որ կես ճշմարտությունը դեռ ամբողջ ճշմարտությունը չէ: Արդ, արդյո՞ք քո մասին ասած խոսքիդ մեջ ինչ-որ չափով խաբեռություն ու սուտ չկա: Արդյոք, միայն պատկերի մի կողմը չե՞ս ներկայացնում թաքցնելով թերություններդ, որոնք դու լավ գիտես, և քո հոգեոր հայրը նույնպես գիտի:

3. Կասկած չկա, և դու նույնպես գիտես, որ «արժանիքներիդ» մասին խոսելը քեզ զրկում է վարձքից: Եվ անշուշտ, կարդացել ես Լեռան քարոզը, ուր Տերն ասում է. «Թող քո ձախ

ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը» և «...քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ Հայտնապես» (Մատթ. 6.3,4): Խղճում եմ քեզ, սիրելի եղբայրս, որովհետև ինչ-որ արժանիքի համար երկար պայքարում ես, բայց անխոհեմության պահին, երբ այդ անիծյալ արդարությանդ զգացումն է իշխում, գալիս է չարը և կողոպտում է պայքարիդ արդյունքը: Եվ ահա, քո ողջ աշխատանքն ի դերս է ելում: Այդ պահին նմանեցնում եմ քեզ մարդու, ով ինչ-որ բոյս է տնկել, բայց երբ Աստված պտուղ է պարգևում, նա փոխանակ բերքը հավաքելու և ուրախանալու, այն կրակի է մատնում, կամ էլ թողնում է, որ չարը քաղի այն իր համար:

Թանկագին եղբայրս, եթե երբեք քո մասին խոսելու ցանկություն գգաս, հիշիր աստվածային խոսքերը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձքը» (Մատթ. 6.2):

4. Մի անգամ ինչ-որ առիթով ոգեսրությամբ ու հիացմունքով խոսում էի երանելի մեկի մասին, ում սիրում ու հարգում եմ: Սակայն հոգեւոր հայրերիցս մեկն ասաց ինձ. «Խնդրում եմ, մի շարունակիր այս զրույցը, որովհետև դրանով նրա շուրջը պատերազմող դեեր ես հավաքում: Թող հանգիստ աշխատի, քանի որ գեռ սկսնակ է և շատ աղոթքի կարիք ունի»: Դրանից հետո զադարեցի խոսել, զգալով, որ այդ մարդու գեմ սխալ բան եմ արել:

Դեերը տանել չեն կարող, երբ մեկի մասին լսում են, թե որևէ բարի բան է անում: Ուստի, եթե Աստված քո միջոցով ինչ-որ մեծ բան է արել, թող դա գաղտնի մնա քո և Աստծու միջև: Մի խոսիր այդ մասին, որ չլինի թե գեերը նախատեն և պատերազմեն քեզ հետ, որի գեպքում ոչ միայն վարձքդ կկորցնես, այլև կներքաշվես ծանր պատերազմի մեջ, որի ելքն անհայտ է:

5. Մրանք մի քանիսն են միայն այն վնասակար հետևանքներից, որ կարող է բերել ինքն իր մասին խոսելու հակումը: Կարո՞ղ ես դրանց հակառակ որևէ դրական բան նշել հօգուտ ինքնազնիւթեատի: Եթե ինքդ քո մասին խոսելու մարմածը շատ է ճնշում քեզ, և դու չես կարող դրան գիմադրել, ուրեմն ուրիշներին պատմիր քո թուլության և թերությունների մասին: Պատմիր նրանց քո մեղքերի մեջ ընկնելու և այն մասին, թե ինչպես կնմանվեիր Սողոմի ժողովրդին, եթե չլիներ Աստծու օգնությունը: Համառեն խնդրիր նրանց, որ աղոթեն քեզ համար, գուցե Աստված ողորմի քեզ:

6. Մի բան էլ կա, որ ուզում եմ անկեղծորեն ասել



քեզ, թեև երկար վարանում էի մինչև ականջիդ շնչալը. մարդիկ գարշում են նրանից, ով իր մասին շատ է խոսում: Նրան պարծենկոտ և ինքնահավան են համարում: Այսպիսով, նման մարդը ոչ էրկինքը և ոչ էլ երկիրը չի շահի:

7. Վերջում ուզում եմ հիշեցնել, որ այն գործերը, որոնցով պարծենում ես, միայն քո ջանքերի արդյունք չեն: Կան կողմնակի հանգամանքներ, որոնք քեզ օգնել են դա անել, դրանցում մեծ է ուրիշների ունեցած և Աստծու՝ քեզ տված կարողությունների գերը:

Անկասկած, չափազանցրած կլինես, եթե այս ամենը քեզ վերապես՝ մոռանալով, որ Աստված է գործում քո միջոցով:

Վախենում եմ, որ անկեղծությամբս նյարդայնացրեցի քեզ, իմ սիրելի եղբայր: Ուրեմն, ներիր թուլությունս և աղոթիր ինձ համար:




## ՁՌ անձն Աստծու Երկայնության մեջ

Սիրելի եղբայրս, նորից ուզում եմ քեզ հետ խոսել քո անձի մասին, որին երբեմն ավելի ես սիրում ու վստահում, քան  
Աստծուն: Մինչև չուրանա քո անձը, չես հասնի հոգու աղատագրմանը:

Ինչպես սերը քրիստոնեության մեջ առաջին պատվիրանն է, այնպես էլ անձնուրացությունը սիրուն տանող հիմնական շավիղն է: Չես կարող սիրել Աստծուն և մարդկանց, քանի դեռ միայն քեզանով ու քո ցանկություններով ես տարված: Ուրեմն, նախ ազատագրվիր անձիցդ, քանի որ Աստված (Փառք իրեն) ասում է. «Եթե մեկը կամենում է գալ իմ հետեւից, թող ուրանա իր անձը, թող վերցնի իր խաչը և գա իմ հետեւից» (Մարկ. 8.34):

Ուրեմն, անձնուրացությունը Տերը դարձրել է առաջին պայմանը: Իմ սիրելի եղբայր, թող քո նպատակը լինի անձդ Աստծու մեջ պահելը, այնպես որ, իրենից ազատ, անկախ գոյություն չունենաս: Ս. Պողոս առաքյալի հետ ասա. «Բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2.20):

Եթե ուզում ես փառք ունենալ, թող քո փառքն Աստծուց լինի, միշտ կրկնիր այն տունը, որ ասում է. «Եվ դու այժմ փառավորիր ինձ, Հայր, Քո մոտ եղող այն փառքով» (Հովկ. 17.5): Աշխարհային բաների մեջ փառք մի փնտրիր, որովհետեւ «Թե այս աշխարհն է անցնում, թե՝ ցանկությունը» (Ա. Հովկ. 2.17): Բայց դու Աստծու որդի ես. «Աստծու տաճար եք դուք, և Աստծու հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա. Կոր.): Դու ծնվել ես «ոչ արյունից, ոչ մարմնի կամքից և ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց» (Հովկ. 2.13): Քո հոգին Աստծուց է, իր բերանի շումչն է: Ամեն Պատարագի ժամանակ ընդունում ես Աստծու Սուրբ Մարմինն ու Արյունը, որպեսզի իր ուզածի պես մի լինես իր հետ և բնակվես իր մեջ: Ինչո՞ւ ես, ուրեմն, արհամարհում այսպիսի մեծ



փառքը և ուրիշը փնտրում հողի մեջ: Ինչո՞ւ ես մտահոգվում, թե մյուսներն ինչ են խոսում քո մասին, ինչո՞ւ ես գոհ մնում, երբ մարդիկ քեզ գովում են, կամ պաշտպանվում, երբ քեզ քննադատում են: Ինչո՞ւ ես նրանց հավանությունն աղերսում: Եղբայրս, վախենում եմ, որ դեռ սիրում ես հողը և իր փառքը: Քո անձը կո՞ւրք է դեռ, որին զոհեր ու ընծաներ ես մատոցում: Ուրացիր անձդ, թանկագինս, և քո ամբողջ սերը միայն Աստծուն տուր: Հովհաննես Մկրտչի հետ ասա. «Պետք է, որ նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ» (Հովհ. 3.30): Լսում եմ, որ մրժմըրթում ես՝ չեմ ուզում նվազել: Ուրեմն, իմացիր, որ քո անբծությունն աղտոտող մրուրից ու քեզ կպած հողից բացի ուրիշ ոչինչ չես կորցնի: Պետք է ապատես քեզ այս փառքից և այնպես մաքուր դառնաս, ինչպես Աստված է քեզ ստեղծել և ինչպիսին ուզում է, որ միշտ լինես:

Սա վերաբերում էր ուրիշների հետ ունեցած քո հարաբերություններին, սակայն ես ուզում եմ քեզ հետ խոսել այն մասին, թե ինչպես ես վերաբերվում ինքդ քեզ և ինչպես պետք է կանգնես Աստծու ներկայության մեջ: Եթե հոգիկ ազատագրել ես ուզում, Աստծու առջև որպես ոչինչ կանգնիր: Ուրացիր, ինչ գիտելիք կամ իմաստություն որ ունես, ուրացիր քո խելքն ու փորձառությունը: Աստծու ներկայության մեջ ոչինչ չիմացող անդրագետ մարդու պես կանգնիր: Ասա նրան. «Տեր, ես արտաքինից եմ դատում: Տկար եմ և չեմ կարող դիմակայել դևերին: Ամեն գործի արդյունք քո ձեռքում է»: Խնդրիր Աստծուն, որ միջամտի ու հոկի քեզ, բնակի քո մեջ և գործի քո միջոցով: Հետո, երբ իննդրանքդ կատարի, գոհացիր Աստծուց, որովհետև նա է արել դա, ոչ թե դու: Եվ երբ մարդիկ ուզեն քեզ գովել, մի հապատացիր, խոնարհ մի ձևացիր, այլ առիթն օգտագործելով, նրանց համար երգիր այն սաղմուր, որն ասում է. «Եթե Տերը մեզ հետ չլիներ - թող ասի Խարայելը, - եթե Տերը մեզ հետ չլիներ, մարդիկ մեզ վրա հարձակվելով՝ մեզ ողջ-ողջ կուլ կտային, ...և ջրերն անդամ մեզ կընկըն-մեին, երբ մեր հոգիներն անցան հեղեղի միջով» (Սաղմ. 123.1,4):


Երբ պատերազմում ես ինչ-որ մեղքի դեմ, մի ապավինիր քո գորությանը, և մի նայիր նախորդ հաղթանակներիդ, քանի որ մեղքը «շատերին է դիտապաստ արել, և անթիվ են նրա կողմից սպանվածները» (Առակ. 7.26): Այլ համոզված եղիր, որ հաղթանակն Աստծունն է, և եթե նա թողնի քեզ թեկուզ ամենաթեթև մեղքերի մեջ, կնմանվես Սողոմի ժողովրդին:

Ուրեմն, երգիր այն գեղեցիկ սաղմուր, որն ասում է.

«Տեր, իմացար շավիղներն իմ, այն ճանապարհին, որով գնում էի, ծածուկ որոգայթ լարվեց իմ դեմ: Նայում էի աջ ու տեսնում, որ ոչ ոք ինձ չի ճանաչում. փախչելն ինձ համար անհնար դարձավ, և չկար մեկը, որ փնտրեր ինձ: Քեզ կանչեցի, Տեր, ու ասացի. «Դու ես իմ հույսն ու իմ բաժինը ողջերի երկրում: Ազատիր ինձ իմ հալածիչներից, քանզի նրանք ինձանից հզոր եղան» (Սաղմ. 141.4-7):

Իմ սիրելի եղբայր, դու ոչինչ ես և սա պետք է լնդունես Աստծու և քո առջեւ: Երբեք, եթե մտածես, որ կարող ես ինչ-որ բան անել, ինքոք քեզ ասա. «Ես ո՞վ եմ, որ գնամ եգիպտացիների արքա փարավոնի մոտ և իսրայելացիներին հանհմ եգիպտացիների երկրից» (Ելք 3.11):

Սակայն, եթե Աստված քեզ հավաստիացնի, որ ինքը կլինի քո բերանը և կխոսի քո միջոցով, և որ դու պարզապես գործիք կլինես, ուրեմն, շարունակիր ճանապարհգ: Թեկուզ մահվան ստվերի ձորի միջով էլ անցնես, չարից չես վախենա, և թեկուզ զորք էլ ենի քո առջև, համարձակ կլինես: Այդ ժամանակ հիշիր ինձ, անմաքուր հողիս, որ հանդիպենք իրար... այնտեղ:





## Ազատազրվել երկրային ցանկություններից

Գիտե՞ս, թե ինչից պետք է խուսափես: Խուսափիր հետաքրքրություններից, հույսերից ու ցանկություններից, եթե իսկապես ուղղում ես ձեռք բերել հոգու աղատագրում:

Իմ սիրելի եղբայր, թույլ տուր ավելի խորանալ սրտիդ մեջ՝ քեզ հետ անկեղծ զրուցելու համար: Դու մեծ հույսեր ունես, որոնց մասին շատ ես մտածում, և որոնք զբաղեցնում են սրտիդ մի մասը: Դրանք զբաղեցնում են քո երեակայությունը, և երբ մենակ ես լինում, անրջում ես դրանց մասին, իսկ երբ քնում ես, դրանք երագում ես տեսնում: Որոշակի նպատակներ ունես: Ուղղում ես շատ կարեոր մեկը լինել, որպեսզի մարդիկ քեզ ճանաչեն ու հարգեն: Հույսեր ունեմ՝ կապված հոչակի ու բարի համբավի, հեղինակության ու իշխանության հետ, հույսեր՝ կապված հարստության, հասարակական դիրքի, գիտելիքի, տիտղոսների, ապագայի, վայելչության ու պատվի հետ: Ունես ցանկություններ՝ կապված բնակության վայրի, ուտելիքի, հագուստի և մարմնի տարբեր վայելքների հետ: Դու չես, որ ապրում ես աշխարհում, այլ իրականում աշխարհն է ապրում քո մեջ և իշխում սրտիդ, մտքիդ, երեակայությանդ ու կամքիդ վրա: Ինչ վերաբերում է հոգուդ, նա այս ամենի մեջ բանտարկված է, նա ցանկանում է աղատագրվել մարմնական ցանկություններից, քանի որ «մարմինը Հոգու հակառակն է ցանկանում» (Գաղ. 5.17):

Այս հույսերն ու ցանկությունները քեզ թշվառ են դարձնում, սիրելի եղբայրս, որովհետեւ դրանցից ոչ բոլորը կարելի է ձեռք բերել: Սա, իհարկե, գարձնում է քեզ դժոռհ: Դու փափառում ես այս բաները, և այդ փափառը քեզ դժբախտացնում է: Միջոցներ ես ձեռնարկում՝ դրանք ձեռք բերելու համար. մտածում ես, որոշակի անձանց ես հանդիպում, թղթեր ես գրում, գնում ես, գալիս ես, խիստ պայքարում ես ու փորձում, հետո նստում ու



սպասում ես: Կարող է՝ ձանձրանաս ու հոգնես սպասելուց և հուսալուց, կարող է հուսահատվես ու անհանգստանաս կամ էլ՝ վախենաս անհաջողությունից: Այսպես, գու դառնում ես դժբախտ, և գուցե աշխատանքդ ու ջանքերդ էլ ոչնչով չեն պսակվում, և դու ձեռք չես բերում այն, ինչ ուղղում էիր, ու դա քեզ ավելի է դժբախտացնում:

Առավել վտանգավորն այն է, որ կարող ես մողորվել այս հույսերի ու ցանկությունների պատճառով և ընկնել խարենության, ստորագրչության և չողոքորթության, ստախոսության կամ առավել վատթար բաների մեջ: Սրա մասին է իմաստուն մարդկանցից մեկը մի անդամ ասել. «Սարդն անպայման կեղծակվորության մեջ կընկնի, եթե ուղղում է ինչ-որ բան թաքցնել իր մեջ»:

Գիտեմ, որ հոգնել ես, և խղճում եմ քեզ: Սակայն մինչև ե՞րբ պիտի ապրես հույսերի բովում: Այս աշխարհիկ ցանկությունների հետ կապված զարմանալին այն է, որ դրանք քեզ դժբախտացնում են, նույնիսկ, երբ իրագործիվում են: Որովհետեւ, երբ ուղածդ ձեռք ես բերում, գոհ ես լինում, և այդ գոհությունն առաջնորդում է քեզ ավելին փնտրելու, ինչպես Տեր Հիսուս Քրիստոսն է ասում. «Ով որ այս ջրից խմի, նորից կծարավի» (Հովհ. 4.13): Երբ մեկը ծարավ է ջուր է փնտրում իր ծարավը հագեցնելու համար, և որքան խմում է, այնքան ավելի է ծարավում ու ջուր ցանկանում: Ուստի, իմ սիրելի եղբայր, ուղղում եմ քեզ հետ հանգիստ քննել այս հարցը: Ինչո՞ւ ես ամուր կառչում որոշ աշխարհային ցանկություններից, երբ գիտես, որ «Թե այս աշխարհն է անցնում, թե ցանկությունը» (Ա. Հովհ. 2.17): Դու էլ ինձ պես պանդուխտ ես երկրի վրա, և պիտի գա ժամը, երբ պիտի թողնես աշխարհն ու նրա ունեցվածքը: Ինչպես որ մերկ գուրս եկար մորդ որովայնից, այնպես մերկ էլ կվերադառնաս (Հոր 1.21): Ստիպված կլինես թողնել աշխարհն իր փառքով, հարստությամբ ու հոչակով և բոլոր մարդկանց պես իջնել երկրի գուրբը: Ինչ հեղինակություն, հոչակ ու վայելքներ էլ որ ձեռք բերած լինես այս աշխարհում, դրանք քո մահկանացու մարմինը չեն պաշտպանի քայլքայումից, ոչ էլ կարգելեն որդերին մարմնովդ կերակրվել: Դատաստանի օրը Աստծու առջե երկրային ամեն ունեցվածքից գուրկ պիտի կանգնես: Աշխարհից ոչինչ չես տանի, բացի գործերից՝ լինեն դրանք բարի կամ չար:

Ուստի, սիրելի եղբայրս, պետք չէ հետաքրքրություններն ու հույսերը կապել այս աշխարհի հետ: Չե՞ս հիշում, որ այս երկրը քեզ համար փուշ ու տատասկ բուսեցրեց: Այն ար-



դար Աբելի արյունն է ընդունել, և նրա մեջ փորփած ծակ փռսերը չուր չեն կարող պահել (Եր. 2.13):

Սուրբ Հայրերից օրինակ վերցրու, ովքեր մեզանից առաջ ապրեցին երկրի վրա, և որոնց այս աշխարհն արժանի չէր: Այդ սուրբ Հայրերը սրբություն ձեռք բերեցին միայն այն ժամանակ, երբ իրենց սրտերը դատարկեցին աշխարհի և աշխարհային բաների սիրուց: Նրանք այլևս ցանկություն կամ կիրք, ոչ էլ այս աշխարհում ունեցվածք չունեցան: Եվ քանի որ նրանք աշխարհում ոչնչի հետ չկապվեցին, նրանց համար հեշտ եղավ թողնել այն, նրանք նույնիսկ փափագում էին դա: Ինչ վերաբերում է քեզ, իմ սիրելի եղբայր, դու գեռ աշխարհային ցանկություններ ունես, իսկ «Ուր ձեր գանձերն են, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6.21): Սիրտդ կառչում է հողից և դրա փառքից, այնպես որ, հոգեոր բաներն իրենց արժեքը կորցնում են աչքիդ: Սա այն նույն փորձությունն է, որով սատանան ուզեց փորձել փառաց Տիրոջը. «Սատան նորից նրան առավ-տարավ մի շատ բարձր լեռան վրա և ցույց տվեց նրան աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը և նրան ասաց. «Այս բոլորը Քեզ կտամ, եթե գետնին ընկնելով ինձ պաշտես» (Մատթ. 4.8,9):

Այժմ մտածիր. եթե ունենաս այս ամենը, բայց կորցնես հոգիդ, որին բանտարկել ես ցանկություններիդ ոսկե վանդակում, ի՞նչ կշահես:

Քո հոգին ուզում է ազատ արձակվել:





Հինգ զգայարաններիդ չափազանց շատ ես վստահում, և եթե հոգիդ ընդդիմանում է, հոգիդ ես մերժում: Ե՞րբ պիտի դադարես միայն զգայարաններով առաջնորդվելուց ու համես հոգու ազատագրմանը:

Հավատում ես միայն նրան, ինչը տեսնում ես աչքերովդ, լսում ականջներով կամ շոշափում ձեռքերով: Մնացած ամեն ինչը կասկածի տակ ես առնում: Ի՞նչն է սրա պատճառը... Պատճառը պարզապես այն է, որ դեռ ապրում ես մարմնի մեջ և վստահում մարմնին ու նրա զգայարաններին:

Երբ շուրջդ նայելով տեսնում ես, որ ականատես չկա, անում ես բաներ, ինչը կիսուսափերի անել ուրիշների ներկայությամբ: Բայց իսկապե՞ս կարծում ես, թե քեզ ոչ չի տեսնում: Կան աչքեր, որոնք կարելցանքով ու դատապարտությամբ քեզ են նայում: Դու այդ աչքերը չես տեսնում, քանի որ դեռ ապրում ես մարմնի մեջ: Այդ աչքերը, որ միշտ հետևում են քեզ, Աստծուն են: Եթե Հոգու մեջ լինես, քո թերի զգայարանների գերությունից ազատագրված, այնժամ Եղիսա մարգարեի հետ միասին կիարողանաս ասել. «Կենդանի է գորությունների Տերը, որի առջև կանգնած եմ...» (Դ Թագ. 18.15):

Երբ շրջապատված ես լինում վտանգներով և աջ ու ձախ նայելով համոզվում ես, որ մենակ ես, սարսափում ես... Իրականում Աստված քո աջ կողմում է, որպեսզի չսասանվես (Գործք 2.25): Դու Նրան չես տեսնում, քանի որ աչքով ամեն ինչ չես տեսնի, աչքերդ նյութական լինելով, չեն կարող տեսնել հոգերը: Թանկարդին Եղբայր, ես ցանկանում եմ, որ դու ապատագրես քո հոգին այս մարմնավոր զգայարանների գերությունից: Հոգիդ «...քննում է ամեն ինչ, նույնիսկ՝ Աստծու խորունկ ծրագրերը» (Ա Կոր. 2.10):



Ուրեմն, ճախրիր գրանցից ազատագրված, որպեսզի Աստծուն տեսնես քո աջ կողմում և ուրախությամբ շնչաս. «Եթե

նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. 2.5):


Եեղծ Գեեղին, Եղիսեի ծառան, տեսնելով մոտակայքում թշնամու անթիվ-անհամար զորքը, շատ վախեցավ: Իրադրությունն անհույս էր: Բայց Եղիսեն, որ հոգով էր ապրում, հաստատ էր: Նա հոգով տեսնում և լսում էր այնպիսի բաներ, որոնք ոչ մի աչք չէր կարող տեսնել և ոչ մի ականջ չէր կարող լսել: Եվ խղճալով երիտասարդին, աղոթեց, որ Տերը բացի նրա աչքերը: «Տերը բացեց նրա աչքերը, և նա տեսավ, որ Եղիսեի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառով» (Դ Թագ. 6.17): Այսպես ծառան քաջալերվեց:


Մի փատահիր քո զգայարաններին, քանի որ նրանք ի զորու չեն ընկալել հոգերոր: Միդոնի Սարեկիթա քաղաքի այրին մարմնավոր աչքերով միայն մի բուռ ալյուր էր տեսնում սափորում և մի քիչ յուղ՝ կմի մեջ: Նա կարծում էր, որ դրանք որդու և իր համար միայն մեկ հաց թիւելու կրավարաբեն, որից հետո իրենք սովամահ կլինեն: Բայց Աստծո մարդը՝ Եղիսեն, հոգով ավելին էր տեսնում: Նա տեսնում էր, որ ոչ սափորի ալյուրը և ոչ էլ կմի յուղը չեն վերջանա, ինչքան էլ որ օգտագործվեն: Իրականում այսպես էլ եղավ, ինչպես տեսնում ենք Գ Թագ. 17.14-16 տներում:

Եղիսեն կանգնած էր Հորդանան գետի ափին: Նրա մարմնավոր աչքերը տեսնում էին սովորական մի գետ, որը եթե փորձես քայլելով անցնել՝ կիսեղգվես: Բայց իր հոգու աչքով ավելին տեսավ. տեսավ, որ Հորդանանի վրայով կարելի է անցնել, ինչպես գետնի վրայով: Եվ Եղիսեն վերցրեց Եղիսայի վերարկուն, որն ընկել էր նրա վրայից հրեղեն կառքով երկինք վերանալու ժամանակ, ու հարվածեց ջրին: Ջրերն իրարից հեռացան, և Եղիսեն անցավ գետը (Դ Թագ. 2.14): Սարմնավոր աչքը Եղիսայի վերարկուն կընկալեր որպես սովորական մի վերարկու, սակայն Եղիսեն հոգով տեսավ, որ այն ոչ թե լոկ հասարակ հագուստ է, այլ Աստծուց արված մեծ զորություն:

Թանկարդին բարեկամ, քո աչքերը բավական չեն նույնիսկ նյութականը տեսնելու համար, որովհետև կան բաներ, որոնք չես տեսնում: Աչքն անկարող է տեսնել դրանք, թեև նյութեղեն են և երևում են մանրադիտակի օգնությամբ:

Եթե ձեռքիդ տակ մանրադիտակ չկա, կժխտե՞ս դրանց գոյությունը միայն այն պատճառով, որ անգեն աչքով չես տեսնում: Եվ եթե նյութականը տեսնելն է այսպես դժվար, էլ ո՞ւր մնաց հոգերոր: Ուրեմն, հոգեւորին նախապատվություն տուր, թող հոգիդ քեզ առաջնորդի, և մի սափորի, որ այն ընկրկի մարմնի առաջ:






Թող հոգիդ ճախրի ազատորեն և թևածի աստվածայինի աշխարհում, ինչպես ասված է. «Երանի նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հոգհ. 20.29):

Անշուշտ, սիրելի եղբայր, լսել ես տեսիլքների մասին, երբ հոգին թևածում է հրեշտակների և սրբերի աշխարհում ու տեսնում է այն, ինչ ոչ մի մահկանացու չի կարող տեսնել: Նման դեպքերում հոգին ազատագրվում է մարմնի ազդեցությունից և մարմնի անդամներն օգտագործում միայն հոգևոր վերելքի համար: Հետևաբար զգայարաններն են ենթարկվում հոգուն և ոչ թե հոգին՝ զգայարաններին: Մի օր մեկն ինձ ասաց, որ լսել է, թե ինչ-որ եկեղեցում Ս. Գևորգն է հայոնվել, բայց ինքը զրան չի հավատացել: Գնացել է, որպեսզի անձամբ տեսնի և փաստի, որ գա պարզապես կեղծ մնահավատություն է: Գնացել է և ոչինչ չի տեսել:

Չեմ ուզում որևէ մեկնաբանություն տալ այս պատմությանը, բայց իմ կարծիքով նա և իր նմանները չեն կարող որևէ տեսիլք տեսնել իրենց տկար հավատքի պատճառով: Նրանք ցանկանում են հոգևորը ենթարկել մարմնի զգայարաններին, մինչդեռ Աստված միայն հոգևորներին է հայտնում իր Արքայության խորհուրդները:





Սա է առաջին խոսքը, որն անհատը պետք է ասի, եթե ցանկանում է հասնել հոգու ազատագրմանը:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ ոչ մի ցանկալի բան չունի աշխարհը, այլ միայն փորձություններ՝ դարձի ճանապարհը բռնողների համար: Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ աշխարհը չափազանց աղքատ է ինձ-որ բան տալու համար: Եթե այն, ինչ ուզում եմ, ճնարակոր լիներ ճեռք բերել աշխարհում, ապա աշխարհը կվերածվեր երկնքի: Բայց ինչպես տեսնում եմ, այն դեռ երկիր է, իսկ ես երկնավորն եմ փնտում, Հոգունը, Աստծոնը:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ ես աշխարհից չեմ: Ես հող չեմ, ինչպես կարծում են ոմանք. ես Աստծու շոնչն եմ: Հավիտենականության մեջ ես Աստծու հետ էի, և Աստված ինձ դրեց երկրում: Բայց շուտով այն պիտի լքեմ և վերադառնամ Աստծու մոտ: Եվ, ուրեմն, այս աշխարհից ոչինչ չեմ ուզում. «Ելա Հորից ու եկա աշխարհ. դարձյալ թողնում եմ աշխարհը և գնում Հոր մոտ» (Հովհ. 16.28):

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ իմ ուզածը դրանից գլուխ արծացնելն է, ազատագրվելը մարմնից ու երկրից: Ուզում եմ վերադառնալ Աստծու մոտ, ուր և էի առաջ, նորից լինել սուրբ շոնչ, որն աշխարհայինով պղծված չէ: Աշխարհից ոչինչ չեմ ուզում, որովհետև հավերժական, անմահ բաներն եմ փնտում, իսկ աշխարհը ոչ մի անմահ բան չունի: Այն ամենը, ինչ կա աշխարհում, անցողիկ է, նույնիսկ աշխարհն ինքը պիտի անցնի և վերանա: Ես անցողիկ բաներ չէ, որ փնտում եմ:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ կա նա, Ումից խնդրում եմ, Նա, Ով հարուստ է և զորեղ, Ում մեջ ես գոհացում եմ գտել և Ում չնորհիվ ոչնչի կարիք չունեմ: Նա տալիս է նախքան իմ խնդրելը, տալիս է այն, ինչը բարի և օգտակար է ինձ



համար: Ինչ ինձ իր ճեռքն եմ հանձնել, աշխարհի կարիքը չեմ ունեցել:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ ոչ թե իմ շահի համար է աշխարհն ինձ որևէ բան տալիս, այլ՝ իրեն հպատակեցնելու: Նրանք, ովքեր աշխարհի տվածը վերցրել են, դարձել են աշխարհի ստրուկները: Տվել է նրանց մարմնի հաճույքներ՝ զրկելով հոգու անբիծությունից: Տվել է աշխարհի վայելքներ՝ զրկելով երկնային Արքայության օրհնություններից: Սատանան նրանց տվել է աշխարհի բոլոր թագավորությունները և դրանց փառքը, որպեսզի իր առջև խոնարհեցնի ու երկրպագել տա իրեն: Նա ամեն միջոցի դիմում է, որպեսզի կորսայան մատնի մարդկանց հոգիները: Ինչ վերաբերում է ինձ. «Ամեն ինչից զրկվեցի, և այդ բոլորը աղք եմ համարում, որպեսզի շահեմ Քրիստոսին» (Փիլ. 3.8):

Այս աշխարհն ավելի շատն ու ավելի լավն է վերցնում, քան տալիս է: Իրեն տենչացողներին նա իրեն է ենթարկում: Ուրեմն, ես ոչինչ չեմ ուզում նրանից:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ վեր եմ նրանից: Ես Աստծու որդի եմ, Աստծու նմանությամբ և պատկերով, ես Սուրբ Հոգու տաճար եմ և Աստծու բնակարան: Ես միակ արարածն եմ, ով ճաշակում է Նրա Սուրբ Մարմինն ու Արյունը: Ես ավելի վեր եմ կանգնած, քան աշխարհը, և ավելի ճիշտ կլինի ասել, որ աշխարհն ինձնից սպասելիք ունի, քանի որ ես ունեմ երկնքի և երկրի բանալիները: Ես, ում Աստված իր անսահման ողորմածությամբ կամեցավ գարձնել աշխարհի լույսը և երկրի աղք (Մատթ. 5.13,14): Աշխարհից ոչինչ չեմ ուզում, որովհետև միայն Քեզ եմ ուզում. Քեզ, որ մինչև վերջ ինձ սիրեցիր և Քո անձը տվեցիր ինձ համար, որ ինձ ոչնչից ստեղծեցիր և փոխարենը չպահանջեցիր Քեզ ծառայել, այլ ավելի շուտ, ես Քեզանով զեկավարվելու կարիքն ունեմ:

Դրա համար է, որ ուզում եմ ազատագրվել աշխարհից և միանալ Քեզ, որ Քեզ ճանաչելու շնորհն ես տվել ինձ:





## Սովորել Աստծուց

Կամ մարդիկ, որոնք ոչ մի կը թություն չեն ստացել, մյուսները, թեկուզե ուսանել են մարդկանցից, բայց նույնպես անգետ են... Սակայն խակապես կիրթ մարդիկ նրանք են, ում սովորեցնում է Աստված Ինքը:

Աստված մարդուն ստեղծելիս նրան շատ գիտելիքներ տվեց, իսկ երբ վերջինս կարիք էր ունենում ավելին իմանալու, Աստված ինքն էր սովորեցնում նրան: Եթե մարդն այս ճանապարհով ընթառար, ավելի կիմաստնանար և կարժանանար կենաց ծառի պտղից ճաշակելուն ու հավերժական կյանքին: Սակայն մարդը նախընտրեց ոչ թե Աստծուց, այլ ուրիշ աղբյուրից գիտելիք ստանալ: Առաջին գասն ստացավ օձից, որի արդյունքում ճաշակեց գիտության ծառից և վտարվեց դրախտից... Սակայն, Աստծուց հեռու, մարդը ձգտում է գիտելիքի, և միայն տգիտություն է ավելացնում տգիտության վրա:

Մարդն Աստծու տաճար է և Աստծու Հոգին բնակվում է նրա մեջ, այն Հոգին, Ում մասին Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Նա ամենայն ծշմարտությամբ կառաջնորդի ճեղ» (Հովհ. 16.3), իսկ Ս. Պողոսը, թե. «Հոգին քննում է ամեն ինչ. նույնիսկ Աստծու խորունկ ծրագրերը» (Ա. Կոր. 2.10): Սակայն մարդն իր մեծ թշվառության և տգիտության պատճառով, ոչ թե իր ներսում է փնտրում գիտությունը, իր մեջ բնակվող Աստծու Հոգուց, այլ իրենից դուրս, մարդկանց և գրքերի մեջ՝ կարծելով. թե դրանք իրեն կյանք կպարգևեն...

Այսպիսով, մարդկանց մեջ շատ գիտնականներ ու իմաստուններ կան, այնինչ Աստծու տեսանկյունից այս աշխարհի իմաստությունը հիմարություն է: Ս. Օգոստինոսը երկար ժամանակ բոնել էր իրենից դուրս Աստծուն փնտրելու ճամփան, իսկ երբ գտավ Աստծուն, երգեց այս անմահական երգը. «Որքան ուշ եմ

Քեզ սիրել, ով այսքան հին ու այսքան նոր Արդարություն: Որքան ուշ եմ Քեզ սիրել: Քանի որ, ահա Դու ներսում էիր, իսկ ես՝ դրսում, և այնտեղ էի Քեզ որոնում: Ես՝ եղելիս, գլուխս կորցրած վազում էի Քո ստեղծած հրաշալիքների ետևից: Դու ինձ հետ էիր, բայց ես Քեզ հետ չեմ»\*:

Երբ Օգոստինոսն իր ներսում գտավ Աստծուն, դարձավ սուրբ... Դու նույնպես, իմ սիրելի եղբայր, կշեղիս ճանապարհից, եթե Աստծուն փնտրես քեզանից գուրք: Առանձնացիր, խորհիր, քննիր քո ներսը: Դու Նրան կդանես այնտեղ, հոգուդ ամենախորունկ անկյուններում: Դու Նրան կտեսնես գեմ առ դեմ, և հորդացող ու լեցուն սիրո հոսքի պես կզգաս Նրան: Միայն այն ժամանակ լուռ ուրախությամբ, մեծ զարմանքով կաղաղակես՝ ես տեսել եմ Աստծուն: Այս միջոցին են դիմել մեր սուրբ հայրերը: Նրանք դուրս են եկել աշխարհից, իրենց ետևում թողնելով ամբոխը, իրարանցումն ու աղմուկը: Ամեն ինչ թողնելով, նրանք իրենց մեջ են փնտրել Աստծուն և անդադար գովերգելով ու խոկումով են կարողացել տեսնել Նրան: Դրան հակառակ, գաղափարախոսները, փիլիսոփաները, հետազոտողներն ու գիտնականները Աստծուն փնտրում են գրքերում ու մարդկանց մեջ և միայն տառապանք են գտնում:

Նրանց մասին խոսելիս ես ցավ եմ զգում, ինչպես նաև որոշ հայրերի համար, ովքեր աշխարհը թողնելով՝ անապատ հեռացան, սակայն այնտեղ Աստծուն սկսեցին փնտրել գրքերում կամ ծառայության մեջ: Իրականում, Աստված իրենց պրտերի մեջ էր և ցանկանում էր, որ նրանք, բոլոր այս զբաղմունքները թողած, իր հետ լինեն: Ուզում էր նրանց հայտնել գաղտնիքներ, որոնք ոչ ոք չգիտի և ցույց տա բաներ, որ ոչ մի աչք երբեք չի տեսել:


Սա ոչ միայն վանականներին, այլև բոլոր մարդկանց է վերաբերում: Գիտե՞մ արդյոք, թանկագին եղբայր, հոգեւոր կրթության ծշմարիտ ուղին: Դե, իհարկե, գա ինչ-որ մեկին ինչ-որ բան սովորեցնելը չէ, քանի որ նրա մեջ բնակվող Հոգին շատ ավելին գիտի, քան քո սովորեցնելիքն է: Ծշմարիտ կրթությունն անհատին իր ուղեցած սխալ գիտելիքներից ազատելն է, այն գիտելիքներից, որոնք նա ստացել է աշխարհից ու մարդկանցից:

Երեխան ծնվում է՝ իր սրտում, մաքում ու պատկերացման մեջ ունենալով Աստծու մասին գեղեցիկ գաղափարը: Հետո հասարակությունն ակսում է խեղճ երեխային սովորեցնել ու մատուցել Աստծո մասին նրա իմացածից տարբեր գաղափարներ:

\* Ս. Օգոստինոս «Խոստովանություն», գիրք XCh.XX VII-38




Այսպիսով, Աստծու և սրբության մասին երեխայի ունեցած գաղափարը փոխարինվում է բարու և չարի վերաբերյալ մարդկանց ունեցած սովորական պատկերացումներով: Եվ երեխան ճաշակում է բարու և չարի գիտության ծառից, որից կերան Աղամն ու Եվան, ու դառնում նրանց պես տգետ: Ահա այստեղ է երեւում ճշմարիտ հոգեոր առաջնորդի գերը, ով ոչ թե պետք է երեխայի գլուխը լցնի ավելի շատ գիտելիքով, այլ պետք է ցրի սխալ գիտելիքը, որը նա ձեռք է բերել կյանքի ընթացքում: Երբ նրա հոգին ազատվի այս ամենից, նա Աստծուն կճանաչի ճշմարիտ գիտությամբ, որովհետև Աստված իրենից հեռու չէ, այլ բնակվում է իր մեջ:



Ուսուցանելու ցանկությունն իր մեջ մեծ վտանգ է պարունակում: Այնպես որ, սիրելի եղբայր, խուսափիր և Հնարավորին չափ հեռու մնա դրանից:

Ուզում ես մարդկանց սովորեցնե՞լ: Հավ, իսկ ի՞նչ ես ուզում սովորեցնել: Համաձայն չե՞ս, արդյոք, թանկագին իմ եղբայր, որ մենք ինքներս գեռ բավականաչափ հասունություն չունենք և ոչ էլ՝ ամեն ինչի մասին լրիվ գիտելիքներ: Շատ բաներ մենք մեր նեղ տեսանկյունից ենք գիտում և սխալ ենք հասկանում: Օրինակ, երբ ուրիշներին սկսում ենք կրոն սովորեցնել, դրա ճշմարիտ գաղափարը չէ, որ սովորեցնում ենք, այլ՝ ինչպես որ մենք ենք այն հասկանում մեր տարիքում, մեր հոգեոր ու մտավոր մակարդակով: Բայց հասունանալով, հնարավոր է, որ մեր հոգեոր մակարդակն ու մտածելակերպը զարգանան և կրօնի մեր ըմբռնումը տարբերվի այս օրվա մեր ըմբռնումից: Ի՞նչ կիրի այնժամ մեղանից սովորածների վիճակը: Արա և այլ բաների համար է, որ Ս. Հակոբոս առաքյալն ասում է. «...շատերդ ուսուցանողներ լինելու չձգտեք: Իմացեք, որ մեծ գատաստան եք ընդունելու, քանի որ բոլորս էլ շատ ենք մեղանչում»: (Հակոբ. 3:1-2): Երեմիա մարգարեն նույնապես Աստծուն դիմելով ասում է. «Ահա ես նույնիսկ խոսել չգիտեմ, քանզի մանուկ եմ»: Իսկ Եսայի մարգարեն իր մասին խոսելիս ասում է. «Ես պիզծ չուրթեր ունեցող մարդ եմ»: Որպես ուրիշ օրինակ ունենք Ս. Պախոսին. Երբ մարդիկ օգտակար խոսք լսելու համար իր մոտ էին գալիս, նա հրաժարվում էր խոսելուց և նրանց ներկայացնում էր իր Թագլուս աշակերտին: Եվ Աստծու հոգին խոսում էր այս սուրբ աշակերտի բերանով:

Երբ երիտասարդ վանականներից մեկը գնաց մի ծեր հոր մոտ՝ նրանից բան սովորելու համար, հայրը նրան ասաց. «Մնա քո խցում և այն քեզ ամեն ինչ կսովորեցնի»: Եվ երի-



տասարդ վանականն այս խոսքերից օգուտ քաղելով, վերադարձավ իր խուցը:

Շատ ուրիշ պատմություններ էլ կան, որոնք թողնում եմ, որ ինքդ կարդաս: Այստեղ, մինչև մյուս կետին անցնելը, կուզեմ նշել, որ սուրբ Հայրերի սովորեցրածներից շատերը մեղ համել են երկու ճանապարհով. կամ վանականներից մեկն է գրի առել ծերի խոսքերը՝ ասկած մյուս եղբայր վանականներին, կամ էլ հայրն ինքն է գրի առել իր մտքերը՝ իր իսկ օգուտի համար, և իրենից հետո են միայն դրանք գտնվել իր խցում:

Սիրելի եղբայր, շատ մեծ տարբերություն կա ուսուցանելու առաքելության, որն Աստվածաշունչը վերապահում է միայն որոշակի անձանց, և ուսուցանել սիրելու միջեւ: Վերջինը շատ վտանգավոր է: Երբեմն այն դատնում է ծայտալ դեւ: Սովորեցնել սիրելու մեջ հաճախ թաքնված է ինքն իրեն արժանի համարելու և մյուսներից բարձր դասելու ակնհայտ միտումը: Երբ սովորեցնել սիրող այսպիսի մեկը սովորեցնելու ավելի շատ հնարավորություն է ստանում, այս զգացումը մեծանում է իր մեջ: Նույնիսկ եկեղեցի նա մտնում է ոչ թե օգուտ քաղելու, այլ քննադատելու և նույնիսկ ուսուցիչներին սովորեցնելու համար: Նա ստանալու կարիք երբեք չի գումար, միայն տալիս է: Ժամանակ կգա, երբ այս մարդը տալու էլ ոչինչ չի ունենա, քանի որ իր ունեցածը պիտի վերջանա: Այսպիսիներին նման չէին սուրբ Հայրերը, ովքեր անդադար սովորում էին և անմեն ինչից օգուտ քաղում:

Ս. Անտոն Մեծը կարողանում էր օգուտ քաղել մի կնոջ խոսքից, ով չէր ամաչում վանականի առջեւ հանել իր զգեստներն ու լողանալ:


Ս. Մակարը նույնպես, Շիհիթի անապատի հայրը, գաս է առել մի երիտասարդ տղայից:

Ս. Արսենը, ով սովորել և ուսումնասիրել էր հույների ու Հռոմեացիների իմաստությունը, սովորել է նաև մի տգետ եղիպատացուց: Բոլոր այդ հայրերն ունեին աշխույժ մեղվի նման թուշող հոգիներ, որոնք ամեն ծաղկից նեկտար են հավաքում:

Սովորեցնել սիրելու ետևում թաքնված մյուս վտանգն այն է, որ ինքդ քեզ մոռանալու չափ կարող ես ընկղմվել դրա մեջ: Այս առումով հիշում եմ մի փութաջան մարդու, ով Սուրբ Գիրքը կարդում էր ոչ թե օգտվելու, այլ դաս պատրաստելու համար: Ողորմություն էր տալիս ոչ թե աղքատների հանդեպ սիրուց դրդված, այլ մարդկանց օրինակ լինելու նպատակով:



Նա զգույշ էր իր արարքների մեջ ոչ թե նրա համար, որ դա իր համոզմունքն էր, այլ չէր ուզում վատ օրինակ ծառայել: Նույնիսկ մարդկանց հետ զրուցելիս ոչ թե նրանցից բան էր սովորում, այլ իր ամբողջ ուշքն ու միտքն ուրիշների ասածը վարպետորեն քննելն էր և հետո ճիշտ իրավիճակն իմաստուն կերպով բացատրելը: Մի անգամ նա ասաց, որ երբ աղոթքի է կանգնում, և Աստծու Հոգին իր ներսում իրեն ինչ-որ զգացողություն է տալիս կամ էլ ինչ-որ միտք հայտնում, անվարան դադարեցնում է աղոթքը և նստում է դրանք գրի առնելու, որպեսզի մարդկանց սովորեցնի: Այսպիսով, չնորհներն այսպիսի մարդու կորցրել են իրենց իմաստը, իսկ սովորեցնելը նրա համար դարձել է ամեն ինչ: Մի բան էլ եմ ուզում շշնջալ քո ականջին, իմ սրտի համար շատ սիրելի այս ականջիդ. ի՞նչ ես ուզում սովորեցնել մարդկանց: Կրո՞ն: Արդյո՞ք կարծում ես, թե կրոնը զուտ գիտելիք է, որով կարելի է գլուխը լցնել: Իմ մտավախությունն այն է, ով իմ սիրելի ջանասերդ, որ նման ձեռվ կրոն ուսուցանելն այն կվերածի զուտ ուսումնական առարկայի, և մարդիկ կսկսեն քննել այն գիտության որևէ այլ ճյուղի նման: Իրականում, ինչպես շատ լավ գիտես, կրոնը հոգի է և կյանք: Ապա փութաջան մարդն ինձ հարցրեց. «Բայց ես ուսուցիչ եմ եկեղեցում, ի՞նչ կարող եմ անել ուրեմն»: Ես պատասխանեցի նրան. «Ես կուզեի, որ դու հոգով կենդանի լինես, սիրելի եղբայր: Ես քեզ կասեմ ճշմարտությունը. իրականում քեզ վստահված հոգիներին գու չես սովորեցնում, այլ սիրում ես նրանց: Քեզ շրջապատող հոգիներին զրավում է ոչ թե քո սովորեցնելը, այլ քո սերը, «սերը», որը երբեք ամոթով չի թողնում, քանի որ այն Աստված ինքն է»:





## Ազատագրվել ունենալու զգացումից

Շատերը կարծում են, թե իրենք հարուստ են, բազում իրերի տեր: Բայց ինչ քեզ է վերաբերում, սիրելի եղբայր, դու ազատվել ես այս ունենալու զգացումից՝ սկսած այն պահից, երբ հասկացել ես, որ ունեցվածքը սահմանների մեջ է դնում հոգիդ:

Իհարկե, դու էլ ինձ պես աղքատ ես եկել աշխարհ՝ ոչինչ չունենալով այստեղ: Մերկ ես դուրս եկել մորդ արգանդից, նույնիսկ խանձարուր չես ունեցել: Այն ամենը, ինչ հետո ունեցել ես, Աստծուց քեզ տրված նվերներ են լոկ: Սա ունեցվածք չէ, այլ՝ սահմանափակ ժամանակով, այսինքն՝ կյանքիդ ընթացքում քո հսկողությանը հանձնված տնտեսություն: Երբ լքես այս աշխարհը՝ կհեռանաս նույնքան աղքատ, ինչպես եկել ես, մերկ՝ ինչպես ծնվել ես: Այն ամենը, ինչը քոնն էիր համարում այս կյանքում, ստիպված կլինես թողնել այստեղ. շուտով դրան կտիրանա մեկ ուրիշը, որպեսզի ինքն էլ իր հերթին թողնի այլոց:

Ուրեմն, պետք է իմանաս, որ դու ոչինչ տերը չես և ոչ էլ՝ քո, քանի որ առաջ դու գոյություն չես ունեցել: Մինչև քո գոյությունը դու ոչինչ էիր, ապա Աստված քեզ ստեղծեց: Աստված նաև մահվան ու կործանման տիրապետությունից փրկեց ու գնեց քեզ՝ իր Արյամբ, ու գարձար իր սեփականը...

Այսպիսով, սեփական անձի դեմ մեղանչող մարդը փաստորեն մեղանչում է Աստծու դեմ, քանի որ վնասում է իր հոգուն, որն Աստծու սեփականությունն է և փչացնում է մարմինը, որը փրկագնելուց հետո Աստված ցանկանում է Սուրբ Հոգու տաճար դարձնել: Նույնը կարելի է ասել ուրիշների դեմ մեղանչելու մասին: Սա ուղղակի կամ անուղղակի մեղք է Աստծու դեմ: Դավիթը մեղանչել էր քետացի Ուրիայի և նրա կնոջ՝ Բերսաբեի դեմ, սակայն Աստծուն դիմում է ասելով. «Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր» (Սաղմ. 50.6): Նա այսպես է ասում ոչ միայն Աստ-


ծու դեմ մեղանչած լինելու պատճառով, այլ նաև Աստծուն պատկանող երկու մարդկանց դեմ մեղք գործելու համար: Երբ սա ընկալես, սիրելի եղբայր, կհասկանաս, թե որքան վտանգավոր է մեղքը... Դու ինքդ քեզ չես պատկանում, որ կարողանաս ուզածիդ պես քեզ տնօրինել: Մենք ոչնչի տերը չենք, այն ամենը, ինչ ունենք, նվեր է Աստծուց և պարզապես հանձնված է մեզ, որպեսզի բարի տնտեսի պես ազնվորն այն տնօրինենք: Դրա համար պատասխան պիտի տանք, երբ Աստված մեզ ասի. «Ճուր քո տնտեսության հաշիվը» (Ղուկ. 16.2):

Սա է պատճառը, որ Դավիթ թագավորի պես շատ հարուստ մեկն ասում է. «Ես աղքատ և տնանկ եմ» (Սաղմ. 69.6): Մարդկային չափանիշներով Դավիթ թագավորն աղքատ չէր, բայց իրականում, հոգևոր տեսանկյունից, նա ոչինչ չուներ: Դրա համար էին սուրբ հայրերն ուխտում ապրել կամավոր աղքատության մեջ և համարում դա վանական կյանքի հիմնական պայմաններից մեկը:


Աչա բարեկործության բուն իմաստը. քո ունեցածից չէ, որ տալիս ես, այլ Աստծու արարածին տալիս ես Աստծու ունեցածից: Եթե սա ըմբռնես, ինքնահիացմունքի ու հպարտանալու պատճառ չես ունենա: Նաև գովեստից խուսափելու պատճառ չես ունենա, եթե գովելի արարքն անես ծածուկ. օրինակ՝ ինչ-որ գումար տրամադրելով՝ որպես անհայտ բարերար: Մի անգամ տեսա, որ մի նվիրատու իր անվան փոխարեն գրել էր. «Մի չարագործ, որ ինդուում է ձեր աղոթքներն իր համար»: Ես հիացա այսպիսի անհատով:

Միակը, ով կարող է իր սեփական դրամը տալ մարդկանց՝ Աստված է: Այսպիսով, պետք չէ բարեկործական արարքն արժանիք համարել, քանի որ դա տվողի շնորհը չէ: Նա միայն Աստծու շնորհը ուրիշներին փոխանցելու միջոց է: Ինչ որ ասվեց նվիրատվության մասին, վերաբերում է նաև մյուս բարի գործերին, որոնք չեն կարող համարվել որևէ մեկի շնորհ: Բարեկործությանը վերաբերող կետերից է նաև այն, որ դրա համար շնորհակալություն ենք ընդունում: Թույլ տուր հարցնել, եղբայրս, ինչպես կհանդուրժես մարդկանց շնորհակալությունը մի բանի համար, որ դու քո սեփական դրամից չես տվել: Դա Աստծու սեփականությունն է, ինչպես կարող ես դու դրա համար շնորհակալություն ստանալ: Ինչպես կարող ես շնորհակալություն ընդունել: Փառք տուր Աստծուն, իսկ ինքդ խոնարհվիր, որ ամենակարող Աստված գործի:

Ունենալու զգացումը սահմանափակում է հոգիդ, և



ինչը որ չունես, թվում է, թե՝ ունես: Ուրեմն, այս զգացումից խուսափելը չի նշանակում ուրանալ սեփական անձդ, այլ՝ իմանալ ճշմարտությունը քո մասին: Աղոթում եմ, որ Աստված քեզ հետ լինի:



66



[18]

### Ազատագրվել սեփական անձի ազդեցությունից

Ազատագրվեր, եղբայր իմ, անձիդ կապանքներից: Եվ իմացիր, որ եթե ինքդ քո մեջ համաձայնության գաս ու ներսումդ ազատ լինես, շրջապատող հանգամանքները չեն կարող ազդել քեզ վրա... Միայն այդ դեպքում կարող ես ասել, որ ձեռք ես բերել հոգու ազատագրում:

Թանկագին եղբայր, արդյո՞ք կարծում ես, թե աշխարհն իշխանություն ունի քեզ վրա: Կամ էլ, թե վիրավորանքներն ու փորձությունները կարող են քո անկման պատճառ հանդիսանալ: Եթե այսպես ես կարծում՝ սիսալգում ես: Աշխարհը և իր փորձությունները կարող են որոշ ազդեցություն ունենալ, բայց ընկնելուդ իրական պատճառը քո ներսում է:

Զես ընկնի, մինչեւ որ չընդունես, չողջունես ու չսիրես մեղքը:

Արդար Հոգսեփին ապրում էր մեղսալից միջավայրում և ամբողջովին շրջապատված էր մեղքով, սակայն չընկավ, որովհետեւ թույլ չտվեց, որ փորձությունները թափանցեն իր սիրտը: Իր համար հեշտ էր դիմակայել արտաքին ազդակներին, քանի որ հաղթել էր ինքն իրեն:

Մի՛ ասա, թե ընկել ես, որովհետեւ աշխարհը լի է փորձություններով, այլ՝ որ դրանք սրտիդ հաճելի էին, և ընդունեցիր: Օրինակ՝ մարդ կա, անցնելով գինետան մոտով, չի դիմանում գինու շշերի տեսքին, մտնում է, խմում մինչեւ արթելը: Մեկ ուրիշը գինետան մոտով անցնում է նույնիսկ անտեղյակ դրա գոյությանը: Գինին նրան չի վնասում, այն ազդեցություն չունի նրա վրա և ոչ էլ փորձություն է նրա համար: Պատճառը մեկն է՝ նրա սիրտը չի փափագում գինի և լցված չէ գինու հանդեպ սիրով: Նրա սիրտը մաքուր է ներսից, և դրաից ոչինչ չի կարող ազդել նրա վրա: Հոգեոր կյանքումդ հաղթանակն հապես կախված է քո և անձիդ ներքին պայքարի արդյունքից: Եթե քո մեջ կարողանաս



67

խաչել անձդ, ապա արտաքին աշխարհին կնայես պարզ աչքով, որն ամեն ինչ բարի ու գեղեցիկ է տեսնում: Ինչպես առաջայն է ասում. «Ամեն ինչ մաքուր է խղճանքով մաքուր եղողների համար» (Տիտ. 1.15): Շատերը խուսափում են վատ շրջապատից: Դա լավ է, քանի որ Աստված է մեզ արգելում ոտք դնել մեղավորների ճանապարհին և համախոհ լինել չարագործների հետ (Սաղմ. 121): Բայց կան մարդիկ, ովքեր խուսափելով հանգերձ նման շրջապատից, իրենց ներսում հանդուրժում են աշխարհիկ կրքերով ու ցանկություններով լի գազանին: Այսպիսիները գուցեն որոշ ժամանակ հաջողություն ունենան, բայց իրենց դարանակալող բազում փորձությունների ու գայթակղությունների ճնշման տակ, ի վերջո, պիտի ընկնեն: Նրանք, թեև մեղք չեն գործում, սիրում են մեղքը, իսկ մեղքը սիրող անձը կընկնի դրա մեջ, նույնիսկ եթե որոշ ժամանակ փորձել է խուսափել դրանից:

Նման անձիք խուսափում են չարիք գործելուց, կարծելով, թե դրանով Աստծուն զոհաբերություն են մատուցում: Իրականում նրանք նույն մեղավորների պես են, քանի որ չարը հաճելի են համարում, իսկ մեղքը՝ ցանկալի: Նրանց համար դեռևս ծառը լավ է ուտելու համար, ակնահաճ և գրավիչ (Ծնն. 3.6): Թեև պտուղը չեն ճաշակում: Նրանք չեն հաղթում իրենց ներքինը: Աստված դեռ չի բնակվել նրանց սրտերում:

Կարելի է ասել, որ գործականում այսպիսի մարդիկ հնագանդ-փում են Աստծու պատվիրաններին, սակայն չեն սիրում այս պատվիրանները, ավելին, չեն սիրում Աստծուն: Այսպիսիները, եթե հաստատուն մնան, կարող են և փրկվել, բայց նման մեկին, որ կարծեն կրակի միջով անցած լիներ (Ա. Կոր. 3.15): Բայց հնարավոր է, որ չկարողանան շարունակել պայքարը և ընկնեն մեծ անկումով, քանի որ իրենց տունը վեմի վրա չի շինված: Ուրեմն, ամենաճիշտը հոգին մեղքից և մեղքը սիրելու կապանքներից ձերբագատեն է ու չարի ազդեցություններից կերծ պահելը: Երբ մարդ հասնում է այս վիճակին, շատ փորձությունների այլևս ենթակա չէ: Իր սուրբ բնությունը չի բնունում մեղքը, հետեւաբար նա չի էլ արձագանքի դրան: Նա հեշտությամբ կհրաժարվի մեղքից, առանց իր կողմից ճիգ գործադրելու:

Ամեն գեպըում, ինչպես նախօրոք ասացինք, մարդ չի կարող համեն այս վիճակին, մինչև ներքուստ չմաքրվի և մինչև պայքարում չհաղթի սեփական անձին, որը հոգու հակառակն է ցանկանում: Նա պետք է բացարձակապես համոզված

լինի, որ մեղքը դառն է և զգվելի, այնինչ Աստված բարի է և նրա հետ կյանքը՝ բերկրանք:

Այս ներքին պատերազմում մարդ պետք է ճնշի իր մարմինը և հնագանդեցնի այն (Ա. Կոր. 9.27): Պետք է իր անձի հետաքրքրություններն ու ցանկությունները խաչը հանի, որպեսզի դրանք և իր սիրտը չչեղեն, առաջալի հետ ասելով. «Քրիստոսի հետ խաչը ելա. կենդանի եմ այսուհետեւ, բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2.20): Սա է Քրիստոս պահանջում մեզանից: Նա ասում է. «Ով կամենում է ապատել իր անձը, պիտի այն կորցնի, իսկ ով կորցնի իր անձն ինձ համար և Ավետարանի համար, պիտի ապատի այն» (Մարկ. 8.35): Սակայն սա անհնար է առանց Աստծու կողմից հատուկ օգնության: Այսինքն, անձի դեմ պայքարը պիտի գուգորդվի Աստծու հետ գոտեմարտելով: Խոնարհաբար գոտեմարտիր, ուրեմն, եղբայր, նրա հետ արդար հսրայելի պես ասելով. «Թույլ չեմ տա, որ գնաս, մինչև ինձ չօրհնես» (Ծնն. 32.26): Ասս նաև. «Ճողիր ինձ սպունգով, և ես կմաքրվեմ, լվա՝ ու ձյունից ճերմակ կինեմ» (Սաղմ. 50.9): Եվ համոզված եղիր, եթե հաղթես այս պատերազմում, ոչ մի չար ուժ քեզ չի կարող ընկճել:

Այս ամենն անելու համար, սիրելիս, պետք է որոշ ժամանակ առանձնանաս, մի բան, որն էական է եղել Աստծու շատ զավակների կյանքում: Առանձնության մեջ նրանք կարողանում էին մենակ մնալ իրենք իրենց և իրենց Արարչի հետ և սպառազինվել հոգեւոր կյանքի համար: Քննիր, ուրեմն, կյանքդ և տես, գուցե ընկնելուդ պատճառը այսպիսի մեկուսացման շըշանի բացակայությունն է: Այն մարդը, ով չի առանձնանում, չի ճանաչում իր իսկական անձը: Նա հաճախ ընթանում է հոսանքի հետ՝ չիմանալով, թե ուր է գնում, չգիտակցելով իր անկումը:

Ինչ քեզ է վերաբերում, զու մի եղիր այդ մարդը, այլ քեզ որոշ շակի ժամանակ տրամադրիր, որպեսզի կարողանաս վարքդ քննել ու անդրադառնալ այն վեհ սկզբունքներին, որոնցում համոզվել ես շատ վաղուց: Հիշիր նաև սուրբ մարդկանց կյանքը, ովքեր հաղթանակեցին, և սնվիր Աստծու խոսքով, հայրերի վարքով ու նրանց խրատներով: Թող Աստված քեզ հետ լինի, սրբություն տա իվերուստ ու ների մեր մեղքերը:





«Ի՞նչ է, քեզ թվում է միայն ե՞ս պիտի իմ մեղքերի համար դատապարտվեմ: Ոչ, այլ դու էլ պիտի դատապարտվես ինձ հետ, որովհետև եթե եկեղեցին հոգ տամեր ինձ համար, ես այս վիճակին չէի հանի»:

Ծխախոտի ծուխը երեսիս փչերով՝ ասաց. «Երեմ ցնցված ես իմ այս վիճակը տեսնելով»: Ես նայեցի նրա շեկ, երկար, հարդարված մաղերին, փոս ընկած աչքերին, գեղին ատամներին ու նյարդայնորեն դոդացող ձեռքերին և մեծ կարեկցանք զգացի նրա հանդեպ... Զէ՞ որ նա էլ Տեր Հիսուս Քրիստոսի արյամբ գնվածներից մեկն է:

Մինչև իմ պատասխան գտնելը, նա շարունակեց դառնորեն. «Ինչպես գիտես, առաջ ես այսպիսին չէի. Ես հոգով ուժեղ էի, մեղմ բնավորությամբ, կանոնավոր հաճախում էի եկեղեցին... Հետո աստիճանաբար ծուլացա ու դադարեցի հաճախել: Բայց եկեղեցուց ոչ ոք չեկավ ինձ այցելելու կամ չփորձեց վերադարձնել... Բացակայություններս շարունակվեցին, ու դարձա ավելի ալարկուտ, կամքս գնալով ավելի թուլացավ, և քայլ առ քայլ սկսեցի իջնել իմ բարձունքից... Եվ նորից ոչ ոք չեկավ ինձ այցի... Այդ պահին սատանան այցելեց ինձ... Երբ նա եկավ, իմ սիրտը դատարկ գտավ, մաքրեց ու կարգի գցեց (Մատթ. 12.44) և կամքս թուլացրեց: Նա Աստվածաշունչ չգտավ իմ կողքին, ոչ՝ աղոթագիրք, ոչ էլ՝ հոգեոր հայրերի գրվածքներ... Այսպիսով, նրա համար հեշտ որս եղա ու սկսեցի քայլել խավարի մեջ, խավարի, որը մարդիկ ավելի սիրեցին, քան լույսը (Հովհ. 3.19):»

Այստեղ նա գլուխը տարուբերեց և հանդարտորեն ասաց. «Հիմա ես օրական չորս տուփ ծխախոտ եմ գնում»: Զարմանքից ու ցավից ճշացի, իսկ նա շարունակեց. «Շաբաթը երեք անգամ կիսոթարոն եմ գնում, ընթերցում անվայել պատմու-


թյուններ, ինքս ինձ զվարճացնում կոպիտ երգերով, իսկ իմ ընկերները դժոխքի դեմքերի նմաններն են: Անկմանս սկզբում ես դիմագրում էի, սակայն պարտվեցի, քանի որ թուլակամ էի... Իսկ այժմ չեմ էլ հակառակվում»: Հետո նա ծիծաղեց և հեղնանքով ասաց. «Նույնիսկ կասեի, որ հիմա մեղքն է ինձ հակառակվում, բայց չի հաջողում, քանի որ ինքն է թույլ»:

Նրա խոսելու ամբողջ ընթացքում ես շատ տխուր էի, իսկ նա՝ դաժանորեն ինձ նայելով, կտրուկ ասաց. «Ի՞նչ է, քեզ թվում է միայն ե՞ս պիտի իմ մեղքերի համար դատապարտվեմ: Ոչ, այլ դու էլ պիտի դատապարտվես ինձ հետ, որովհետև եթե եկեղեցին հոգ տաներ ինձ համար, ես այս վիճակին չէի հասնի»:

Անիմաստ է, թանկագին եղբայր, պատմել քեզ այս երիտասարդի պատմության շարունակությունը, քանի որ այն նման է ուրիշ շատ պատմությունների: Բայց ուզում եմ ասել, որ այդ գիշեր, տուն վերագառնալով, ես կեղեքող ցավով էի լցված և՛ իր, և՛ իմ հանդեպ: Ես ինքս ինձ հարց էի տալիս, թե քանի՞ն են նրա պես գլորվել իմ արհամարհանքի, այցի չգնալու ու հոգ չտանելու պատճառով: Ակսեցի անուն առ անուն հիշել նրանց, ում երկար ժամանակ չէի այցելել և մեծ վախ ու սարսափ ապրեցի: Ես ինձ շատ մեղագոր զգացի նրանց առաջ: Եվ ինձ հարց տվեցի, թե արդյո՞ք իմ ծառայությամբ իսկապես Աստծուն եմ ծառայում: Այդ երիտասարդի խոսքերը շարունակում էին հնչել ականջներում. «Դու էլ պիտի դատապարտվես ինձ հետ»: Հիշեցի նաև Ս. Հակոբոս առաքյալի խոսքը. «Եղբայրներ իմ, շատերգ ուսուցանողներ լինելու չձգտեք: Իմացեք, որ մեծ դատաստան ենք ընդունելու, քանի որ բոլորս էլ շատ ենք մեղանչում» (Հակոբ. 3.1-2):

Քանի որ այս բանը շարունակ մտահոգում էր ինձ, գիմեցի հոգեռականներին՝ ներում գտնելու համար և, մերժում ստանալով, երեսն ի վայր ընկա Աստծու առաջ ու դառնագին ողբացի, հասկանալով, թե որքան թշվառ եմ ես: Թշվառ եմ, որովհետև համաձայնվել եմ սպասավոր լինել ու երեմիս մարդարեի նման չեմ ասել. «Տեր, ով Դու Տեր, ահա ես նույնիսկ խոսել չգիտեմ, քանզի մանուկ եմ» (Երեմ. 1.6): Թշվառ եմ, որովհետև կիրակնօրյա գըպրոցներում իմ դասավանդածը լոկ դասախոսություն էր, որն ավարտելով՝ հանգիստ հեռանում էի:

Թանկագին ընթերցողներ, աղոթեք ինձ համար ու կիրակնօրյա գպրոցի բոլոր ուսուցիչների համար, քանի որ նրանք էլ ինձ պես թշվառ են ու խեղճ: Եթե այսպես ենք խոսում ու-



սուցիչների պատասխանատվության մասին, ապա առավել ևս, եղբայրներ, ի՞նչ ասենք քահանաների վերաբերյալ։ Նրանք շատ ավելի թշվառ չե՞ն արդյոք, քան ես։ Ի՞նչ կարող է անել քահանան գինդ կամ տասը հազարանոց համայնքի համար։ Ի՞նչ պատասխան կարող է տալ, երբ Աստված կանչի նրան՝ ասելով. «Տուր քո տնտեսության հաշիվը» (Ղուկ. 16:2):

Հայրերի նախնի եկեղեցում քահանային ապասավորում էր սարկավագների մի խումբ, ովքեր աշխատում էին իր հետ, ծառայության մեջ օգնում էին իրեն և իր հետ սնվում էին եկեղեցու նվիրաբերություններից։ Բայց այսօր քահանան մենակ է աշխատում։ Նա կարիք ունի, որ դուք ձեր աղոթքներում Աստծուց իր համար օգնություն խնդրեք՝ իր պարտականությունները կատարելու համար։

Իսկ քեզ, տեր հայր, ի՞նչը դրդեց քահանա դառնալ։ Արդյոք ձգտում էիր պակառությա՞ն, առավելությա՞ն, թե՞ պատասխանատվություն ստանձնելու։ Ի՞նչ է, չգիտե՞ս, տեր հայր, որ պատասխանատու ես քո ամբողջ հոտի համար՝ աճեների ու ջահեների, կանանց ու տղամարդկանց, երիտասարդների ու երիտասարդուհիների համար։ Միայն եկեղեցի հաճախողների համար չէ, որ պատասխանատու ես, այլ նաև նրանց համար, ովքեր գտնվում են զվարճությունների ու այլասերության վայրերում, փողոցում գտնվող յուրաքանչյուր անխօնեմ երիտասարդի համար, պանդոկում նստած յուրաքանչյուր հարբածի ու յուրաքանչյուր ընտանիքի ներսում ծագած վեճի համար։

Այո, տեր հայր, եթե չգիտեիր, որ թշվառ ես, հիմա ստիպված ես այդ ընդունել։ Մտիր քո սենյակ ու դառնորեն ողբա՛։ Ամենը հանձնիր Աստծու ձեռքն ու ասա իրեն, որ դու տկար ես, իսկ բեռդ՝ ծանր։ Պայքարիր և արթուն կաց։ «Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի» (Մարկ. 13:36):

Եթե սա վերաբերում է քահանաներին, ապա ինչ կարելի է ասել եպիսկոպոսների մասին, որոնցից յուրաքանչյուրից Աստված հաշիվ պիտի պահանջի մոտավորապես երկու հարյուր հազար կամ ավելի հոգու համար՝ քահանա, թե աշխարհական։ Նրանք արդյո՞ք շատ թշվառ չեն։ Կարո՞ղ եք անկեղծորեն աղոթել Աստծուն, որ օգնի նրանց իրենց պարտականությունները կատարել։

Իսկ քեզ համար, սրբազն հայր, ի՞նչը ցանկալի դարձրեց այս գիրքը՝ հեղինակությո՞ւնը, թե՞ պարտականությունը։ Դիրք ու հեղինակություն, հոգեոր խորհրդի անդամ լինել, «իր

փառքից» մի փոքր ունենա՞լ ես երազել, թե՞ հոգիներ փրկել ես ցանկացին։ Թույլ տուր հիմա հարցնել քո պարտականությունների մասին։ Ինչպիսի՞ն է քո թեմի ներկայիս վիճակը համեմատած այն օրվա հետ, երբ նոր էիր ստանձնել դրա առաջնորդությունը, կա՞ն բարենորոգություններ, թե՞ դեռ ամեն ինչ նույնն է։ Պիտի առանձնանաս քո խցում և դառնագին ողբա՛, սրբազն հայր։ Հիշիր, թե ինչպես էին վանական սրբերը փախչում այդ դիրքից, քանի որ սարսափելի է դրա պատասխանատվությունը։

Երբ նրանցից մեկը բռնի ուժով եպիսկոպոս օծվեց, Աստծուն ողբածայն աղաղակելով ասաց. «Ով Տեր, գիտես, որ աշխարհը թողնելով, վանք գնացի՝ իմ սեփական փրկության համար։ Բայց հիմա վերադարձա աշխարհ, թեկուզ փրկությունը գեռ չեմ ստացել, և գեռ ինձանից պահանջվում է փրկել մյուսներին ես։ Ով Տեր, ես անզոր եմ, Քո գորությամբ գործիր»։ Եվ Աստված գործեց…

Իսկ պատրիարքնե՞րը, որոնցից յուրաքանչյուրից Աստված պիտի պատասխան պահանջի մոտ տասը միլիոն հոգու համար՝ եղիպատում և շատ ավելի՝ եթովպահայում, Սուրբանում ու հինգ արևմտյան քաղաքներում, որոնք հիշատակվում են Ս. Պատարագի ընթացքում\*… Ի՞նչ կարելի է ասել նրանց լուրջ պարտականությունների մասին։ Նրանք էլ արդյոք թշվառ չե՞ն։ Եղեայներ, դուք պարտավոր եք աղոթել ձեր հայրապետի համար, որ նա ի վիճակի լինի կատարելու իր պարտականությունները և պատասխան տալու Աստծուն, երբ իրենից պահանջվի իր հոգին, նաև եպիսկոպոսների, քահանաների, սարկավագների, վանականների ու աշխարհականների հոգիները… Աղոթեք, որ պահի եկեղեցական օրենքներն ու տարածի ուղղափառ հավատն ամբողջ աշխարհում։

Դուք ես, ովքեր մի օր գուցե հայրապետ դառնալու թեկնածու լինեք, պիտի մերժեք ու խուսափեք դրանից՝ ձեր կյանքը փրկելու համար։ Իսկ եթե Աստծու կողմից կանչվեք, հիշեք դրա պատասխանատվությունը և, գնալով ձեր խուցը, դառնորեն ողբացեք Աստծու առաջ։ Եվ դուք, իմ ընթերցող եղեայներ, Աստծու սպասավորներին մի նայեք զուտ իրեն կողմնակի դիտորդի՝ գովելով նրանց, երբ բարիք են գործում ու դատապարտելով, երբ սիսալում են… Դուք պարզապես պարտավոր եք աղոթել նրանց համար, որպեսզի նրանց միջոցով Աստծու գործը հաջողի։

Իսկ դու, Աստծու ծառա, մտածիր քո պարտականության մասին և ոչ թե գիրքիդ… Իսկ երբ զգաս, որ այդ բեռը

\* Խոսք Վերաբերվում է Ղապի եկեղեցու Պատարագի տեքստին



ծանր է քեզ համար, «Հոգսդ դիր Տիրոջ վրա, ու նա քեզ  
կերակրի» (Սաղմ. 54.23):

Փակիր դուռող, արտասվիր  
Ու սիրող բաց Հիսուսին.  
Լցրու գիշերն աղոթքով,  
Ցրիր խավարը մթին  
Մաքառմամբ ու զղումով:



74



«Նրանք իրենց կյանքն ամբողջովին նվիրել են Աստծուն:  
Իրենց ժամանակի յուրաքանչյուր պահն անցկացրել են Նրան  
ծառայելով: Հոգևոր ծառայությունը համարել են իրենց հիմնական  
գործը, իսկ աշխարհիկ գործերը՝ երկրորդական»:

Դա պատահեց այն գիշեր, երբ ես մենակ էի իմ առանձնասեն-  
յակում, փոված աթոռիս, հայացքս մի կետի հառած, դեմքիս՝ ինք-  
նագոհ ժպիտ. գուցե այդ պահին իմ սպասավոր լինելու մասին էի  
մտածում: Հետո գլուխ ծանրացավ, ու քնեցի, չգիտեմ, մտքերս  
երազի՞ փոխվեցին, թե՞ Աստված ինձ տեսիլք ուղարկեց: Գիտեմ  
միայն, որ առջևս տեսա մի խումբ լուսեղեն հրեշտակներ, որոնք  
ինձ իրենց թեկրի վրա առած՝ վեր բարձրացան:

Ես ներքե նայեցի՝ ցածում մնացած երկրին, որը հետզհետե  
փոքրանում էր, մինչև որ դարձավ մի փոքրիկ լուսավոր կետ՝  
անսահման տարածության մեջ... Որոշ ժամանակ ես դեռ լսում էի  
աշխարհի աղմուկը, բայց այն գնալով թուլացավ ու փոխվեց լուս-  
թյան: Թվում էր, թե մարմինս ավելի ու ավելի թեթև է դառնում,  
մինչև զգացի, որ ես հոգի եմ՝ առանց մարմնի: Շփոթված շուրջս  
նայեցի և ինձ պես շատ հոգիներ տեսա, որոնք լողում էին անսահ-  
ման տարածության մեջ: Տեսա հազարավոր և տասնյակ հազարա-  
վոր հրեշտակներ, վեցթեյան քերովեներ և բազմաչյա սերով-  
բեներ: Նրանք բոլորը հրաշալի ներդաշնակությամբ երգում էին՝  
ասելով. «Սուրբ, Սուրբ»: Հայտնաբերեցի, որ ես էլ անդիտակցա-  
բար օրհներգում եմ նրանց հետ. «Սուրբ է Հայր Աստված... Սուրբ  
է Միածին Որդին... Սուրբ է Սուրբ Հոգին»:

Դադարեցի օրհներգելուց, լսելով մի սուրբ, մեղմ մեղեդի, որը  
ոչ մի ականջ գեռ չէր լսել: Ես գնացի դեպի ձայնի աղբյուրը՝ ու-  
ղենալով տեսնել, թե ինչ կա այնտեղ:

Որոշ հեռավորության վրա իմ առջև խոյացավ երկն-



75

քից կախված մի գեղեցիկ լուսաշող քաղաք, որտեղից շարականներ ու երգեր էին լսվում: Այդ մեղեղիները սիրու լցնում էին ուրախությամբ, հոգիս՝ փափառով: Քաղաքի ներսում էակներ կային, որոնք շատ ավելի գեղեցիկ էին, քան հրեշտակները: Դրանք Մովսեսը, Եղիան ու մյուս մարդարեներն էին: Այստեղ էին Ս. Անտոնը, Ս. Աթանասը և բոլոր սրբերը: Տեսա նաև իմ քահանա ու եպիսկոպոս հայրերին և իմ խոստովանահորը: Այստեղ էին նաև իմ գործընկերներից՝ կիրակնօրյայի ուսուցիչներից ոմանք: Էլ չէի կարող սպասել՝ ավելին տեսնելու համար. վազեցի այդ լուսաշող քաղաքի կողմը: Սակայն, ի գարմանս ինձ, չկարողացա առաջանալ, քանի որ մի անվեհեր, սոսկալի, պատկառազդու ու վեհապանձ հրեշտակ կանգնեց ճանապարհի՝ ասելով. «Տեղումդ կանգնիր»: Պատասխանեցի. «Գնում եմ այս մեծ քաղաքը, տեր իմ հրեշտակ, որտեղ տեսա իմ գործընկերներին, եղբայրներին ու սուրբ հայրերին»: Իսկ հրեշտակը զարմանքով նայեց ինձ ու ասաց. «Բայց սա սպասավորների քաղաքն է, ոու նրանցից ես»: Երբ ես դրական պատասխան տվեցի, նա ասաց. «Ախալվում ես, բարեկամս, քո անունը չկա սպասավորների ցուցակում»:

Զարմանքով համակվեցի ու բղավեցի հրեշտակի երեսին, որը պահպանում էր քաղաքը. «Ինչպե՞ս թե: Հավանաբար դուք ինձ չեք ճանաչում, տեր իմ հրեշտակ: Հարցրեք իմ մասին կիրակնօրյա դպրոցներում, երիտասարդական ժողովներում, եկեղեցիներում ու հավաքներում: Հարցրեք իմ մասին թեկուզ հենց սպասավորների քաղաքում, քանի որ կիրակնօրյայի իմ գործընկեր ուսուցիչներից շատերն ինձ լավ գիտեն»:

Նա ինձ պատասխանեց. «Քեզ լավ գիտեմ, և իրենք՝ նույնպես: Բայց Աստծու դատաստանով դու սպասավոր չես»:

Չէի կարող տանել այս խոսքերը և ծնկներիս վրա ընկնելով դառնագին ողբացի, երբ մի ուրիշ հրեշտակ եկավ, սրբեց արցունքներս ու քնչությամբ ասաց. «Եղբայրս, դու այնպիսի վայրում ես, որտեղից վերացել են թափիծն ու հառաչանքը: Ինչո՞ւ ես, ուրեմն, տրտում: Եկ խորհենք իրար հետ»: Եվ մենք առանձնացանք՝ իրար հետ խորհելու: Նա ասաց. «Նրանք, ում տեսնում ես սպասավորների քաղաքում, իրենց կյանքն ամբողջովին նվիրել են Աստծուն: Իրենց ժամանակի յուրաքանչյուր պահն անց են կացրել Նրան ծառայելով: Արդյո՞ք համամիտ չես ինձ հետ, որ Ս. Պողոսի և մյուս առաքյալների, եպիսկոպոսների, քահանաների, սարկավագների ու սրբերի կյանքն այսպիսին էր: Իսկ դու, բարեկամս,



դու ծառայությանը չնվիրվեցիր, այլ ծառայեցիր աշխարհին: Քո ողջ հոգերը ծառայությունը շաբաթը միայն մեկ ժամ էր՝ կիրակնօրյա դպրոցում: Երբեմն էլ ուրիշ առիթներ քեզ ստիպում էին ևս մի ժամ տրամադրել Աստծուն: Այդ երկու ժամվա համար, ուրեմն, ուզում ես առաքյալների, մարդարեների ու քահանաների հետ լինել սպասավորների քաղաքում»: Այս ամբողջ զրույցի ժամանակ ամբողջ խոնարհել էի գլուխս, բայց փորձելով հաղթահարել ամոթը, համարձակվեցի հրեշտակին հարցնել.

-Բայց քաղաքում իմ գործընկերներից՝ կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներից մի քանիսին էլ եմ տեսնում, որոնք ինձ պես նույն ծառայությունն են մատուցել:

Այդ ժամանակ հրեշտակը պատասխանեց.

-Ոչ, նրանք քեզ պես չեն: Թեկուզ և մի ժամ են ծառայել կիրակնօրյա դպրոցում, բայց ամբողջ շաբաթ պատրաստվել են այդ ժամին: Նրանք ամբողջ ժամանակը տրամադրել են դասին պատրաստվելուն և դրա համար աղոթքին: Նաև հոգ են տարել յուրաքանչյուր աշակերտի համար, ձգտելով նպաստել նրանց կյանքի վերափոխմանը: Սրան ավելացրու այն մեծ նվիրումը, որով այցելում էին աշակերտներին, ուղղորդում նրանց հոգեոր ընթացքը: Դրանից բացի ուրիշ գաղտնի ծառայություններ էլ են արել, որոնք դու չգիտես: Հոգերը ծառայությունը համարել են իրենց հիմնական գործը, իսկ աշխարհիկ գործերը՝ երկրորդական:

Սա չի նշանակում, թե նրանք անտեսել են իրենց աշխարհիկ պարտականությունները: Դրանք էլ են հավատարմությամբ ու հաջողությամբ կատարել: Նույնիսկ սրանցով են ծառայել: Դրա համար Աստված նրանց սրբացած է համարում:

Զարմացա այս բառերից ու հարցրեցի.

-Երբ զբաղված եմ աշխարհիկ հոգսերով, ինչպե՞ս կարող եմ միաժամանակ ծառայել Աստծուն:

Հրեշտակը պատասխանեց.

-Հավանաբար, եղբայր իմ, մոռացել ես ծառայության իսկական նշանակության մասին:

Պարտավոր ես ծառայել Աստծուն ամեն ժամ և ամեն տեղ, եկեղեցում թե փողոցում, ընտանիքումդ թե աշխատանքիդ վայրում, և ուր էլ գնաս կամ լինես:

Աշխատանքի ու ծառայության միջև տարանջատում չպետք է լինի: Սպասավորների քաղաքում կան ուսուցիչներ, ովքեր կարողացել են իրենց աշակերտներին գրավել դեպի կի-



րակնօրյա գպրոցներ, վերափոխել նրանց և շարունակական խնամք տանել: Քաղաքում կան բժիշկներ, ովքեր աշխատել են ոչ թե զուտ իրենց շահի համար, այլ առաջին հերթին հանուն հիվանդների առողջության: Նրանք չեն զլացել ձրի գեղորայք տալ ու անվարձահատույց բժշկել հիվանդներին: Նույնիսկ հիվանդանոցներ են հիմնել ձրի բժշկական օգնություն ցույց տալու համար: Պաշտոնյաներ կան, ովքեր իրենց աշխատակիցներին եկեղեցի են բերել, առաջնորդել են խոստովանության և հաղորդակից դարձրել սուրբ խորհրդներին: Կան ինժեներներ, իրավաբաններ, վաճառականներ ու ճեռներեցներ, ովքեր ծառայել են Աստծուն՝ իրենց գործի միջոցով: Դու արդյո՞ք այդպես ես վարվել: Ես ամոթից գետին էի մտնում և պատասխան չափեցի: Հրեշտակը շարունակեց.

-Դա աշխատանքի մեջ ծառայություն մատուցելու մասին: Իսկ ընտանիքիդ ծառայել՝ Հետուն, ում տեսար քաղաքում, ասել է. «Ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտում» (Հետու 24.15): Իսկ գո՞ւ: Դու չես ծառայել ընտանիքիդ անդամներին, այլ ավելի շուտ շարունակ վիճել ես նրանց հետ: Դու նրանց համար օրինակ չես հանդիսացել: Ի՞նչ ես արել ընկերներիդ, հարևաններիդ ու ծանոթներիդ համար: Միայն այցելել ես նրանց Ծննդյան տոներին ու Զատկին, բայց երբեք չես խոսել դրանց խորհրդի մասին, վերըստին ծնվելու ու մեղքերից սրբվելու մասին: Դու մասնակցել ես նրանց աշխարհիկ ուրախություններին, իսկ նրանց Աստծուն մոտեցնելու բազում առիթները կորցրել ես: Այսքանով հանդերձ, քեզ սպասավո՞ր ես համարում:

Երրորդ անգամ ամոթից խոնարհեցի գլուխս, բայց փորձեցի արդարանալ՝ ասելով.

-Բայց, տեր իմ հրեշտակ, գիտես որ քիչ տաղանդներ ունեմ և այդ ամենը չէի կարող անել:

Թվաց, թե Հրեշտակը զարմացավ իմ խոսքերի վրա, կարծես նման տեսակետ առաջին անգամ լսելիս լիներ: Հետո կտրուկ ասաց.

-Տաղանդնե՞ր: Ո՞վ ասաց, թե առանց տաղանդի չես կարող ծառայել: Եղբայր իմ, գոյություն ունի, այսպես կոչված, լուռ քարոզչություն: Քեզանից ոչ թե քարոզել էր պահանջվում, այլ՝ օրինակ ծառայել: Երբ մարդիկ գեմքիդ են նայում, սովորում են հեղություն, ուրախություն և պարզություն... Երբ քո խոսքն են լսում, սովորում են ողջախոհություն, ճշմարտություն և ազնվություն, և երբ քեզ հետ հարաբերվում են՝ տեսնում են

համբերություն, հավատարմություն, զոհաբերում և սեր իրենց հանդեպ: Հետեւաբար, սիրում են քեզ, նմանվում են քեզ և դառնում են աստվածանման, թեև դու նրանց ոչ ուսուցանել ես, ոչ էլ քարոզ կարգացել ամբողոքից: Կարող էիր աղոթել նրանց համար, և աղոթքդ քարոզիցդ ավելի օգտակար կլիներ նրանց:

Չորրորդ անգամ ես ամոթ զգացի, շփոթվեցի և չկարողացա պատասխանել: Հրեշտակը նորից շարունակեց.

-Դու պարտավոր էիր չպատասխանել վիրավորանքներին: Պարտավոր էիր ետ կանգնել այն քայլերից, թեկուզ չափազանց անմեղ թվացող քայլերից, որոնք կարող էին սիսալ ընկելավել կամ վիրավորել որևէ մեկին: Այսպիսով, Աստծու և մարդկանց առաջ անդամապարտելի կլիների, ինչպես ասում է Ս. Պողոս առաքյալը Սուրբ Գրքում. «Ամեն ինչ ինձ արտօնված է, բայց ոչ ամեն բան՝ օգտակար» (Ա. Կոր. 6.12):

Կյանքս վերանայելով տեսա, որ շատ դեպքերում ես եմ տեղիք տվել, մեղք գործելու, թեկուզ և ոչ դիտավորյալ: Այսոեղ հրեշտակն իմ մտածումներն ընդհատելով ասաց.

-Դեռ ամբողջը չէ... Բացի այդ, ուզում եմ ասել, որ քեզ շատ խղճում էի, թանկագին իմ բարեկամ... Հատկապես, խղճում էի, երբ համակվում էիր սեփական արդարության զգացումով: Քո ծառայություններին նայելով՝ կարծում էիր, թե սպասավորության օրինակ ես, այնինչ բոլորովին էլ սպասավոր չէիր համարվում: Քոնը ձևական ծառայություն էր: Կիրակնօրյա դպրոց հաճախելը քեզ համար պարզապես սովորություն էր, գու զեկավարում էիր աղոթքները, գրում ներկաների և բացակաների անունները, պարզեատրում կանոնավոր հաճախող աշակերտներին և արհամարհում՝ բացականերին, ասես նրանք քո հոտից չէին: Քո ծառայությունը զուրկ էր Հոգուց ու սիրուց և չէր կարող դիմուել երեխաների սրտերին: Քո խոսքերն ու գործերը սրտիցդ չէին բխում, օրհներգությունն զուրկ էր ուրախությունից, աղոթքներդ խոնարհ, ներհայեցողական կամ աղերսագին չէին, իսկ հրամաններդ սիրո ոգով չէին տրվում: Այսպիսով, ծառայությունդ արդյունավետ չէր: Եկեղեցում քարոզում էիր, քանի որ քահանան քեզ խնդրել էր, գու խոստացել էր և պետք է խոստումդ կատարեիր: Հիմնական խնդիրդ նյութն այնպես կառուցելն էր, որ այն հավանություն գտներ, փոխանակ ուղղված լիներ հոգիներ փրկելուն: Զայնդ թեև բարձր, ներդաշնակ ու մաքուր էր, սակայն ասուն էր ու անկենդան: Երջանկանում էիր, երբ քեզ գովում



էին, թեև ցույց չէիր տալիս, և քեզ չէր հուզում՝ արդյո՞ք խոսքերդ կյանքի կոչեցին, թե՞ ոչ: Զե՞ս տեսնում, բարեկամս, որ ավելի շատ քեզ ես ծառայել, քան Աստծուն ու մարդկանց: Մոռացե՞լ ես, որ ավելի սիրով էիր ծառայում մեծ, հայտնի, մարդաշատ եկեղեցիներում, քան թե փոքր, անհայտ եկեղեցիներում: Սա ես հանցանշան չէ՞ քո դեմ: Ավելին, քո ծառայությունը գուրկ էր երկու էական բանից՝ սեր ծառայության նկատմամբ և սեր նրանց հանդեպ, ում ծառայում ես:

Ծառայության հանդեպ սիրո մասին հստակ կերպով ասված է Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերում. «Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության...» (Մատթ. 5.16): Հոգիների փրկության քաղցն ու ծարավն ունեի՞ր: Արդյո՞ք ամբողջ շաբաթ սպասում էիր կիրակնօրյայում երեխաներիդ հետ անցկացնելիք այդ մեկ ժամին: Բացակայողների համար արդյո՞ք ցավում էիր, ցանկանո՞ւմ էիր տեսնել նրանց և արդյո՞ք չէիր հանգստանում մինչև չհանդիպեիր ու բաց թողած դասը չբացատրեիր: Դառնանք երկրորդ կետին. արդյո՞ք իսկապես սիրում ես նրանց, ում ծառայում ես, և սիրո՞ւմ ես անմնացորդ՝ ինչպես Տեր Հիսուս Քրիստոս իր աշակերտներին: Կարեկցե՞լ ես նրանց, բաշխե՞լ ես քո բարությունից: Իսկ աշակերտնե՞րդ, իրենք է՞լ էին քեզ սիրում փոխադարձաբար: Թե՞ դու նրանց միայն հանդիմանում ու պատժում էիր՝ առանց պարգևատրելու կամ գովելու: Ո՞վ ասաց, որ այսպես կարող էիր նրանց նորոգել: Սերը, թանկագին իմ մարդ արարած, ծառայության անհրաժեշտ հիմքն է: Մինչև չսիրես նրանց, ում ծառայում ես, չես կարող լիարժեք ծառայել, և մինչև նրանք քեզ չսիրեն, չեն կարող օգուտ քաղել քեզանից:

Այսպես, երբ իմ իսկական «եսը» բացահայտվեց ինձ համար, ես շատ ամաչեցի, սակայն հրեշտակը կարեկցանքով ու սիրալիր նայեց ինձ ու ասաց.

-Մի կարևոր բան եմ ուզում քեզ ասել. ծառայությունն սկսելուց առաջ պետք է երկար ժամանակ տրամադրեիր պատրաստվելուն ու լցվելուն: Բայց քանի որ չուտ ես սկսել, առանց բավականաչափ հոգերոր փորձառության, շատ սխալներ ես գործել:

Հարցական իրեն նայեցի, կարծես ուզենալով ասել, թե դժվար սխալված լինեմ, քանի որ ուրիշների սխալներն ուղղելու համար էի պատասխանատու: Իմ հայացքը որսալով, հրեշտակն ասաց.

-Մի տղա կար, ում հեռացրել ես կիրակնօրյա դպրոցից անհնագանդության և կարգապահ չլինելու

պատճառով. դա նրան ավելի կարծրացրեց ու գցեց փողոց՝ չարշըապատ: Դրանից հետո նա ավելի վատը դարձավ ու շատ լուրջ վնասներ կրեց, հատկապես երբ հսկողությունն իր վրա և հոգատարությունն իր հանդեպ կորավ: Անշուշտ, դու ես պատասխանատու նրա համար, որովհետեւ դա քո արարքի հետևանքն էր:

-Բայց չէ՞ որ նա խանգարում էր դասն ու վատ օրինակ հանդիպանում մյուսների համար:

-Ուրեմն այդ պատճառով ես նրան հեռացրել: Ով խեղճ: Տեր Հիսուս Քրիստոս քեզ ուղարկել է արդարների՞ն, թե՞ մեղավորներին կանչելու ապաշխարության: Շնորհալի աշակերտներդ, ուրոնցով հպարտանում էիր, իրենց շնորհն Աստծուց էին ստանում:

Նա էր գործում իրենց մեջ: Բայց այս կամակոր տղայի համար դու պետք է հոգ տանեիր:

Այսպիսիների համար էր Աստված քեզ կանչել: Ես քեզ պարզ եմ ասում, եթե բոլոր ջանքերդ ի գործ գնեներ այդ տղային փոխելու համար և ուրիշ ոչ մի ծառայություն մատուցած չլինեիր, դա բավական կլիներ, որ քեզ թույլ տրվեր մտնելու սպասավորների քաղաքը: Պետք է գիտակցեիր այդ մեկ հոգու արժեքը և պետք է շատ ավելի երկար տառապելիր նրա համար:

Այս երկու հատկանիշներից զուրկ կիրակնօրյա դպրոցի ուսուցիչը չի կարող արժանանալ սպասավորների քաղաքում լինելուն: Ես աղաչանքով դիմեցի հրեշտակին:

-Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պետք է արած լինեի այդ տղայի համար:

Նա պատասխանեց.

-Կարեցածիդ չափ պետք է ծառայեիր նրան ու ճանաչեիր նրա ներաշխարհը՝ ճիշտ մոտեցում գտնելու համար: Պետք է շատ աղոթեիր իր համար, ու եթե այս ամենն ապարդյուն անցներ, ոչ թե պիտի հեռացնեիր, այլ ուրիշ դասարան տեղափոխեիր նրան, գուցե մեկ ուրիշ ուսուցչիք հաջողեցներ այն, ինչը գու չկարողացար: Եթե սա էլ օգուտ չտար, կարող էիր մեկ կամ ավելի դասարաններ առանձնացնել այսպիսի անկարգ երեխաների համար, որտեղ նրանց մասին հոգ կտանեին՝ իրենց հոգեվիճակը հաշվի առնելով: Նման երեխաներին պետք է հաճախ այցելել և անկեղծորեն հոգ տանել՝ նրանց ձեզ ավելի մոտեցնելով, այլ ոչ երբեք հեռացնելով: Նրանք Զաքեռուից, սամարացի կնոջից կամ նինվեի բնակիչներից ավելի վատը չեն: Ով Աստծուն է ծառայում, խոնարհ է ու սիրող սիրու ունի, չգիտի, թե ինչ է հուսահատությունը:



**Հրեշտակը շարունակեց.**

-Մեկ ուրիշ տղա էլ կար քո դասարանում, ով մեկ-երկու շաբաթ բացակայեց, իսկ դու նրան չայցելեցիր: Միայն պաշտոնապես գրում էիր իր անունը բացակաների մեջ: Տղան, տեսնելով որ իրեն չես այցելում, այլևս չեկավ, իսկ դու, առիթից օգտվելով, ջնջեցիր նրա անունը ցուցակից:

**Այս ասելով հրեշտակը շեշտակի ինձ նայեց.**

-Ինչո՞ւ չայցելեցիր նրան, և ես նվազեցի նրա սուր ձայնից և նրա համառ հայացքի ներքո վախից պապանձվեցի: Բայց նա կրկնեց հարցն ավելի հստարեն.

-Ինչո՞ւ չայցելեցիր նրան: -Ինձ թվաց, թե փոթորիկ պայթեց, չկարողացաց պատասխանել, իսկ հրեշտակը հուզված շարունակեց.

-Նրա հոգեոր վիճակն այժմ խղճահարուց է, և եթե այսպես շարունակվի, նա պիտի... -այստեղ հրեշտակի ձայնը դողդղաց, նա մի պահ լոեց, հետո ասաց.

-Ես և շատ ուրիշ հրեշտակներ աղոթում ենք, որ Աստված փրկի նրան: Սակայն եթե նույնիսկ Աստված պատասխանի մեր աղոթքներին և մեկ ուրիշ՝ ավելի նվիրյալ սպասավոր ուղարկի, ու տղան փրկի, միենույն է, դու չես ներվի: Նրա ձայնը դողդղոջ էր ու ողբագին: Ես այլևս չկարողացաց լսել, թվաց, թե ամեն ինչ պատփում է աչքիս առաջ, ուշքս գնաց ու վայր ընկա:

Ուշքի գալով տեսա, որ հրեշտակը կարեկցանքով ինձ է նայում: Դա ինձ խոսելու ուժ տվեց: Ասացի. «Խնդրում եմ, ներեցեք ինձ, տեր իմ, իմ դասարանում երեսուն տղա կար, և ես ի վիճակի չէի նրանց բոլորին այցելել»:

**Բայց նա ինձ պատասխանեց.**

-Դու է՞լ ես ընկել քանակին զարկ տալու փորձության մեջ: Աստված որեէ ծառայություն ընդհանուր թվաքանակով չի չափում, այլ ավելի շուտ նրանց թվով, ովքեր իրականում նորոգվել են ու փրկվել: Գիտեմ, որ քեզ համար դժվար էր երեսուն տղայի համար հոգ տանել, զսկել նրանց վարքը, այցելել ու սովորեցնել: Նույնիսկ դժվարանում էիր նրանց անուններն անդիր անել: Դու չէիր կարող ասել Տեր Հիսուս Քրիստոսի նման. «Ճանաչում եմ իմ ոչխարներին ու ճանաչվում նրանցից» (Հովհ. 10:14): Ինչո՞ւ, ուրեմն, քո ծառայությունը չսահմանափակեցիր, օրինակ, տասը հոգով: Պատասխան չգտնելով իր հարցումին՝ գերադասեցի լոել: Բայց նա շարունակեց.

-Գիտե՞ս քո ձախողվելու հիմնական պատճառը.



բացի իմ նշաններից, ինքո քեզ ապավինելն էր: Մոռանում էիր ծոմ պահել ու աղոթք անել ծառայությանդ համար: Կիրակիօրյա դպրոցի գործոններդ, ովքեր այժմ սպասավորների քաղաքում են, աղոթում էին ու ծոմ էին պահում իրենց աշակերտների համար: Ամեն օր Աստծու առաջ հիշում էին նրանց՝ յուրաքանչյուրին առանձին: Խնդրում էին քահանաներին Պատարագի ժամանակ հատուկ նրանց համար աղոթք վեր առաքել: Իսկ դու այդ արել ես:

Սա հոգեոր ծառայությանդ մասին: Իսկ նյութակա՞նը: Դա երկրորդակա՞ն էիր համարում: Զէի՞ր հիշում. Հարուստին, որը չգթաց աղքատ Ղազարոսին: Զէի՞ր լսել Տեր Հիսուս Քրիստոսի խոսքն՝ ուղղված իր ձախ կողմում գտնվողներին. «Քաղցած էի, ինձ ուտելիք չտվիք, ծարավ էի...մերկ էի... հիվանդ էի...» (Մատթ. 25:40-43): Այս ամենից ի՞նչ ես արել: Մի՞թե հետամուտ չէիր վայելքներին, մինչդեռ եղբայրներդ անհրաժեշտ բաների խիստ կարիք ունեին: Մի՞թե չէիր...

Այլևս չդիմանալով, ցավից ճչացի. «Խնդրում եմ, վերջացրեք, տեր իմ: Հիմա հասկանում եմ, որ սպասավորների քաղաքը մտնելուն բացարձակապես արժանի չեմ: Ես չափազանց ինքնագոհ եմ եղել: Բայց այժմ ամեն բան իմանալուց հետո, խնդրում եմ ճշմարիտ, անկեղծ սպասավոր լինելու ևս մի հնարավորություն ընձեռեք»:

**Հրեշտակն ինձ ասաց. «Քեզ տրված էր հնարավորություն, բայց դու գրանից չօգտվեցիր: Հիմա երկրային օրերդ վերջացել են...»:**


Ես աղաչեցի նրան, ողբացի, խնդրեցի, իսկ նա նայեց ինձ գործվով ու սիրով, հետո ինձ մենակ թողեց և հեռացավ, մինչդեռ ես աղաղակում էի. «Եվս մի հնարավորություն եմ ուզում»: Բայց նա անհետացավ, իսկ ես ծնկներիս վրա ընկած դեռ աղաղակում էի.

«Եվս մի հնարավորություն եմ ուզում», շուրջս ամեն ինչ պատփում էր, և ես նորից ուշաթափեցի: Երկար ժամանակ անցավ մինչև ուշքի եկա: Ուշքի եկա: Բացեցի աչքերս և, ի մեծ զարմանս ինձ, գտա ինձ առանձնասենյակում մենակ՝ աթոռիս փուփած: Զհավատալով՝ շուրջս նայեցի: Դա իրականություն էր: Ախ, որքան ողորմած ես, Աստված: Իսկական սպասավոր դառնալու ևս մի հնարավորություն ունեմ: Վեր կացա և գոհության աղոթք վեր առաքեցի՝ ի խորոց սրտի:

Որոշեցի ծառայակից եղբայրներիս պատմել այս ամենը, որպեսզի պայքարեն սպասավորների քաղաքը մտնելուն



արժանանալու համար: Թուղթ վերցրեցի ու սկսեցի գրել. «Դա  
պատահեց այն գիշեր...»:



84



## Եվ ինձ մենակ պիտի թողնեք

«Ահա պիտի դա ժամանակ և արդեն իսկ եկել է, երբ պիտի  
ցրվեք յուրաքանչյուրդ իր տեղը...» Հովհ. 16.32:

**Նա միայնակ էր մնացել**

Նա, ով սիրող ու բարի սիրտ ուներ, «շրջեց բարիք անելով»  
(Գործ 10.38): Գյուղից գյուղ էր անցնում, քաղաքից՝ քաղաք,  
«քարոզում էր արքայության Ավետարանը և բժկում ժողովրդի  
մեջ եղած բոլոր հիվանդություններն ու ախտերը» (Մատթ. 4.23):


Սակայն նա տառապալից կյանք ապրեց: Նրան բոլորը միայնակ  
թողեցին, թեև իր բարությունից ոչ ոքի չըկեց: Նա մենակ էր իր  
տաքնապների ու ցավերի մեջ և մենակ էր դիմակայում ընկրճվա-  
ծությանն ու հալածանքին: Ոչ ոք նրան չպաշտպանեց կամ չքա-  
շակեց: Նա մենակ ճմլեց հնձանը (Ես. 63.3):

Երբ նա աղոթում էր Գեթսեմանիի պարտեզում, «Նրանից քըր-  
տինքը հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին թափ-  
վելով» (Ղուկ. 24.44):

Նա տաքնապի մեջ կանչեց. «Հայր, եթե կամենում ես, այս բա-  
ժակն ինձնից հեռացրու» (Ղուկ. 24.42): Իսկ աշակերտները՝ իր  
ընկերներն ու սիրելիները, նրան միայնակ էին թողել և քնել էին:  
Երեք անգամ նա վերադարձավ ու նրանց ինսդրեց, որ հսկեն իր  
հետ, բայց նրանք մեկ ժամ իսկ չկարողացան նրա հետ արթուն  
մնալ (Մատթ. 26. 38-45):

Երբ ձերքակալվեց, իր աշակերտները ցրվեցին, յուրաքանչյուրն՝  
իր տեղը՝ նրան միայնակ թողնելով, ինչպես ինքը նախօրոք ասել  
էր (Հովհ. 16.32): Երբ հարցաքննում էին նրան, ոչ ոք չկար պաշտ-  
պանող, թեև ինքը պաշտպանել էր ամենաչարակամ մեղա-  
վորներին...

Ոչ միայն իր վշտերի մեջ, իր ողջ կյանքի ընթացքում



85

Նա միայնակ էր: Մի անգամ տաճարում խոսում էր հրեաների հետ իր Մարմնն ու Արյունը տալու մասին, բայց նրա աշակերտներից շատերը չկարողացան դա հասկանալ և, ինչպես ասում է Ս. Հովհաննեսը, «Դրա վրա՝ նրա աշակերտներից շատերը քաշվեցին և այլես նրա հետ չէին շրջում: Հիսուս տասներկու աշակերտներին ասաց. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ» (Հովհ. 6.67-68):

Մեկ այլ անգամ նա հրավիրեց շատերին, բայց նրանք հրաժարվեցին, մեկը՝ քանի որ ագարակ էր գնել և ուզում էր գնալ տեսնելու, մյուսը՝ քանի որ հինգ լուծ եղ էր գնել և գնում էր դրանք փորձելու, երրորդն էլ զբաղված էր, քանի որ կին էր առել: Ամենքն էլ մերժեցին, թեև հրավիրը իրենց իսկ բարիքի համար էր (Ղուկ. 14.18-20):

Ժամանակը չի բավականացնի, թանկագին եղբայր, պատմելու քեզ Տեր Հիսուս Քրիստոսի մասին, որը միայնակ էր մնացել. «Յուրաքինների մոտ եկավ, բայց յուրաքինները նրան չընդունեցին» (Հովհ. 1.11): Նա լույսն էր, որ «եկավ աշխարհ, սակայն մարդկի խավարն ավելի սիրեցին, քան լույսը» (Հովհ. 3.19):

Այս ամենը կատարվել է անցյալում և այժմ էլ գեռ կատարվում է: Նույն պատկերն է Տեր Հիսուս Քրիստոս կանգնած է, իսկ աշխարհն զբաղված է իր վայելքներով, իր հաճույքներով ու դատարկ հոգսերով, ոչ մեկի հոգը չէ Քրիստոս: Ոչ ոք չի նստում նրա ոտքերի մոտ՝ ինչպես Մարթայի քույր Մարիամն արեց, ոչ ոք գլուխը չի դնում նրա կրծքին՝ ինչպես Զեբեդեսուի որդի Հովհաննեսը, ոչ ոք չի լվանում նրա ոտքերը՝ ինչպես այն մեղավոր կինը: Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոս, զգում է այս մենակությունը և գիտի, որ մեծամասնությունն իրենից հեռու է...

Նա հարցնում է ասելով. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավասար կտնի՞» (Ղուկ. 18.8):

Իսկ դո՞ւ, դո՞ւ էլ ես Տեր Հիսուսին միայնակ թողել: Կա՞ մի բան, որ քեզ հեռացրել է նրանից: Հարցրու ինքդ քեզ:

### Նա յուրահատուկ մտածելակերպ ուներ

Շատ քչերն էին մտածում Քրիստոսի մասին: Եվ նույնիսկ նրանք, ովքեր մտածում էին նրա մասին, խոսում էին նրա հետ և լսում նրան, ունեին իրենց ուրույն մտածելակերպը, որը հակադիր էր Բարի Վարդապետի մտածելակերպին:

Երբ Տերը գնաց սամարացիների գյուղը և այնտեղ



իրեն չընդունեցին, իր հետ եղող երկու աշակերտները (Հակոբոսն ու Հովհաննեսը) ասացին նրան. «Տեր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց»:

Նա դարձավ, սաստեց նրանց և ասաց. «Զգիտե՞ք ինչ հոգուց եք դուք, որովհետեւ մարդու Որդին չեկավ մարդկանց հոգիները կորսայան մատնելու, այլ վրկելու» (Ղուկ. 9.52-56):

Այդ երկու աշակերտների մտածելակերպը տարբերվում էր իրենց Բարի Վարդապետի մտածելակերպից, քանի որ նա գիտեր, որ այդ քաղաքում շատ ընտրյալներ ունեի:

Սամարացիների հանդեպ թշնամանքը հրեաների մեջ արմատավորել էին փարիսեցիներն ու պայիները: Բայց Տեր Քրիստոս այլ կերպ էր մտածում: Նա սիրում էր սամարացիներին, խղճում էր նրանց և ուզում էր նրանց գրավել գեսի իրեն... Դրա համար էլ պատմեց մարդկանց Բարի սամարացու մասին, իսկ սամարացի մեղավոր կնոջ հետ երկար զրուցեց, որպեսզի դարձի բերի նրան: Խոսեց նաև այդ քաղաքի բնակիչների հետ:


Տերն իր ուրույն մտածելակերպն ուներ նաև հեթանոսների հարցում: Հրեաները նրանց արհամարհում էին, բայց Տեր Հիսուս Քրիստոս գովեց հոռմեացի հարյուրապետին բոլորի առջև՝ ասելով. «Ճմարիտ եմ ասում ձեզ, իսրայելի մեջ իսկ այսպիսի հավատ չգտա երբեք» (Մատթ. 8.10): Նա գովեց նաև քանանացի կնոջ հավատը (Մատթ. 15.23):

Մարդկանց հետ Տիրոջ վարկելակերպն էլ հաճախ յուրահատուկ էր՝ բոլոր մյուսներից տարբեր:

Երբ հրեաները ցանկանում էին քարկուել չնության մեջ բռնը-ված մի կնոջ, նա սաց նրանց. «Զեր միջից անմեղը նախ թող քար գցի դրա վրա»: Այսպիսով, նրանցից բոլորը հեռացան, և նա սաց կնոջը. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա, այսուհետեւ մի մեղանչիր» (Հովհ. 8.11):

Մի անգամ Տերը գուրս էր գալիս երիքովից, երբ ճանապարհին նստած երկու կույրեր, լսելով, որ Հիսուս անցնում է, աղաղակեցին ու սասցին. «Ողորմիր մեզ Տեր, Որդի Դավթի»: Նրան ուղեկցող ամբոխն՝ իր աշխարհային մտածելակերպով, վախեցավ, թե նրանց աղաղակը կանհանգտացնի Փառաց թագավորին, և շտապեց սաստեղ կույրերին, որպեսզի լոեն: Բայց Տեր Հիսուս կանչեց նրանց և բժշկեց նրանց աչքերը (Մատթ. 20.29-34): Նա չի սրտնեղում մարդկանց աղաղակներից ու իննդրանքներից:

Նույնը պատահեց, երբ մի օր նրան մանուկներ էին



շրջապատել: Աշակերտները սաստում էին նրանց՝ կարծելով, թե Ուսուցիչը կնեղվի: Բայց նա ասաց. «Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գտն, որովհետև երկնքի արքայությունն այդպիսիներինն է» (Մատթ. 19.14):

### Ծառայությունը նա յուրովի էր ընկալում

Բոլոր մարդիկ կարծում էին, թե Տերը եկել է իշխելու հսկայելին որպես թագավոր, Ով պիտի փրկի հրեաներին Հռոմեացիների հայածանքներից: Իսկ Տերը հոգևոր թագավորության մասին էր խորհում, որով պիտի իշխեր մարդկանց սրտերին: Շատ առիթներով նրանց ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Հովհ. 12.36):

Ծառայությունը քրտինքից և արցունքից խոնավացած երկրում, նա ընկալում էր որպես խաչ, որը պետք է կրել: Բայց այս բանը առաջալները չէին էլ ընթանում:

Երբ նա հայտնեց նրանց, թե պետք է, որ ինքը երուսաղեմ գնա, մարդկանց ձեռքը հանձնվի, սպանվի և թաղվի, Պետրոս առաքյալը՝ մի կողմ տանելով, սկսեց վիճել նրա հետ ու ասել. «Քավլիցի, Տեր, այդ Քեզ չի պատահի»: Բայց Տերը, փառք իրեն, դառնալով Պետրոսին, ասաց. «Ետևս գնա, սատանա» (Մատթ. 16. 22.23): Հետաքրիբ է, ինչպես պիտի փրկվեր աշխարհը, եթե Տերը հետեւ իսեղ Պետրոս առաքյալի խորհրդին:

Մեկ այլ անգամ աշակերտներն իրար մեջ քննարկում էին, թե իրենցից ով է լինելու առաջինը: Այդ ժամանակ նրան մոտեցավ Զերեգեսի որդիների մայրը՝ իր որդիների հետ. նա երկրպագում էր նրան ու խնդրում, որ արքայության մեջ որդիներից մեկը նատի նրա աջ, մյուսը՝ ձախ կողմում: Տերը՝ փորձելով բացատրել նրանց իր ծառայության բուն իմաստն, ասաց. «Ձեք իմանում ինչ եք խնդրում. կարո՞ղ եք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ. կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ» (Մատթ. 20.20-22):

Ճշմարիտ ծառայությունը Տերը յուրովի էր ընկալում: Երբ մի անգամ ժամեր շարունակ բազմության հետ խոսում էր շնորհի մասին, օրն սկսեց միջնել, և աշակերտները մոտեցան նրան ու ասացին. «Արձակիր այս ժողովրդին, որպեսզի գնան շրջակա գյուղերն ու ագարակները, հանգստանան և կերակուր գտնեն» (Հովհ. 9.12, Մատթ. 14.15): Աշակերտների

միտքը դեռ հասուն չէր: Ծառայությունը նրանց համար զուտ մարդկանց ասված խոսք էր, ոչ թե՝ գործերով ի հայտ եկող սեր: Տերը պատասխանեց. «Հարկ չկա, որ նրանք գնան, դուք նրանց ուտելու բան տվեք»:

### Նա մենակ էր ծառայում

Աշխարհն իրեն ծառայողների պակաս չի զգում, դրանց մեջ քիչ չեն անգամ փոխադարձաբար միմյանց ատողները:

Ցանկացած ձեռնարկատեր միշտ էլ իր համար աշխատողներ գտնում է: Իսկ մեր Տերը, փառք իրեն, մենակ է: Քսան դար առաջ նա ասել է և դեռ ասում է. «Հունձը առատ է, իսկ մշակները՝ սակավ: Արդ, աղաչեցեք հնձի Տիրողը, որ մշակներ հանի իր հնձի համար» (Մատթ. 9.37-38): Ոչ ոք չի օգնում Տիրողն իր գործում, ամենքն ասում են. «Մի՞թե ես իմ եղբոր պահապանն եմ» (Ծննդ. 4.9):


Թանկագին եղբայր, ահա մի քանի դեպք, որոնց անձամբ եմ ականատես եղել...

Մի լնտանիք գիտեի, որը բաղկացած էր մի խեղճ կնոջից, նրա ամուսնուց և ութ երեխաներից: Լնտանիքի եկամուտը հազիվ թե մի քանի դրամից ավելի լիներ, որ հայրը վաստակում էր կիտրոն կամ նման բաներ վաճառելով, և որը բավականացնում էր միայն մի կտոր հաց գնելու համար: Հաճախ նրանք ուտելու ոչինչ չէին ունենում, և մայրը նրանց տանում էր տարբեր բարեգործական հաստատություններ, նրանց համար ինչ-որ կերակուր մուրալու համար: Հարկ չկա ասել նաև նրանց հագուստի մասին, որն իրենց մարմնի մի մասն էր միայն ծածկում: Աստված գիտի՝ ինչպես էին նրանք կարողանում դիմանալ ձմեռվա ցրտին ու ամառվա տապին:

Սրան ավելացրեք սենյակի վարձը, որը ոչ միշտ էին կարողանում վճարել, ստիպված լինելով շարունակ լսել տանտիրոջ կշտամբանքները, անեծքներն ու գուրս անելու սպառնալիքները...

Գիտեմ մեկ այլ այրի կնոջ, որը գերձակուհի էր ինչ-որ կրոնական հաստատությունում: Երկու ամիս նա հիվանդացավ, հավանաբար թերսնման հետևանքով, որի պատճառով նրան հեռացրեցին աշխատանքից: Զգիտեմ, թե նա ինչպես բժշկական օգնություն գտավ կամ ինչպես կարողացավ վճարել գեղերի համար, բայց երբ առողջացավ, տեսավ, որ միայնակ է՝ խավարով շրջապատված:

Երկու երեխա ունեցող մեկ ուրիշ այրի ապրում էր



աղքատիկ, խոնավ, նկուղային սենյակում, մշտապես ենթակա թոռքախոռվ հիվանդանալու վտանգին: Ավելին, այդ կինն ամեն պահ կարող էր իր հավատն ուրանալ և անբարոյականության ճամփան բռնել: Ինչպես պիտի իր ապրուստը վաստակեր: Լվացարարուհի՝ աշխատեր: Բայց մշտական թերսնման հետևանքով թուլացել էր, և ոչ ոք չէր վարձի նրան:


Նման մարդիկ շատ կան, և Հիսուս միայնակ է նրանց ամենի համար հոգ տանում, նրանց կերակուր տալիս, ազատում իրենց ցավերից, միխթարում և համբերություն ու համբերատարություն սովորեցնում: Նա ուզում է, որ մենք կիսենք իր հետ այս ծառայության պատիվը: Նա տեսնում է, որ հունձն իսկապես առատ է, իսկ մշակները՝ սակավ: Սակայն ամենքիս տեսնում է ցրված, ամեն մեկս իր գործին է՝ նրան մենակ թողած:

Մրանից ո՞վ է տուժում: Իհարկե, ոչ ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոս, քանի որ Նա մենակ չէ, Հայրն իր հետ է: Բայց այդ, Նա չէ, որ կարիքն ունի մեր ծառայության, մենք ենք, որ նրան մեր Տերն ունենալու կարիքն ունենք:

Երբ Նա մեզ կանչում է՝ իր միայնության մեջ իր կողքին լինելու, մեր իսկ բարիքի համար է կանչում, որովհետև՝ «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կինի մեզ հակառակ» (Հոռմ. 8.31): Իհարկե, նա, ով Քրիստոսի հետ քայլի, պիտի հոգեկան բավարարություն գտնի: Դրա համար է սակած. «Յանկացան նստել նրա հովանու տակ և նստեցի» (Երգ. 2.3): Տիրոջ հետ չարից չես վախենա, ինչպես սաղմուերգուն է սառում. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տեր, ինձ հետ ես: Քո ցուզն ու գավազանն ինձ կմխիթարեն» (Սաղմ. 25.5), և նաև. «Եթե իմ գեմ պատերազմ պատրաստվի, սիրու չի սուկա» (Սաղմ. 26.3):

Աշակասիկ, Քրիստոս դեռ կանգնած է դռան առաջ և բախում է սպասելով, որ դու բաց անես դուռը, և Նա՝ ներս մտնելով, ընթրի քեզ հետ և Դու՝ Նրա հետ (Հայտ. 3.20):

Պիտի շարունակե՞ս նրան միայնակ թողնել:



## Խորհրդածություն լույսի և խավարի մասին


«Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձև ու անկազմ էր, խավար էր տիրում անհունի վրա, և Աստծու հոգին շրջում էր Շրերի վրա: Եվ Աստված ասաց.

«Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը բարի է, և Աստված լույսը բաժանեց խավարից: Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց գիշեր: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր առաջին» (Ծննդ. 1.1-5):

Ով Տեր, Դու չասացիր՝ «Թող խավար չլինի», -այլ ասացիր՝ «Թող լույս լինի», - և լույս եղավ, իսկ խավարը մնաց, և երկուսը միասին գոյություն ունեն: Ինչո՞ւ վերջ չդրեցիր խավարին, եթե տեսար, որ լույսը բարի է: Ինչո՞ւ թողեցիր այն: Ինչո՞ւ գրան անուն տվեցիր: Ինչո՞ւ գրան իշխանություն տվեցիր, ըստ Քո խոսքի. «Սակայն այս է ձեր ժամը և խավարի իշխանության զորությունը» (Ղորկ. 22.53):

Ինչո՞ւ բոլոր ժամերը ցերեկ և լույս չարաքեցիր՝ Ինքո լինելով ճշմարիտ Լույսը, անմերձենալի Լույսը: Ինչո՞ւ թույլ տվեցիր, որ խավարը գոյություն ունենա, և մարդիկ այն ավելի սիրեն, քան լույսը: Զէ՞ որ Դու կարող էիր ամբողջովին վերացնել խավարն, ասես այն երեք էլ գոյություն չի ունեցել: Սակայն թույլ տվեցիր, որ այն լինի, թեև դա Քո բնությանը չի համապատասխանում: Ուրեմն, ինչո՞ւ այդպես արեցիր:

Թողեցիր, որ որո՞ն ու ցորենն իրար հետ աճեն, մինչև որ հասնի հունձի ժամանակը, երբ որո՞մը պիտի այրվի: Արդյո՞ք խավարի համար նույնպես մի ժամանակ է սահմանված, երբ այն պիտի վերանա, երբ լուսո որդիները կապրեն լույսի մեջ, որին չէին կարող մերձենալ, քանի գեռ խավարի մեջ էին: Սակայն արտաքին խավարը հավերժական է, բայց այն, անշուշտ, դուրս է երկնային երուսաղեմից, Աստծու որդիներից հեռու,



մի խորը անդունդ է բաժանում նրանց իրարից:

Ե՞րբ է գոյացել խավարը:

«...Խավար էր տիրում անհունի վրա»: Սա արարչագործության ամենասկզբում էր՝ Աստծու՝ «Թող լույս լինի» խոսքից առաջ: Ուրեմն՝ երբանի՞ց: Երբ Աստված հավիտենականության մեջ մենակ էր, խավար չկար, որովհետև բոլորովին ոչինչ չկար: Աստված մենակ էր, և նա լույս է: Հետո խավա՞րն է գոյացել: Ե՞րբ է սա տեղի ունեցել, ինչպե՞ս, ինչի՞ համար: Ինդրում եմ, Աստված, պատասխանիր ինձ, քանի որ չգիտեմ...

Արդյո՞ք արարչության ընթացքում խավարը նախորդել է լույսին: Ո՞րն է կապը սրա և միգամածության տեսության միջև: Կասկած չկա, որ առաջ լույսն է եղել, մինչդեռ խավարը, որպես ֆիզիկական երևույթ, ի հայտ է եկել արեգակի ջերմային ազդեցության արդյունքում: Այսպես. անձայրածիր ջրերն արագ գոլորշացան և մեգի մի հաստ շերտ կազմեցին, որը ծածկեց միգամածության լույսը: Սակայն ես չեմ ուզում այսպես նյութականորեն մտածել, այլ լույսի մասին կառուհրդածեմ հոգևոր կերպով, ինչպես որ պարտավոր եմ անել:

«...Խավար էր տիրում անհունի վրա»: Սա նշանակում է, որ կար անհուն (այսինքն՝ ջրերը), երկիրը և խավարը:

Ոչ երկիրը և ոչ էլ ջրերը չգիտեին Աստծուն: Արդյո՞ք Աստծուն չճանաչելն էր խավարը:

Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա, բայց ջրերը չճանաչեցին նրան: Արդյո՞ք այս մասին է ասում առաքյալը. «Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. 1.5): Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ: Արդյո՞ք լույսի մասին չէ այս գեղեցիկ տողը. «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը» (Սալմ. 18.1):

Դա էր առաջին լույսը, որն աշխարհ եկավ: Բայց թեև այն գոյություն ուներ, խավարը չվերացավ: Այդ դեպքում, ինչո՞ւ կար խավարը: Ով Տեր, ես չգիտեմ: Ինդրում եմ, օգնիր՝ հասկանամ: Լուսավորիր իմ միտքն ու իմ սիրտը, որպեսզի կարողանամ ըմբռնել Քո կենարար խոսքերը:


Ուրիշ լույսեր էլ կան: Արեւ, լուսինը և աստղերը լույս են կոչվում, Տերն իր աշակերտներին ասաց. «Դուք եք աշխարհի լույսը», Որդին (Մարմնացյալ Աստված) Լույս է Լույսից, Նա բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք նրա փառքը: Հայրը,

ում ոչ ոք չի տեսել, անմերձենալի Լույս է: Երբ մարդ ընդունում է Աստծու գործերն իր մեջ, դա կոչվում է լուսավորում: Բարին ընդհանրապես կոչվում է լույս. արդարությունը, իմաստությունը և գիտությունը նույնական լույս են կոչվում:

Ի սկզբանե Աստված ստեղծեց լույսը որպես զգայարանների համար ճանաչելի ֆիզիկական գոյություն, և Աստված տեսավ, որ լույսը բարի է, քանի որ մեկ այլ լույս էլ կա, որը գործում է կենդանի արարածի մեջ, մինչև որ գտնում է նրան, ով Հոգու միջոցով կարող է մերձենալ իրեն՝ Աստծուն: Ո՞րն է այս լույսի բնությունը, որը կա բոլոր բոլոյսերի ու կենդանիների մեջ: Ինչո՞վ են դրանք տարբերվում անշունչ ստեղծագործությունից և ինչո՞վ են առավել նրանից: Աստված լույս է. Իր լույսից նա հեղում է բնության վրա, որ այն լուսավորիլի, նաև մտքի, սրտի, զգայարանների ու հոգու վրա՝ որպեսզի լույս ունենան: Բայց նրանց լույսը գալիս է Աստծու լույսի առատությունից և ոչ թե նրա լույսի էությունից: Նույնը կարելի է ասել կյանքի վերաբերյալ: Աստված է կյանքը. Նա է կյանք պարգևել իր ստեղծագործությանը, բայց այս կյանքն իր կյանքի առատությունից, ոչ թե իր էությունից: Աստված նաև բանականություն ու Հոգի է, նա մարդկանց բանականություն ու Հոգի է տվել որպես իր առատության պարգև, ոչ թե իր էությունից... և այսպես շարունակ:

Բայց ինչո՞ւ Աստված տեսավ, որ լույսը բարի է: Այդպես է, որովհետև այն համապատասխանում է իր բնությանը... Աստված լույս է, և նրա մեջ ամենելին խավար չկա, և խավարի մեջ էլ Աստված չկա, այլապես այն լույս կլիներ: Ավելին, նրանք, ովքեր ենթարկվում են խավարին, պիտի դրսի խավարը նետվեն, որը նշանակում է՝ հեռու լինել Աստծու ներկայությունից:

Այժմ կուգենայի հարցնել՝ քանի որ Աստված լույսը բաժանեց խավարից, ինչպե՞ս այն մտավ մարդու մեջ: Ինչպե՞ս եղավ, որ մարդիկ այն ավելի սիրեցին, քան լույսը: Այս հարցերի պատասխանը թողնում եմ յուրաքանչյուրիս իրացին:





[23]

## Երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում

Ով Տեր, դա խսկապես օրջնյալ պահ է, երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում, իրավանում Քեզ հետ եմ մենակ մնում, որովհետեւ Դու իմ մեջ ես, թեկուղ ես Քեզ չեմ տեսնում: Սա տարօրինակ չէ, քանի որ Դու աշխարհում էիր, և աշխարհը Քեզ չճանաչեց: Երբ դեռ աշխարհում էի, ամենամեծ մեղքերիցս մեկն այն էր, որ խուսափում էի ինքս ինձ հետ մենակ մնալուց:

Ես ժամանակ չունեի ինքս ինձ հետ մենակ մնալու կամ, ավելի անկեղծորեն, ես վատնում էի Քո տված ժամանակը, փոխանակ ինձ անդրագանալու, ինձնով զբաղվելու կամ ամեն առիթ օգտագործելու՝ ինքս ինձ հետ մենակ մնալու կամ ավելի շատ Քեզ հետ լինելու համար: Ախ, իմ հիմարության պատճառով, այդ ընթացքում ես նոր զբաղմունքներ էի փնտրում՝ ժամանակս լցնելու համար՝ կարծես թե ինքս ինձ հետ մենակ մնալը ծովություն լիներ:

Երբ աշխարհում էի, տեսականորեն գիտեի, թե որքան կարեոր է ինքն իր հետ մենակ մնալը, բայց գործնականում դրան ուշադրություն չէի դարձնում: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ չարը չէր թողնում, որ տեսական գիտելիքս գործադրեի, քանի որ միշտ զբաղված էի, անընդհատ զբաղված: Այդ պատճառով, ով Տեր, ես տեղյակ չէի իմ մեջ եղած այն մեծ գանձին, որը Դու ես:

Երբեմն, երբ պատահում էր, որ մենակ էի մնում ինքս ինձ հետ և տեսնում էի այդ շողշողուն գանձի մի նշույլը, թաքցնում էի այն կեղծ պատճառաբանությամբ, թե նրա հետ մենակ մնալու համար ինձ երկար ժամանակ է հարկավոր: Իրականում ուզում էի նախ գնալ հորս թաղելու, ադարակս տեսնելու ու եզներս փորձարկելու: Բայց վերջապես, Տեր, երբ մի օր, հստակ չեմ հիշում երբ, թողեցիր, որ երկար ժամանակ հանդարտ ինքս ինձ հետ մենակ մնամ, իմ մեջ թաքնված այդ գանձը հայտնաբերեցի: Միայն այդ ժամանակ ամեն ինչ վաճառեցի ու գնեցի այդ գանձը, որը Դու ես:

Դրանից հետո Քեզ ունեմ ես իմ փոխարեն:



94

Ահա խոստովանում եմ Քեզ, Տեր իմ: Ամեն անգամ ինքս ինձ հետ մենակ մնալով, զգում եմ, որ աշխարհից էլ թանկ եմ ես, ինչպես ասել ես. «Ի՞նչ օգուտ մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. 8.36):

Եվ երբ զգում եմ իմ արժեքը, աշխարհին արհամարհանքով եմ նայում և Քեզանից ստանում եմ ամեն ինչից հրաժարվելու կարողությունը: Եվ երբ հրաժարվում եմ ամեն ինչից, շուրջս նայելով Քեզ եմ տեսնում, որ քաջալերում ես ինձ խոսքերովդ. «Մի վախեցիր, որովհետեւ քեզ հետ եմ» (Ծնն. 26.24):

Երբ առանձնանում եմ ինքս ինձ հետ, ով Տեր, հայտնաբերելով ներքին անձս, տեսնում եմ, որ օտարները ներսումս հանդգնել են ապականել Քո սրբությունները: Խոստովանում եմ Քեզ ամենը և խնդրում, որ ազատես ինձ օտարականների ձեռքից: Ժամանակն արագ է ընթանում, իսկ ես գեռ շատ բան ունեմ Քեզ ասելու և ինձ ասելու: Այսպիսով, մարդկային միմիթարությունն աչքիս քիչ արժեք ունի: Բավականություն ստանալու համար այլևս ուրիշների ընկերակցությունը չեմ փնտրում, այլ ավելի շուտ միմիթարություն եմ գտնում առանձնության, մեկուսանալու ու անդորրի մեջ: Սա ինձ չի զրկում ինքս ինձ հետ մենակ լինելուց, որն ինձ համար շատ կարևոր է, և որն իմ մեջ խոնարհություն և մաքրություն է ծնում:

Երբեմն, Տեր իմ, երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում ու ավելի խորն եմ քննում ինձ, սրտիս անկյուններում պառկած օձեր ու կարդներ եմ հայտնաբերում: Նրանք փորձում են իմ սիրու կրծել անձայն ու թաքուն, և իրենց թույնը ներարկել արյանս, մաքերիս ու զգացմունքներիս մեջ, առանց իմ գիտության:

Երբ նայում եմ այս օձերին ու կարդներին, նրանք արթնանում ու խայլիում են գիտակցությունս, դրա համար էլ թողնում եմ քննեն, որպեսզի ցավ չպատճառեն ինձ:

Բայց ի՞նչ օգուտ նրանց չտեսնելուց, հանուն հանգստության՝ նրանց այդպես թողնելուց ու աչք փակելուց: Իրականում ինքս ինձ եմ խաբում ու փախչում ինձանից: Ավելի լավ չի՝ լինի այդ սողուններին լույսին բերելով, պայքարել դրանց դեմ: Ով Տեր, ողորմիր ինձ, քանի որ թույլ եմ և անզոր դրանց, նույնիսկ դրանց մի փոքր մասի դեմ: Ինձ համար ավելի լավ է դրանց Քեզ բերել, Տեր իմ, որ Դու պայքարես իմ փոխարեն. «Դու կփրկես ինձ թշնամու զայրույթից: Զեռքդ կմեկնես, և Քո աջը կփրկի ինձ» (Մադմ. 137.7):

Երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում, ով Տեր,



95

Հայտնաբերում եմ իմ իսկությունը և հասկանում, որ Քո ներկայության ներքո ես միայն փոշի ու մոխիր եմ: Այսպիսով, ես խոնարհվում եմ և զգում, որ աշխարհի փառքը միայն արտաքին կեղծ գույնն է, որը ոչ մի կերպ չի կարող փոխել էությունը:

Երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում և զգում եմ, թե որքան թույլ եմ ես, ավելի ամուր եմ կառչում Քեզանից, գիտակցելով, որ առանց Քեզ ոչինչ չեմ կարող անել: Եվ որքան ավելի ամուր եմ կառչում Քեզանից, այնքան ավելի ես Քեզ Հայտնում ինձ, այնպես որ, կարողանում եմ տեսնել, թե որքան ավելի անբիժ ես Դու՝ մարդկանց որդիների Համեմատ: Դու ինձ օգնում ես Քեզ հետ մենակ մնալն ավելի սիրել, քան մարդկանց հետ լինելը: Ամեն անգամ, երբ մի նոր բան եմ Հայտնաբերում Քո մեջ, հոգիս ավելի է փարփում Քեզ:

Խնդրում եմ, Տեր, օգնիր, որ թողնեմ մարդկանց և ավելի շատ մտածեմ ինքս ինձ Քեզ կապելու մասին: Հետո օգնիր, որ մոռանամ ինձ և միայն Քեզ դարձնեմ իմ ուշադրությունը:



96



Հայտնիր քեզ ինձ

Ով Տեր, այդ ես չէ, որ գալիս եմ դեպի Քեզ, քանի որ ճանապարհը վատ գիտեմ: Միտքս տկար է, հոգիս՝ սահմանափակ: Դեռ մարմնի մեջ եմ, և շատ բան խանգարում է ինձ, ինչպես օրինակ՝ կրքերս ու ցանկություններս: Երբեմն էլ՝ կամքս է փակում դեպի Քեզ բերող ճանապարհը:

Ով Տեր, նաև զբաղված եմ լինում այնպիսի բաներով, որ առընչություն չունեն Քեզ հետ: Ես շատ հետաքրքրություններ ունեմ, որոնք խանգարում են ինձ, բայց շատ թշվառ ու հիմար լինելուս պատճառով, չեմ փորձում ազատվել գրանցից, այլ ընդհակառակը, օրեցօր ավելացնում եմ դրանք: Ուրեմն, Դու ես, Տեր, որ կարող ես գալ դեպի ինձ: Եկ, Տեր, Հայտնիր Քեզ ինձ և այցելիր որդուդ կամ ծառայիդ: Դու ամբողջությամբ սեր ես: Ավելին, սերը հենց Դու ես:

Ով Տեր, ես չէ, որ սրտում Քո բնակության համար տեղ եմ պատրաստում, որովհետեւ. «Եթե Տերը տունը չշինի, իգուր են չարչարփում այն շինողները» (Սաղմ. 126.1): Ո՞վ եմ ես, որ Քեզ համար սուրբ տաճար շինեմ, որպեսզի Քո Հոգին բնակվի իմ մեջ: Դու ես, Տեր, որ շինել ես Երուսաղեմը: Եկ և ինձ մի սպասիր, որպեսզի չլինի թե Դու սպասես, և ես չգամ:

Ինձանով չեմ կարող Քեզ ճանաչել: Ով Տեր, ոչ թե իմ ջանքերով, այլ Քո օգնությամբ, ոչ թե իմ զորությամբ, այլ Քո չնորհով: Դու Քեզ ինձ Հայտնում ես սիրուդ մեջ: Բայց Քեզ չես Հայտնի ինձ, մինչև ես չսիրեմ Քեզ: Ասա, ուրեմն, ինչպես սիրեմ Քեզ, որ Հայտնես Քեզ ինձ: Ուստի, խնդրում եմ, Հայտնիր Քեզ ինձ, որ Քո հանդեպ ունեցած սերս մեծանա, որովհետեւ որքան ավելի եմ Քեզ տեսնում, այնքան ավելի եմ Քեզ սիրում ու ավելի եմ կապվում Քեզ: Քանի որ ինչպես կարելի է իսկապես սիրել մեկին, ում մասին ոչինչ չգիտես, ում չես տեսել, կամ միայն անորոշ գիտելիք ունես:

Ուստի, աղոթում եմ, որ Հայտնես Քեզ ինձ,




97

Քանի որ Քեզ ճշմարիտ կերպով ճանաչելու միակ աղբյուրն այս է՝  
ոչ թե ուրիշների կամ գրքերի միջոցով, այլ ինչպես առաջայն է  
ասում «...ականատես խոկ եղանք... և մեր ձեռքերը շոշափեցին...»  
(Ա. Հովհ. 1.1):

Քո մասին կատարելապես չեմ կարող իմանալ գրքերից կամ էլ  
Քեզ ճանաչողներից, որովհետև անդամ նրանք չեն կարող նկա-  
րագրել այն անարտահայտելի որոշիչները, որ տեսել են Քո մեջ,  
ինչը ոչ մի լեզու չի կարող արտաքերել: Նրանք միայն կարող են  
փափառ արթնացնել նրա մեջ, ով լսում կամ կարդում է Քո մասին՝  
ասելով. «Ճաշակեցեք և տեսեք, թե որքան քաղցր է Տերը» (Սաղմ.  
33.9): Բայց նրանք չեն կարող Քո ճշմարիտ բնության մասին  
ստույգ գաղափար տալ. դա վեր է իրենց կարողությունից: Սա-  
կայն, եթե Դու, Տեր, Քեզ հայտնես ինձ՝ ինչպես պիտի Քո գեմքը  
տեսնեմ, քանի որ առանց սրբության ոչ ոք չի կարող Տիրոջը տես-  
նել: Սրբությունը վեր է իմ կարողությունից, որովհետև ինձ  
նեղողները շատացել ու տիրել են ինձ: Ես թույլ եմ այդ ամենի  
առջև՝ աշխարհի, մարմնի, չար ցանկությունների, կրքերի ու  
մտքերի առջև:

Հաճախ ընկնում եմ ու խարիսխում: Սրբությունը երազ է, որը  
փափառում եմ, որ իրականանա, բայց ինչպես կարող եմ այն  
ձեռք բերել: Արդյո՞ք սա նշանակում է, որ երեք Քեզ չեմ տեսնի:  
Խնդրում եմ, Տեր, տուր ինձ սրտի այդ մաքրությունը, որպեսզի  
կարողանամ տեսնել Քո գեմքը: «Ճողիր ինձ սպունգով և ես  
կմաքրվեմ, լվա՝ ու ճյունից ճերմակ կլինեմ» (Սաղմ. 50.9):



98



## Սեր՝ Աստծուն տանող ճանապարհի հանդեպ

Ինչո՞ւ եմ աղոթում: Ինչո՞ւ եմ պահք պահում: Ինչո՞ւ եմ  
առանձնություն վիտրում:

Ինչո՞ւ եմ կարգում:

Արդյո՞ք աղոթող կամ պահք պահող մարդու համբավ ձեռք բե-  
րելու, կամ առանձնություն սիրող ու գիտուն մարդու անուն վաս-  
տակելու համար:

Սիրում եմ պաշտո՞ղ լինել: Արդյո՞ք սա ինչ-որ նպատակ է,  
յուրօրինակ մի կիրք:

Ուզում եմ բարձր գի՞րք գրավել կամ մեծ մա՞րդ գառնակ՝ այս  
ճանապարհին մյուսներից առաջ անցնելով ու նրանց գերազան-  
ցելով:

Խսկապես, սիրու՞մ եմ իրեն՝ Աստծուն և այն ճանապարհը, որը  
դեպի նա է տանում:

Սիրում եմ աղո՞թքը, թե՞ նրան, Ում աղոթում եմ:

Երբեմն իմ մեջ շատ թերություններ եմ նկատում:

Երբ արտասանում եմ ինձնից պահանջվող սաղմոսները, երջա-  
նիկ եմ զգում, ոչ թե այն պատճառով, որ Աստծու հետ եմ խոսում,  
այլ որովհետև դա հաստատում է, որ որպես վանական ես հաջո-  
ղությամբ եմ կատարում պաշտամունքային իմ պարտականու-  
թյունները: Մյուս կողմից էլ, երբ չեմ կարողանում պահանջված  
բոլոր սաղմոսներն ասել, տիրում եմ, ոչ թե նրա համար, որ չեմ  
վայելում Տիրոջ հետ խոսելս, այլ այն մտքից, որ վատ վանական  
եմ:

Նույն եմ զգում պահքի, հսկումների և ընթերցանություննե-  
րիս առնչությամբ: Սա բացարձակապես անձի խնդիր է. սա ակն-  
հայտ եսասիրություն է, որն ինձ լցնում է իմ իսկ աչքում բարձ-  
րանալու ցանկությամբ՝ հաշվի չառնելով հարաբերություններս  
Աստծու հետ:

Ե՞րբ պիտի գա ժամանակը, երբ ոչ մի սաղմոս



99

իսկ չասելով, ինձ երջանիկ զգամ՝ բնակվելով Աստծու մեջ, և պաշտելով Նրան:

Արդյո՞ք աղոթում եմ՝ Քեզ հետ խոսելու հաճույքը վայելելու, Քո ներկայության մեջ լինելու երջանկությունն զգալու համար: Թե՞ աղոթում եմ, որ առաքինություն ձեռք բերեմ ու հավիտենական կյանք ստանամ: Գուցե աղոթում եմ, որ Քեզ հետ խոսեմ և ինպեմ, որ տա՞ս ինձ այդ կյանքը:

Աղոթքն, այսպիսով, ինձ համար նպատա՞կ է, թե՞ զուտ միջոց:

Օրինակ, երբ որևէ մեկը խանգարում է մենությունս կամ աղոթքս, ես գայրանում եմ նրա վրա, կորցնում եմ ներքին խաղաղությունս, հետեւաբար, կորցնում եմ նաև Աստծու հետ ունեցած խաղաղությունս: Սա նշանակում է, որ աղոթքն ինձ համար նպատակ է, ոչ թե միջոց, և այդ նպատակին հասնելու համար ես կարող եմ շեղվել և սխալվել:


Այնինչ, իրականում, պաշտամունքն ընդամենը դեպի Աստված առաջնորդող ճանապարհ է, բայց նպատակն Աստված է:

Եերը ճանապարհ է, ծառայելը ճանապարհ է, բայց նպատակը մեկն է, որ Է՝ Աստված:

Ինչո՞ւ ենք, ուրեմն, կորցնում Աստծուն, ինչ է թե՝ չշեղվենք դեպի Իրեն տանող ճանապարհից և ինչ է թե՝ այդ ճանապարհը մեր ուղածով լինի:

Եկեք, ուրեմն, սիրենք ճանապարհը, ոչ թե նրա համար, որ այն ցանկալի է, իսկ դա իսկապես այդպես է, այլ որովհետև այն մեզ դեպի Աստված է առաջնորդում: Եկեք շտապենք և արագ անցնենք այդ ճանապարհը, որպեսզի հասնենք Իրեն:

Կատարյան այն է, որ ինքը՝ Աստված լինի դեպի Իրեն տանող մեր ճանապարհը, քանի որ նա ինքն է ճանապարհը, ինչպես և ասել է (Հովհ. 14.6):



## Հեռացիր ինձանից

Այս հոդվածը բոլորի համար չէ: Այն որոշակի հոգեւոր մակարդակ է պահանջում, և եթե մեկը գեռ այդ մակարդակին չի հասել, օգուտ չի կարող քաղել սրանից:

Ով Տեր, ինձ չվերաբերող բաների մեջ խառնվելն իմ բնությունն է: Խոսքս ուրիշների գործերի մասին չէ, թե ինչ են անում, կամ թե Դու ինչպես ես վարդում նրանց հետ, (թեեւ երբեմն այս սխալի մեջ էլ եմ ընկնում), այլ այն մասին է, որ իմ գործերի մեջ էլ եմ խառնվում: Իրականում, իմ գործերն ինձ չեն վերաբերում, այլ ավելի շուտ՝ Քեզ են վերաբերում:

Իմ անձն իմ սեփականությունը չէ, այն Քոնն է, Դու այն գնել ես Քո թանկագին արյամք, ուստի այն գարձել է Քո սեփականը, այլևս ես իրավունք չունեմ նրա գործերի մեջ խառնվելու, քանի որ Դու ես նրան հոգ տանում ըստ Քո բարի սուրբ կամքի: Ես միայն պիտի նայեմ ու փառք տամ Քեզ:

Ե՞րբ պիտի դադարեմ իմ իսկ գործերի մեջ խառնվելուց և այդ բոլորը Քեզ թողնեմ, որպեսզի ուր որ առաջնորդես ինձ գնամ, և ինչպես որ ինձ փոխես՝ այն գառնամ: Ե՞րբ պետք է գոհանամ այն ամենով, որ սահմանել ես ինձ համար և ոչ թե ստիպեմ, որ փոխես ինչ-որ բան, իբր իմ օգուտը չես փնտրում:

Ե՞րբ պետք է աղոթքս խնդիրքից վերածվի օրհնության: Կամ ե՞րբ էլ ոչինչ չեմ ունենա խնդրելու, քանի որ ունեցածիցս ավելի լավ ոչինչ չկա:

Ե՞րբ պետք է գա այն ժամանակը, երբ ինքս ոչինչ չանեմ. ինձ միայն Քո ձեռքերի մեջ հանձնեմ ու ամեն բան մոռանամ, և հիշեմ միայն այն ձեռքերը, որոնք ում դիպչեն՝ կրժկեն:

Ե՞րբ ես կատարյալ հավատ կունենամ՝ կյանքս Քեզ վստահելու չափ, որպեսզի վարվես, ինչպես կամենում ես, քանի որ առատաձեռն ես: Այդ ժամանակ ես չեմ խառնվի Քո գործին, ոչ էլ գաղտնի կնայեմ, թե ինչ և ինչպես պիտի անես



ինձ համար, և ոչ էլ կմտածեմ, թե արածդ ընդունում եմ, թե՞ ոչ:

Ախ, Տեր իմ, որքան մեղավոր եմ Քո առաջ. տգետ եմ, բայց միշտամում եմ Քո իմաստուն գործերին՝ փորձելով դրանք կասեցնել և իմ հիմար խորհուրդն առաջ տանել: Իմ կողմից ավելի խելացի կլիներ, որ լուր մնայի և նայեի գիտորդի նման, ոչ թե մասնակցեի: Այդ ժամանակ ես կտեսնեի Քո իմաստության հրաշքները:

Ով Տեր, շատ եմ մտածում իմ մասին, իսկ Քո մասին քիչ եմ մտածում: Ինձ շատ եմ վստահում, իսկ Քեզ՝ քիչ եմ վստահում: Իմ անձն իմ կուռքն է, ե՞րբ պիտի այն փշրպի, որ Քեզ պաշտեմ ճշմարտապես: Քանի որ ինքս չեմ կարողանում փշրպել այս կուռքը, որովհետև աչքիս գեղեցիկ է, և ես սիրում եմ այն, խնդրում եմ, Տեր, ինքդ կործանիր: Այդ ժամանակ իմ սրտում Քեզ հակառակ փող չի լինի:

Ով Տեր, եթե Քո մասին այնքան մտածեմ, որքան իմ մասին եմ մտածում, եթե Քեզ այնքան ապավինեմ, որքան իմ զորությանը, եթե Քեզ սիրեմ այնքան, որքան ինձ, ապա կլինեմ այն սրբերի պես, ովքեր իրենց անձն ուրացան՝ Քեզ ճանաչելու համար:

Տեր, ե՞րբ պիտի ազատես ինձ անձիցս: Ե՞րբ: Որպեսզի թեկուղ չորբանամ էլ, բայց Քեզ գտնեմ:

Ե՞րբ պետք է Հոգիս հանես բանտից և խաղաղությամբ արձակես Քո ծառային (Սաղմ. 141.1, Ղուկ. 2.29): Ե՞րբ պիտի հանուն Քեզ կորցնեմ անձս, որպեսզի Քեզ գտնեմ, և հետո այն Քո մեջ վերագտնեմ: Ե՞րբ պիտի կործանեմ անձս հանուն Քեզ: Ե՞րբ պետք է ինձ նայելիս ոչ թե անձս, այլ Քեզ տեսնեմ: Ե՞րբ պիտի ինձ նայեմ ու տեսնեմ, որ այն Դու ես: Ե՞րբ պիտի նայեմ աշխարհին, մարդկանց և Քեզ տեսնեմ: Երբ պիտի Դու լինես ինձ համար ամենը ամենի մեջ:

«Նրանք կորսոյան պիտի մատնվեն, բայց Դու կաս և մնում ես: Բոլորը պիտի մաշվեն որպես գորգեր և որպես վերարկու. պիտի ոլորես դրանք հագուստի պես և նրանք պիտի փոխվեն: Բայց Դու մեշտ նույնն ես և Քո տարիները չեն պակասելու» (Երր. 1.11-12):

Ինձ ասել են, որ ճանաչեմ անձս և խորանամ դրա մեջ, բայց, Տեր իմ, այս անձն է բոլոր գժեախտություններիս պատճառը: Ե՞րբ պիտի իմ մեջ խորանալով՝ անձս չգտնեմ: Ինչքան հաճախ եմ նայել ու տեսել անձս՝ անշարժ կախված խաչից, բայց ավելի ուշադիր նայելով, տեսել եմ Քեզ և երջանկացել: Երջանկացել եմ ոչ թե նրա համար, որ Արքայությունը պիտի ժառանգեմ, այլ որ Քեզ եմ գտնել:



Կարծում եմ, որ Քեզ միշտ կդտնեմ այնտեղ՝ մահվան ստվերների մեջ, և թեկուղ այնտեղով եմ անցնում, սակայն. «Զեմ վախենա չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. 22.5): Դու մեզ կյանք ունենալու համար ստեղծեցիր, սակայն մեղք գործելով մենք մահն ընտրեցինք: Սակայն Դու, Ում համար ամեն ինչ հնարավոր է և Ում առջև ամեն ինչ մաքրվում է, սրբագործեցիր մահը և այն կյանքի ճանապարհ դարձրեցիր: Դու ես միակ դուռը կյանքի, քանի որ ասում ես. «Ով որ իր անձը գտնում է, այն կկորցնի. և ով իր անձը կորցրեց ինձ համար, այն կդտնի» (Սատթ. 10.39): «Եթե մեկը կամենում է հետեւ ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ հետեւից» (Սատթ. 16.24):


Վանական կյանքիս առաջին սարում կարդացի սրբերիցդ ումանց խոսքերն այն մասին, թե վանականությունը պետք է ազատվի ամեն ինչից և մոտենա Մեկին: Այսպիսով, որքանով որ կարողացա, մեկուսացա աշխարհից ու մարդկանցից, բայց դա ինձ Քեզ չչուտեցրեց: Գուցե պատճառն այն էր, որ մեկուսանալը Քեզ համար չէ, որ ընտրեցի, այլ՝ իմ, որպեսզի գոհ լինեմ ինձանից և արժանանմ մարդկանց հավանությանը:

Երկրորդ տարում հասկացա ամեն ինչից ազատվելու մեկ այլ ճանապարհ՝ անձից ազատվելը:

Հետաքրքիր է ինչպիս կամականամ այս խոսքերը հաջորդ տարիներին: Զգիտեմ: Գուցե թե մոռանամ դրանք և մոռանամ մտածել դրանց իմաստի մասին, քանի որ զբաղված կլինեմ Քեզանով:

Վանքում եղբայրների հետ հանդիպելիս հաճախ ասում էի, որ մեր հավաքներն այստեղ՝ երկրի վրա, խանգարում են մեզ Աստծու հետ լինել և միգուցե խոչընդոտեն այստեղ՝ հավիտենականության մեջ հանդիպել իրեն: Բայց հիմա կասեի, որ ինքս ինձ հետ մենակ մնալն ինձ ավելի է խանգարում:

Ժամանակ առ ժամանակ, երբ մենակ եմ մնում ինքս ինձ հետ, ուզում եմ անձիս ասել. «Հեռացիր ինձանից, քանի որ դա է լավ մեզ համար»: Հեռացիր ինձանից, որ կարողանամ մենակ մնալ Աստծու հետ և արժանանամ իր խոստումները վայելելուն, «Իր մեջ ընակվելուն»: Միայն այդ ժամանակ կարող եմ մենակ մնալ ոչ թե անձիս, այլ Աստծու հետ, որ իմ մեջ է բնակվում:





[27]

## ՄԵՐ ՏԵՐՈՅ ՆԵՐԿԱ Է

Ով Տեր, Դու ներկա ես տկարները գիտեն, որ ներկա ես և մի թարգում են, իսկ զորավորները դողում են՝ ներկայությունդ հիշելով: Ուրեմն, «ՄԵՐ ՏԵՐՈՅ ՆԵՐԿԱ Է» բառերը հարուցում են և՛ բերկրանք, և՛ վախ, և՛ մի թարգություն, և՛ դառնություն:

Չնայած, որ Դու ներկա ես, շատերը չգիտեն այդ մասին: Ինչպես, օրինակ, Սողոմոն իմաստունը, երբ ասում է. «Ես դարձա ու տեսա այն բոլոր զրկանքները, որ լինում են արեգակի ներքո, և ահա զրկվածներն արցունքների մեջ են, և ոչ ոք չկար, որ մի թարեր նրանց...» (Ժող. 4.1): Ինչո՞ւ, ուրեմն, ով Տեր, տեսնում ու լուսում ես:

Ով Տեր, ցույց տուր մեզ Քո ողորմությունը, փաստիր Քո ներկայությունը: Մի թող, որ նախատեն մեզ՝ ասելով. «Ո՞ւր է Տերը՝ ձեր Աստվածը»: Տեր, ինչո՞ւ ես սպասում մինչեւ գիշերվա վերջին պահը. մինչդեռ նավակի մեջ աշակերտներն անհանգիստ են, իսկ ալիքներն ուժգնորեն հարցածում են նրան: Ինչո՞ւ ես սպասում, չէ՞ որ Սուրբ Գիրքն ասում է, որ Դու կդաս և չես ուշանա:

Շտապիր, ով Տեր, շտապիր: Նույնիսկ Դավիթ մարգարեն բողոքում է այս ուշանալուց ու ասում. «Աստված, ինձ օգնության համիր. Տեր, փութա ընկերակցել ինձ: ...Օգնականն ու փրկիչն իմ Դու ես. Տեր իմ, մի ուշացիր» (Սաղմ. 69. 1-6):

Գիտենք, որ Դու ողորմած ես, և մեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանության մեջ (Գործք. 1.7): Ուրեմն, մենք միշտ կսպասենք, ինչպես սաղմոսերդուն է ասում. «Ես Տիրոջն եմ սպասում, առավոտվա սպասողներից առավել» (Սաղմ. 129.6):

Ահա լիահույս սպասում ենք, ով Տեր, Քո ներկայությանը: Համոզված ենք, որ կգործես զորությամբ, իմաստությամբ և ճիշտ ժամանակին, որը կորոշի Քո անսահման

սիրող բարությունը: Մեր առջև են մեր Տեր Հիսուս Քրիստոսի գեղեցիկ խոսքերը. «Իմ Հայրը մինչեւ այժմ գործում է, ուրեմն ես ևս գործում եմ» (Հովհ. 5.17):


Գործիր, ուրեմն, Տեր, գործիր, որովհետև Դու սիրում ես արդարությունն ու բարությունը: Գործիր, որ մարդիկ հանգիստ ունենան և իրենց կյանքը հանձնեն Քո ձեռքերի մեջ: Այնժամ նրանք լուս կխորհեն Քո գործերի մասին և կերպեն այս գեղեցիկ երգը. «Տերը պիտի պատերազմի ձեր փոխարեն, դուք լուս մնացեք» (Ելք. 14.14):

Նրանք պիտի խորհեն Քո գործերի մասին ու վստահությամբ երգեն. «ՄԵՐ ՏԵՐՈՅ ՆԵՐԿԱ Է»:

Այո, իսկապես, «ՄԵՐ ՏԵՐՈՅ ՆԵՐԿԱ Է»:



104



105

# Ցանկ

1. Ազատագրում մեղքի ճանաչողությունից	7
2. Ազատություն Աստծուն ճանաչելու մեջ	10
3. Ազատագրում կապանքներից	13
4. Չորս պատերի մեջ	19
5. Ավելի մեծ, քան երկինքն ու երկիրը	22
6. Նա խորը քնած էր	27
7. Ճանաչիր ինքդ քեզ	30
8. Քո անձը և մարդկանց գովասանքը	36
9. Քո անձը և մարդկանց վիրավորանքը	40
10. Ազատագրվել անձից	44
11. Քո անձն Աստծու ներկայության մեջ	47
12. Ազատագրվել երկրային ցանկություններից	50
13. Ազատագրվել զգայարանների գերությունից	53
14. Աշխարհից ոչինչ չեմ ուզում	56
15. Սովորել Աստծուց	58
16. Ազատագրվել ուսուցանելու ցանկությունից	61
17. Ազատագրվել ունենալու զգացումից	64
18. Ազատագրվել սեփական անձի ազդեցությունից	67
19. Թշվառները	70
20. Դա պատահեց այն զիշեր	75
21. Եվ ինձ մենակ պիտի թողնեք	85
22. Խորհրդածություն լույսի և խավարի մասին	91
23. Երբ ինքս ինձ հետ մենակ եմ մնում	94
24. Հայտնիր քեզ ինձ	97
25. Մեր՝ Աստծուն տանող ճանապարհի հանդեպ	99
26. Հեռացիր ինձանից	101
27. Մեր Տերը ներկա է	104